Կարեն Վերանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երևան - 2010

ՀՏԴ 32.001:327
ԳՄԴ 66+66.4
Վ 490

Վերանյան Կարեն
Վ 490 **Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում.-** Եր.: Նորավանք, 2010.- 156 էջ:

Գիրքը նվիրված է տարբեր միջազգային կազմակերպությունների տարեկան վարկանիշային հետազոտություններում ՀՀ և հարակից ու համադրելի այլ երկրների միջազգային վարկանիշների համեմատական վերլուծությանը: Աշխատությունում առանձնացվել են ՀՀ վարկանիշավորման արդյունքներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքական, տնտեսական, պետական կառավարման, մարդու իրավունքների և ժողովրդավարության, էներգետիկայի և այլ ոլորտներ:

Գիրքը նախատեսված է ինչպես փորձագիտական հանրության, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 32.001:327
ԳՄԴ 66+66.4

ISBN 978-9939-825-01-4

© Նորավանք ԳԿՀ, 2010

«Նորավանք» ԳԿՀ-ում 2003 թվականից գործում է միջազգային վարկանիշային հետազոտությունների «Հայաստանը գլոբալ աշխարհում» անվանումը կրող ուսումնասիրման ծրագիրը: Առաջին ուսումնասիրությունները կատարել է «Նորավանք» ԳԿՀ փորձագետ Ա.Մարջանյանը: Ծրագիրն այժմեական էր 2003-ին, այժմեական է նաև այսօր. հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կազմած և հրատարակած վարկանիշային հետազոտությունները և դրանց ուսումնասիրությունը հնարավորություն են տալիս պատկերացում կազմել տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական և այլ ոլորտներում ընթացող փոփոխությունների և զարգացումների մասին: Իսկ ՀՀ և տարածաշրջանային երկրների վարկանիշների ուսումնասիրությունը, իրականացման մեթոդաբանությունը թույլ են տալիս համակարգված գնահատականներ ստանալ ՀՀ-ում և հարևան երկրներում սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման, բարեփոխումների և մրցունակության մասին՝ միջազգային ու տարածաշրջանային հարթությունում:

Կարեն Վերանյանի «Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում» գիրքը «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից վերը նշված ուղղությամբ իրականացված աշխատանքի արդյունքն է:

Սնակ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ

Միջազգային հարաբերություններում պետության ներկայացվածության հիմնահարցն առանցքային է յուրաքանչյուր երկրի գերակայություններում և այդ համատեքստում առանձնապես կարևոր են միջազգային տարբեր կազմակերպությունների վարկանիշային ուսումնասիրությունները:

Այդ կազմակերպությունները հրապարակում են տարեկան վարկանիշային հետազոտություններ և հաշվետվություններ, որտեղ տրվում են աշխարհի տարբեր երկրների միջազգային վարկանիշների վիճակագրական վերլուծությունները պետության գործունեության տարբեր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, կառավարում, էներգետիկա և այլն: Միջազգային վարկանիշային կազմակերպությունների զեկույցների միջոցով աշխարհի տարբեր պետությունների վարկանիշների համեմատական վերլուծությամբ բավական հետաքրքիր արդյունքներ են ստացվում հետազոտություններում ներառված երկրների միջազգային վարկանիշին վերաբերող հիմնահարցերի լուսաբանման տեսանկյունից: Խնդիրն առավել արդիական և ուշագրավ է հատկապես երկրների վարկանիշային արդյունքները վարկանիշավորման ժամանակագրական կամ տարեկան զարգացման դինամիկայի համատեքստում քննելու տեսանկյունից, ինչը թույլ է տալիս առավել հստակ պատկերացում կազմել մեզ հետաքրքրող երկրների միջազգային վարկանիշների համեմատական վերլուծության վերաբերյալ:

Մեթոդաբանական հարցեր

Միջազգային կազմակերպությունների հետազոտություններում ներկայացված երկրների վարկանիշային արդյունքների վերաբերյալ ճշգրիտ պատկերացումներ ձևավորելու համար առանձնապես կարևորվում է մեթոդաբանական հիմնահարցերի լուսաբանումը: Նշենք, որ սույն ուսումնասիրությունում ներկայացվող բոլոր վարկանիշային հետազոտությունները, ըստ թեմատիկ ուղղությունների, դասակարգվել են չորս հիմնական խմբերում.

- *տնտեսական հետազոտություններ,*
- *պետության կայացման հետազոտություններ,*
- *ժողովրդավարության, մարդու իրավունքներին առնչվող հետազոտություններ,*
- *էներգետիկ անվտանգությանը վերաբերող հետազոտություն:*

Վարկանիշային հետազոտությունների նման դասակարգումը թույլ է տալիս մեկ հարթությունում համախմբել միևնույն թեմատիկ հետազոտությունները և առավել հստակ եզրահանգումներ կատարել հետազոտությունում ներառված երկրների ցուցանիշների համեմատական վերլուծությունների վերաբերյալ: Նշենք նաև, որ դրա հետ մեկտեղ, միևնույն թեմատիկ դասակարգման համատեքստում ընդգրկված հետազոտությունները, թեև մեթոդաբանորեն իրականացվել են, որպես կանոն, գրեթե նույն սկզբունքներով, այնուհանդերձ, վարկանիշավորման գործում տարբերակվում են իրենց ցուցիչների ու ենթացուցիչների կամ աստիճանակարգերի ընտրությամբ: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե միևնույն թեմատիկ ուղղությունում տեղ գտած ուսումնասիրությունները (օրինակ՝ տնտեսական) չեն կարող ունենալ համեմատական վերլուծության հիմքեր: Ընդհակառակը, վարկանիշավորման հիմնական խմբերի դասակար-

գումը հնարավորություն է ընձեռում առավել լայն ու բազմակողմանի համեմատություն անցկացնել տվյալ թեմատիկ ուղղությամբ ընտրված հետազոտությունների ու դրանցում ներառված երկրների ցուցանիշների միջև:

Մեր ուսումնասիրած գրեթե բոլոր հետազոտություններն ու զեկույցները վարկանիշավորման, ցուցիչների ու ենթացուցիչների ընտրության հարցերում հիմնվում են գրեթե միևնույն մեթոդաբանական սկզբունքների վրա: Որպես կանոն, տվյալ թեմատիկ վարկանիշավորման համար ընտրվում են մինչև մեկ տասնյակ կամ նույնիսկ ավելի հիմնական ենթացուցիչներ կամ ցուցիչներ, որոնք վերաբերում են մեզ հետաքրքրող ոլորտում տվյալ պետության գործունեության արդյունավետությանն ու առկա հիմնախնդիրներին: Որոշ վարկանիշային հետազոտություններում կիրառված մեթոդաբանությունում կարելի է հանդիպել նաև վարկանիշավորման, այսպես կոչված, աստիճանավորման համակարգին: Աստիճանակարգումը թույլ է տալիս թեմատիկ ուղղության վարկանիշավորման հարցում պետությունների վարկանիշային վերջնական կամ ամփոփ ցուցիչների հիման վրա այդ երկրները դասակարգել առավել լայն խմբային աստիճանավորման մեջ: Դրանք կարող են լինել հիմնականում երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան կամ հնգաստիճան՝ բացարձակ, բարձր, միջին, ցածր կամ ցածրագույն աստիճանավորման: Օրինակ, տնտեսական ազատության վարկանիշավորման պարագայում, որպես աստիճանակարգային դասակարգում, կիրառվում է բացարձակ, միջին և ցածրագույն տնտեսական ազատություն ունեցող երկրների դասակարգման մեխանիզմը:

Վարկանիշավորման մեթոդաբանության կարևոր առանձնահատկություններից մեկը վերաբերում է հետազոտություններում ներառված երկրների վարկանիշային դիրքերին, որոնք ձևավորվում են՝ հաշվի առնելով տվյալ պետության ենթացուցիչների հիման վրա

կազմված ամփոփ ցուցանիշային արդյունքները: Սակայն հարկ է նշել, որ տվյալ երկրի զբաղեցրած վարկանիշային այս կամ այն դիրքը մեթոդաբանական տեսանկյունից հիմնականում կարևորվում է զեկույցի այլ երկրների հետ դիրքային համեմատության համատեքստում. դիրքային վարկանիշավորումն առանց ենթացուցիչների՝ ըստ երկրների համեմատական վերլուծության, չի կարող տալ համեմատաբար լայն եզրահանգումներ երկրների վարկանիշային արդյունքների վերաբերյալ: Հաճախ ստացվում է այնպես, որ վարկանիշավորման շրջանակներում երկրների ենթացուցիչները կամ ցուցիչները չուսումնասիրելու կամ բավարար չափով չուսումնասիրելու պարագաներում թերարժեք պատկերացումներ են ձևավորվում երկրների արդյունքների համեմատական վերլուծության վերաբերյալ: Իսկ որոշ դեպքերում էլ երկրների դիրքային դասակարգումները մասամբ տարբերվում են նրանց ենթացուցչային վարկանիշային արդյունքներից և չեն տալիս պետությունների իրական վարկանիշային պատկերը: Ուստի, հետազոտությունում կիրառված՝ ըստ երկրների վարկանիշային ենթացուցչային համակարգերի հետազոտության հիմնահարցն առավել քան հրատապ է այդ հետազոտության վերաբերյալ հստակ ու ճշգրիտ գիտելիքներ ձևավորելու տեսանկյունից առհասարակ: Նշենք, սակայն, որ մեր ուսումնասիրությունում առանձնացված միջազգային կազմակերպությունների վարկանիշային ոչ բոլոր հետազոտություններում են հասանելի լինում ենթացուցչային վիճակագրական տվյալները՝ հիմնականում համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության պատճառով, ուստի, հարկադրաբար լուսաբանվում ու վերլուծվում են դրանց դիրքային կամ միայն ամփոփիչ ցուցչային արդյունքները:

Հետազոտություններում կիրառված մեթոդաբանական սկզբունքներից անհրաժեշտ է առանձնացնել նաև երկրների վարկանիշավորման ժամանակագրական ասպեկտը կամ վարկանիշային

արդյունքների զարգացման դինամիկան՝ ըստ տարեկան հետազոտությունների: Տարեկան զարգացման դինամիկայի վարկանիշավորման մեթոդաբանությունը թույլ է տալիս ժամանակագրորեն հետևել տվյալ երկրի ինչպես վարկանիշային ենթացուցչի կամ ենթացուցիչների, այնպես էլ ամփոփ ցուցանիշի զարգացման ընթացքին: Վարկանիշավորման ժամանակագրական ասպեկտի ուսումնասիրումն էական դեր ունի հատկապես տարբեր երկրների վարկանիշային ցուցանիշների համեմատական վերլուծության պարագայում:

Ընդհանուր վերլուծություն. հիմնական առանձնահատկությունները

Աշխատությունում փորձել ենք ի մի բերել միջազգային վարկանիշային հեղինակավոր կազմակերպությունների վարկանիշավորման հետազոտությունները, որոնք թույլ կտան ընդհանրական պատկերացում կազմել ՀՀ միջազգային վարկանիշի վերաբերյալ[1]: Մեր առանձնացրած միջազգային հետազոտություններում, որպես կանոն, հիմնականում ներկայացվում են այն երկրների վարկանիշները, որոնք համադրելի են ՀՀ միջազգային վարկանիշային արդյունքներին. դրանք են հետխորհրդային հանրապետությունները, Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրները, ինչպես նաև ՀՀ-ին սահմանակից Թուրքիան և Իրանը:

Ուսումնասիրության շրջանակներում կանդրադառնանք ներկայացված վարկանիշային հետազոտությունների՝ ըստ երկրների ցուցանիշների համեմատական վերլուծականում տեղ գտած հիմնական առանձնահատկություններին:

1. Կատարված ուսումնասիրության հետազոտական արդյունքները ցույց են տալիս, որ հետխորհրդային երկրների շարքում ՀՀ-ն, որպես կանոն, բավական բարձր վարկանիշային արդյունքներ է արձանագրել: Ավելին, ՀՀ վարկանիշային ցուցանիշներն ընդհանուր առմամբ համադրելի են Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև Մերձբալթյան երկրների արդյունքների հետ և աննշան տարբերությամբ են զիջում վերջիններին, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ գերազանցում են այդ պետությունների վարկանիշները: ՀՀ միջազգային վարկանի-

[1] Հետազոտությունում չեն ընդգրկվել այն կազմակերպությունների հետազոտությունները, որոնցում տվյալներ չկան ՀՀ միջազգային վարկանիշի վերաբերյալ:

շային ցուցանիշներն առաջատար, իսկ որոշ դեպքերում էլ՝ լավագույն արդյունքներն են ունեցել նաև հետազոտությունների տարեկան զարգացման դինամիկայի համատեքստում՝ հիմնականում պահպանելով նախորդ ցուցանիշներն ու որոշ դեպքերում բարելավելով դրանք: Հարավկովկասյան հանրապետություններից ՀՀ միջազգային վարկանիշների հետ համադրելի են միայն Վրաստանի[1] ցուցանիշները: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշային արդյունքները գլխավորապես միջին դիրքերի են եղել:

2. Տնտեսական թեմատիկ ուղղության վարկանիշային ընդհանրացված ու համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հետխորհրդային երկրների շարքում ՀՀ վարկանիշային ցուցանիշները, որպես կանոն, առաջատար դիրքեր են զբաղեցնում, չնայած տնտեսական հետազոտությունների ուղղվածությունը և դրանցում կիրառված ենթացուցիչները գրեթե ամբողջովին տարբերվում են միմյանցից և ավելի շուտ հանդես են գալիս որպես փոխլրացնող գործոններ: Այսպես, «Տնտեսական ազատության ինդեքսը» վարկանիշավորման հարցում հիմնվում է այնպիսի ենթացուցիչների վրա, որոնք վերաբերում են պետության տնտեսական գործունեության առավել ընդհանրական ու լայն դաշտի: Այլ է ենթացուցիչների ընդհանուր պատկերը «Գործարարության» վարկանիշավորման պարագայում, որոնք ներկայացնում են խիստ նեղ՝ պետությունում գործարար միջավայրի արդյունավետությանը վերաբերող դաշտի հարցադրումները: Ներկայացված հետազոտությունների վարկանիշավորման ենթացուցիչների տարբերակման հանգամանքը հնարավորություն է տալիս, որպեսզի վարկանիշային զեկույցներում

[1] Գրքում զետեղված վարկանիշային հետազոտությունների կատարման ժամանակ Վրաստանն ԱՊՀ անդամ էր: Այդ իսկ պատճառով գրքում այն ընդգրկված է ԱՊՀ պետությունների շարքում:

տվյալ պետության վարկանիշավորման ցուցանիշների կամ ըստ առանձնացված երկրների արդյունքների համեմատական վերլուծությունը լինի առավել լայն և բազմակողմանի:

Տնտեսական վարկանիշային հետազոտությունների արդյունքների համաձայն, հետխորհրդային երկրների շարքում ՀՀ-ի հետ միասին բարձր միավորներով աչքի են ընկել Վրաստանը, Ուկրաինան և Մոլդովան, հիմնականում միջին դիրքերում է հայտնվել Ադրբեջանը: Վարկանիշային վիճակագրության այդ դինամիկան միանշանակ չէ բոլոր վարկանիշային հետազոտությունների համար, այնուհանդերձ, վերջիններիս համեմատական վերլուծության արդյունքում այդ միտումը դառնում է որոշակի օրինաչափություն: Ի դեպ, առհասարակ միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցների արդյունքների վերաբերյալ առավել համարժեք պատկեր ստանալու տեսանկյունից կարևորում ենք դրանց դիտարկումը միջազգային ընթացիկ զարգացումների համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերջիններիս հնարավոր ազդեցությամբ վարկանիշային արդյունքների փոփոխությունների հարցերին: Վերն առանձնացված երկրները՝ Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան և Մոլդովա, ՎՈՒԱՄ անդամ պետություններ են, ասել է թե՝ նկատված միտումը պետք է կապել համաշխարհային աշխարհաքաղաքական ընթացիկ զարգացումների ընդհանուր տրամաբանության հետ: Առանձնացված վարկանիշային հետազոտություններում տնտեսական ուղղությունը միակը չէ, որտեղ ՎՈՒԱՄ անդամ երկրները (ինչպես նշվեց, Ադրբեջանը ԱՊՀ պետությունների կազմում հիմնականում զբաղեցնում է միջին դիրքեր) զբաղեցնում են առաջատար դիրքեր. այդ միտումը կարելի է նկատել նաև այլ թեմատիկ ուղղություններում: Որպես օրինակ, նշենք «Ֆրիդրմ Հաուզ» հեղինակավոր վարկանիշային կազմակերպության կողմից հրատարակվող «Ազատության վարկանիշն աշխարհում»

ուսումնասիրությունը, որի 2007-2009թթ. զեկույցներում ՎՈՒԱՄ երկրներից Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան կրկին ամենաբարձր ցուցանիշներն են արձանագրել ԱՊՀ կազմում: Թե՛ տնտեսական թեմատիկ ուղղությունում, թե՛ այլ վարկանիշային հետազոտություններում ԱՊՀ-ում ՀՀ-ն միակ պետությունն է, որի ցուցանիշները, որպես կանոն, համադրելի են եղել վերը թվարկված երկրների հետ՝ որոշ դեպքերում գերազանցելով կամ զիջելով նրանց ցուցանիշներին:

Մեր կողմից առանձնացված վարկանիշային հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ հատկապես վերջին տարիների կտրվածքով որոշ դեպքերում նկատելի է Ադրբեջանի վարկանիշային արդյունքների որոշակի բարելավման միտում, ինչը, թերևս, պայմանավորված է նաև վերջին շրջանում Ադրբեջանի՝ որպես էներգետիկ տարանցիկ երկրի ունեցած դերի ու նշանակության աճի հետ: Նման կարծիքը հիմնավորված է դառնում նաև այն առումով, որ նախորդ տարիների կամ տարվա համեմատությամբ, ըստ որոշ հետազոտությունների, վերջին շրջանում Ադրբեջանի վարկանիշային ցուցանիշները, ի տարբերություն ԱՊՀ անդամ և այլ երկրների, ունեցել են կտրուկ դրական տեղաշարժ:

Նույն տրամաբանությունն է նաև Ղազախստանի պարագայում, որը միջինասիական երկրների շարքում աչքի է ընկնում համեմատաբար բարձր ցուցանիշներով: Ղազախստանի համեմատաբար բարձր ցուցանիշների առկայությունը նույնպես բացատրվում է այդ երկրի ռազմավարական-աշխարհագրական և էներգետիկ կարևոր նշանակությամբ:

Տնտեսական ուղղությունում ներկայացված վարկանիշային հետազոտությունների շարքում վերջիններիս արդյունքների համեմատությամբ բավական հակասական տվյալներ են ներկայացված հեղինակավոր Համաշխարհային տնտեսական ֆորում կազմակերպության «Գլոբալ մրցունակության վարկանիշը» ուսումնա-

սիրությունում: Համաձայն կազմակերպության կողմից ընդհանրացված տվյալների, ԱՊՀ առանձնացված 10 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցնում է բավական ցածր՝ 7-րդ հորիզոնականը, ինչը, հաշվի առնելով նման թեմատիկ ուղղության այլ վարկանիշային հետազոտություններում ՀՀ առաջատար ցուցանիշների ընդհանուր տրամաբանությունը, չպետք է ունենար ոչ միայն զգալիորեն տարբերվող, այլև լրիվ հակադիր վարկանիշավորում առհասարակ: Ավելին, Համաշխարհային տնտեսական ֆորում կազմակերպությունը ներկայացնում է տնտեսական թեմատիկ ուղղության նաև մեկ այլ վարկանիշային հետազոտություն՝ «Համաշխարհային առևտրի խթանումը»: Նկատենք, որ այդ վարկանիշային հետազոտությունում առանձնացված ենթացուցիչներն ընդհանուր առմամբ համադրելի են «Գլոբալ մրցունակության» հետազոտության վարկանիշավորման ենթացուցիչների մի մասի հետ: Խնդիրն այն է, որ վերջինի դեպքում ՀՀ արդյունքները հակասում են «Համաշխարհային առևտրի խթանումը» վարկանիշային հետազոտության՝ մեր հանրապետության համապատասխան ցուցանիշին, որն առաջատար դիրքեր է զբաղեցրել ԱՊՀ անդամ պետությունների շարքում (2008թ. լավագույն ցուցանիշը, իսկ 2009թ. դրությամբ զիջում է միայն Մոլդովային): Եթե նույնիսկ հիմնվենք միայն այդ պարզ տրամաբանության վրա, ապա «Գլոբալ մրցունակության» հետազոտությունում ՀՀ վարկանիշը կարող էր ամենաքիչը տարբերվել կամ շեղվել այլ վարկանիշային հետազոտություններում ունեցած ընդհանուր բարձր ցուցանիշների տրամաբանությունից ու զարգացման դինամիկայից:

Մյուս կողմից, «Գլոբալ մրցունակության» վարկանիշային հետազոտությունում ՀՀ-ի առնչությամբ հաշվի չի առնվել ևս մեկ կարևոր հանգամանք. հարևան Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական շրջափակումը, ինչը զգալի բացասական ազդեցություն է ունեցել և շարունակում է ունենալ ՀՀ տնտեսական գործունեության վրա:

Եթե «Գլոբալ մրցունակության» զեկույցի վարկանիշավորման հարցում համապատասխան մասնագետների ու փորձագետների կողմից հաշվի առնվեր հարևան երկու երկրների կողմից ՀՀ շրջափակման հանգամանքը, ապա ՀՀ գլոբալ մրցունակության վարկանիշը, ընդհակառակը, այլ երկրների (առաջին հերթին՝ Ադրբեջանի ու Վրաստանի) համադրությամբ տրամաբանորեն պետք է ունենար անհամեմատ ավելի բարձր արդյունքներ: Չպետք է անտեսել, որ ՀՀ տնտեսական վարկանիշավորման պարագայում շրջափակման հանգամանքը պետք է դիտարկվի որպես վարկանիշավորման կարևոր ենթացուցիչներից մեկը, ինչի առկայության ու ազդեցության պայմաններում այլ վարկանիշային հետազոտություններում ՀՀ միջազգային վարկանիշը ԱՊՀ երկրների ցուցակում առանձնացել է առաջատար, իսկ որոշ դեպքերում՝ լավագույն վարկանիշային ցուցանիշներով: Ի դեպ, «Գլոբալ մրցունակության» վարկանիշային ուսումնասիրությունում ընտրվել են այնպիսի ենթացուցիչներ, ինչպիսիք են, օրինակ, մակրոտնտեսական կայունությունը, շուկայի ծավալը, առևտրային շուկայի արդյունավետությունը, որոնք ուղղակիորեն վերաբերում են հարևան երկրների կողմից ՀՀ տնտեսական ու քաղաքական շրջափակման խնդիրներին և կրում են վերջինիս ազդեցությունը:

Համաշխարհային գործընթացներում ՀՀ մրցունակության վարկանիշավորման հարցում անհրաժեշտ էր ներառել նաև այնպիսի կարևոր ցուցիչ, ինչպիսին ՀՀ սահմաններից դուրս բնակվող Հայությունն է: Հայկական համայնքներն այս կամ այն չափով ներկայացված լինելով ՀՀ տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ոլորտներում՝ տրամաբանորեն ներկայանում են որպես ՀՀ գլոբալ մրցունակության վարկանիշավորման առանցքային բաղադրիչներից մեկը, ինչը նույնպես հաշվի չի առնվել «Գլոբալ մրցունակության» ուսումնասիրության՝ ՀՀ միջազգային վարկանիշավորման մեթոդաբանությունում:

3. Սույն ուսումնասիրության վարկանիշային հետազոտությունների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պետության կայացածության վարկանիշային հետազոտությունները, որոնցից ներկայացնում ենք հեղինակավոր «Ֆորին Փոլիսի Մեգեզին» ամսագրի և «Ֆանդ ֆոր Փիս» կազմակերպության հրապարակած «Ձախողված երկրների ինդեքսն» ու Բրուքինգի ինստիտուտի «Զարգացող աշխարհում պետության թուլության ինդեքսը»: Պետության կայացածության հիմնահարցերը վերաբերում են տվյալ երկրի գործունեության գրեթե բոլոր հիմնարար ոլորտներին, ուստի, նման վարկանիշային հետազոտությունն իրատեսորեն ծանր կշիռ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների վարկանիշային գործունեությունում: Նշված երկու վարկանիշային ուսումնասիրությունների կարևոր առանձնահատկություններից մեկն էլ վերաբերում է նրանց վարկանիշավորման ինքնատիպ ենթացուցիչների ընտրությանը: «Ձախողված երկրների ինդեքսի» վարկանիշային հետազոտությունում ներկայացված ենթացուցիչները յուրօրինակ են և առնչվում են պետության գործունեության բավական լայն ասպարեզների: Այդ ենթացուցիչներից կարելի է առանձնացնել փախստականների ու ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժի, դժգոհ զանգվածների առկայության, մարդկային ռեսուրսների քրոնիկական ու կայուն արտահոսքերի ենթացուցիչները, որոնք բոլորն էլ վերաբերում են սոցիալական ուղղությանը: Քաղաքական ցուցիչների մեջ աչքի են ընկնում պետության քրեականացման, կլանային վերնախավերի ազդեցության մեծացման և օտար երկրների միջամտության գործոնները:

«Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային հետազոտությունում ՀՀ միջազգային վարկանիշը ԱՊՀ անդամ պետությունների մեջ բարձր է եղել. 2006-2008թթ. ՀՀ վարկանիշային արդյունքներն այստեղ եղել են լավագույնը, իսկ 2009թ. զիջել են այդ երկրներից

միայն երկուսին՝ Ղազախստանին և Ուկրաինային: Նույն տրամաբանությունը նկատելի է նաև Բրուքինգի ինստիտուտի «Զարգացող աշխարհում պետության թուլության ինդեքսը» վարկանիշային հետազոտությունում, որտեղ 2008թ. դրությամբ ԱՊՀ երկրների շարքում ՀՀ միջազգային վարկանիշը զիջում է միայն Ուկրաինային:

4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Էներգետիկ կենսունակության անվտանգությունն անցումային տնտեսություններում» զեկույցը դասվում է էներգետիկ անվտանգության ոլորտի, թերևս, բացառիկ վարկանիշային հետազոտությունների շարքին:

«Էներգետիկ կենսունակության անվտանգությունն անցումային պետություններում» 2008թ. զեկույցում ընդգրկվել են կենսունակ կամ կայուն էներգետիկ ինդեքսի այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են տվյալ պետության էներգետիկ արդյունավետությունը (ինստիտուտներ, շուկայի խթանիչներ), վերականգնվող էներգետիկայի ցուցիչները (ինստիտուտներ, օրենսդրություն, շուկա) և կլիմայի փոփոխության գործոնները:

Վարկանիշային հետազոտության արդյունքների համաձայն, ՀՀ միջազգային կենսունակ/կայուն էներգետիկ անվտանգության ինդեքսը կամ վարկանիշը համարվում է լավագույնը ԱՊՀ պետությունների շարքում: ՀՀ էներգետիկ վարկանիշն ընդհուպ մոտեցել է Էստոնիայի, Սլովակիայի և Լատվիայի համապատասխան ցուցանիշին: ՀՀ վարկանիշին հաջորդում են Վրաստանի, Ուկրաինայի, Ղրղզստանի և Ռուսաստանի կենսունակ էներգետիկ ինդեքսները: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս և Թուրքմենստանի վարկանիշները զեկույցում ներառված ԱՊՀ անդամ երկրների շարքում ամենացածր միավորներն ունեն: Այս վարկանիշային հետազոտությունը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու այն փաստը, որ ՀՀ-ն, Ադրբեջանի ու Թուրքիայի

կողմից շրջափակված լինելով, արհեստականորեն մեկուսացվելով տարածաշրջանի հիմնական էներգետիկ (նավթագազային) հաղորդակցություններից, չունենալով նավթագազային պաշարներ, ոչ միայն ապահովել է երկրի էներգետիկ անվտանգությունն ու կենսունակությունը, այլև միջազգային էներգետիկ հարաբերություններում, հարավկովկասյան էներգետիկ անվտանգության հիմնահարցերում հանդես է գալիս որպես հուսալի գործընկեր ու տարածաշրջանային առանցքային խաղացող:

5. Ինչպես արդեն նշել ենք, վարկանիշային վերլուծություններում հաշվի են առնվել միջազգային ակտուալ այն զարգացումները, որոնց ազդեցությամբ կարող էին փոփոխվել առանձնացված երկրների վարկանիշային արդյունքները: Թերևս, երկու կարծիք լինել չի կարող այն հարցում, որ վերջին շրջանում միջազգային հարաբերություններում առկա ամենախոցելի հիմնահարցերից մեկը վերաբերում էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին: Ի տարբերություն զարգացած և առաջատար երկրների, որոնց տնտեսությունները անհամեմատ ավելի են ինտեգրված համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգին, հետևաբար ծավալային առավել լուրջ ֆինանսական կորուստներ են ունեցել, անցումային տնտեսություններ ունեցող և զարգացող երկրներում իրավիճակն այլ է: Ինչպես կանխատեսել են միջազգային ֆինանսական կազմակերպություններից շատերը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, այնուհանդերձ, համեմատաբար «մեղմ» ազդեցություն ունեցավ հենց զարգացող ու անցումային երկրների տնտեսությունների վրա՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում զարգացող պետությունների ազգային ֆինանսական համակարգի ու տնտեսության համեմատաբար քիչ ինտեգրվածությամբ: Եվ ոչ միայն. շատ վերլուծաբաններ համոզված են, որ զարգացող և անցումային երկրներում տնտեսական աճի տեմպերի պահպանումը նաև արդյունք է այդ

երկրներում բարենպաստ ներքին մակրոտնտեսական ցուցանիշների ապահովման, զգալի օտարերկրյա ակտիվների կուտակման, ինչպես նաև նախորդ տարիների կայուն և արագ տնտեսական աճի:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ընդհանուր առմամբ, նախորդ տարիների համեմատ, լուրջ ազդեցություն չի ունեցել առանձնացված երկրների վարկանիշային արդյունքների վրա (համենայնդեպս, այդ են վկայում վիճակագրական-վարկանիշային ցուցանիշները): Կարելի է ասել, որ անցումային և զարգացող երկրների տնտեսության վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքները, ինչպես հաստատում են միջազգային ֆինանսական կազմակերպությունները, պետք է լինեին առավել շոշափելի 2009թ. կեսերից սկսած: Ասել է թե՝ այդ բացասական ֆոնը կարող է դրսևորվել տվյալ վարկանիշային հետազոտության, թերևս, 2010թ. ցուցանիշներում, եթե այդպիսիք լինեն: Այնուհանդերձ, կարելի է արձանագրել դեպքեր, երբ նկատելի են եղել համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքներն առանձնացված երկրների վարկանիշային արդյունքների վրա: Խոսքը նախևառաջ Միջազգային ֆինանսական կազմակերպության «Գործարարության» վարկանիշավորման վերջին՝ 2009-2010թթ. զեկույցների մասին է, որոնցում, ի տարբերություն նախորդ ուսումնասիրությունների, ՀՀ-ն զիջել է դիրքերը: Նախորդ արդյունքների համադրությամբ, նշված ժամանակահատվածում իր ցուցանիշները կտրուկ բարելավել է Ադրբեջանը, որը եթե 2008թ. զբաղեցնում էր 96-րդ դիրքը, 2009-2010թթ. արդեն 38-րդն էր: Ինչպես նկատում են որոշ տնտեսագետներ, Ադրբեջանի տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի համեմատաբար «մեղմ» հետևանքները պայմանավորված են այդ երկրում նավթագազային պաշարների առկայությամբ, որոնցից ստացված եկամուտները մասնակիորեն ծածկել են այդ բացասական ֆոնը:

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2000-2009թթ. վարկանիշային վերլուծություն The Heritage Foundation, The Wall Street Journal. “Index of Economic Freedom”

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ., մեթոդաբանական հարցեր

«Տնտեսական ազատության ինդեքսը» (*Index of Economic Freedom)* վարկանիշային հետազոտությունն արդեն գրեթե մեկ տասնամյակ իրականացվում է ԱՄՆ առաջատար ու հեղինակավոր «ուղեղային կենտրոններից» մեկի՝ «Հերիթիջ ֆաունդեյշընն»-ի (*The Heritage Foundation)* և «Ուոլ սթրիթ ջորնալ»-ի (*The Wall Street Journal)* կողմից: «Հերիթիջ ֆաունդեյշընն» կազմակերպությունը ստեղծվել է 1973թ. և հետազոտական ու կրթական ինստիտուտ է՝ «ուղեղային կենտրոն»), որի հիմնական նպատակներից է ԱՄՆ կառավարության պահպանողական քաղաքականության ձևավորումն ու աջակցումը:

«Տնտեսական ազատության ինդեքսը» վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է 10 տնտեսական ցուցիչների վրա, որոնց քանակական միջին հաշվարկի միջոցով տրվում է զեկույցում ներառված երկրներից յուրաքանչյուրի տնտեսական ազատության ամփոփիչ վարկանիշը:

«Տնտեսական ազատության ինդեքսի» 10 ցուցիչներն են.

- *գործարար ազատություն,*
- *առևտրի ազատություն,*

- *ֆիսկալ ազատություն,*
- *ազատություն կառավարությունից,*
- *արժութային ազատություն,*
- *ներդրումային ազատություն,*
- *ֆինանսական ազատություն,*
- *սեփականության իրավունքի պաշտպանվածություն,*
- *կոռուպցիայից ազատություն,*
- *աշխատանքային ազատություն:*

Յուրաքանչյուր ցուցչի տնտեսական համապատասխան ազատության ցուցանիշը և ընդհանրապես տվյալ երկրի տնտեսական ազատության ամփոփիչ ցուցիչը որոշվում է 0-100 միավոր սանդղակով, որտեղ 100 միավորը համարվում է ազատության բարձրագույն ցուցանիշը: Բացի այդ, յուրաքանչյուր պետության տնտեսական ազատության ամփոփիչ ցուցչային վարկանիշը, համաձայն տվյալ երկրի տնտեսության ազատականացման աստիճանավորման, բաշխվել է հինգ մասի.

- ազատ՝ երկրներ, որոնք ստացել են 80-100 միավոր,
- հիմնականում ազատ՝ 70-79.9,
- միջին ազատության՝ 60-69.9,
- հիմնականում ոչ ազատ՝ 50-59.9,
- ճնշված՝ 0-49.9:

Հետազոտությունում վերլուծել ենք ոչ միայն ուսումնասիրված երկրների ամփոփ վարկանիշային արդյունքները, այլև լուսաբանել վերը թվարկված 10 ցուցիչների համեմատականներն ընդգրկված պետությունների օրինակով: Հարցի ներկայացման կարևոր առանձնահատկություններից մեկն էլ վերաբերում է ինդեքսների դիտարկմանը ժամանակագրական տեսանկյունից, որտեղ հիմնական

ուշադրությունը դարձվում է տվյալ երկրի կամ երկրների վարկանիշային ցուցանիշների տեղաշարժերին ու զարգացման դինամիկային՝ նախորդ հետազոտությունների հետ համադրության համատեքստում:

ՀՀ վարկանիշը այլ երկրների շարքում

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ. հետազոտության արդյունքների համաձայն, ՀՀ վարկանիշային ցուցանիշը բավական բարձր է եղել՝ զեկույցում ներառված 183 երկրների շարքում 31-րդը: Եթե փորձենք դիտարկել ՀՀ դիրքը՝ ելնելով վերջինիս տնտեսության ազատականացման սկզբունքից, ապա ՀՀ-ն *միջին ազատության* (60-69.9 միավոր) երկրների շարքում ունեցել է լավագույն արդյունք՝ 69.9 միավոր՝ զիջելով միայն Լիտվային (70 միավոր): Նկատենք նաև, որ ՀՀ վարկանիշային ցուցանիշը բավական մոտ է (0.2 միավորի տարբերությամբ) ազատականացման երկրորդ՝ *հիմնականում ազատ* աստիճանակարգման վերջնամասին, ինչը բավական բարձր ցուցանիշ պետք է համարել: Հիմնականում ազատ աստիճանակարգում ՀՀ տնտեսական ազատության վարկանիշի հետ համադրելի են Լիտվայի (30-րդ դիրք), Իսպանիայի (29) և Նորվեգիայի (28) ցուցանիշները:

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ. հետազոտությունում ՀՀ վարկանիշը համարվում է լավագույնը ԱՊՀ անդամ պետությունների շարքում: Համեմատաբար բարձր են եղել նաև Վրաստանի (32-րդ դիրք), Ղրղզստանի ու Ղազախստանի ցուցանիշները: ԱՊՀ անդամ երկրներից վարկանիշային առաջատար ցուցանիշներով առանձնացած այս 4 երկրները դասակարգվում են միջին ազատության աստիճանավորման շրջանակներում: Ինչպես տեսնում ենք ստորև պատկերված աղյուսակից, ԱՊՀ անդամ պետությունների մեջ

Ադրբեջանը զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը՝ զեկույցում ներառված 183 երկրների շարքում գրավելով 99-րդ դիրքը: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ ի տարբերություն վերը նշված հանրապետությունների, ԱՊՀ երկրների շարքում Ադրբեջանը գտնվում է *հիմնականում ոչ ազատ* երկրների ցուցակում՝ արձանագրելով ԱՊՀ անդամ պետությունների շարքում *հիմնականում ոչ ազատ* աստիճանավորման դասակարգման լավագույն արդյունքը: Ինչ վերաբերում է վերջին՝ *ճնշված ազատության* աստիճանավորմանը, ապա այստեղ ԱՊՀ անդամ պետություններից ներառվել են երեքը՝ Ուկրաինան, Բելառուսը և Թուրքմենստանը (աղյուսակում ԱՊՀ անդամ պետությունների տնտեսական ազատության ցուցիչները ներկայացված են նաև գունային տարբերանշաններով):

Բավական հետաքրքիր վիճակագրական պատկեր է ձևավորվում ՀՀ և մերձբալթյան, Արևելա-Կենտրոնական Եվրոպայի երկրների վարկանիշների համեմատության պարագայում: Կարելի է հաստատել, որ ՀՀ վարկանիշային ցուցանիշը ոչ միայն համեմատելի է մերձբալթյան, Արևելա-Կենտրոնական Եվրոպայի երկրների արդյունքների հետ, այլև գերազանցում է նրանց զգալի մասին: ՀՀ ցուցանիշին զիջում են Չեխիայի (69.4 միավոր), Հունգարիայի (66.8), Լատվիայի (66.6), Բուլղարիայի (64.6), Ռումինիայի և (63.2), Հունաստանի (60.3) վարկանիշային արդյունքները (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 1*): Ավելին, ՀՀ տնտեսական ազատության վարկանիշը անհամեմատ գերազանցում է հարևան մյուս երկու պետություններին՝ Թուրքիային ու Իրանին: Թուրքիան զբաղեցրել է 75-րդ դիրքը, Իրանը՝ 168-րդը:

Աղյուսակ 1

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ., ՀՀ վարկանիշը այլ երկրների շարքում

Դիրքը	Երկիրը	Ամփոփ ցուցիչ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ												
31	ՀՀ	**69.9**	83.7	86.4	90.0	89.7	77.8	70.0	70.0	35.0	30.0	66.3
32	Վրաստան	**69.8**	86.6	80.6	86.8	74.6	70.9	70.0	60.0	35.0	34.0	99.4
74	Ղրղզստան	**61.8**	75.3	87.6	93.4	74.9	71.5	50.0	50.0	25.0	21.0	69.5
83	Ղազախստան	**60.1**	57.9	86.2	82.8	87.5	70.0	30.0	60.0	25.0	21.0	80.5
99	Ադրբեջան	**58.0**	74.6	78.4	79.7	77.5	66.4	30.0	40.0	25.0	21.0	87.0
120	Մոլդովա	**54.9**	70.1	81.6	85.3	51.3	67.6	30.0	50.0	40.0	28.0	45.1
122	Տաջիկստան	**54.6**	45.1	82.6	89.3	85.9	63.2	30.0	40.0	30.0	21.0	58.7
146	Ռուսաստան	**50.8**	54.0	60.8	78.9	70.6	65.5	30.0	40.0	25.0	23.0	60.0
148	Ուզբեկստան	**50.5**	68.4	65.4	88.3	68.1	62.6	30.0	20.0	20.0	17.0	64.9
152	Ուկրաինա	**48.8**	40.5	84.0	77.0	39.0	68.1	30.0	40.0	30.0	27.0	52.4
167	Բելառուս	**45.0**	63.7	67.2	79.4	30.9	66.8	20.0	10.0	20.0	21.0	70.8
169	Թուրքմենստան	**44.2**	30.0	79.2	90.9	93.6	68.0	10.0	10.0	10.0	20.0	30.0
Մերձբալթյան և Արևելա-կենտր. Եվրոպայի երկրներ												
13	Էստոնիա	**76.4**	75.9	85.8	81.5	67.3	79.7	90.0	80.0	90.0	65.0	48.5
24	Կիպրոս	**70.8**	70.0	80.8	76.6	42.2	85.7	70.0	70.0	90.0	53.0	70.0
30	Լիտվա	**70.0**	82.4	85.8	87.6	65.3	75.8	70.0	80.0	50.0	48.0	54.6
37	Չեխիա	**69.4**	65.1	85.8	80.2	43.0	79.7	70.0	80.0	70.0	52.0	67.8
44	Հունգարիա	**66.8**	77.4	85.8	70.6	19.2	73.8	80.0	70.0	70.0	53.0	68.4
45	Լատվիա	**66.6**	73.8	85.8	82.3	58.5	71.1	70.0	60.0	55.0	48.0	61.6
56	Բուլղարիա	**64.6**	73.5	85.8	86.2	58.7	72.8	60.0	60.0	30.0	41.0	78.4
65	Ռումինիա	**63.2**	74.9	85.8	87.0	70.0	75.0	60.0	50.0	35.0	37.0	57.1
81	Հունաստան	**60.8**	78.7	80.8	66.5	46.3	78.8	50.0	50.0	50.0	46.0	61.2
82	Լեհաստան	**60.3**	53.7	85.8	69.0	42.2	80.8	60.0	60.0	50.0	42.0	59.8
116	Խորվաթիա	**55.1**	59.9	87.6	68.7	31.7	79.0	50.0	60.0	30.0	41.0	43.4
134	Բոսնիա/Հերցեգ.	**53.1**	59.9	77.2	71.8	37.6	79.0	50.0	60.0	10.0	33.0	52.2
Այլ երկրներ												
75	Թուրքիա	**61.6**	69.9	86.6	73.2	83.4	71.1	50.0	50.0	50.0	41.0	40.3
168	Իրան	**44.6**	60.6	57.4	81.0	79.7	60.1	10.0	10.0	10.0	25.0	52.4

Աղբյուրը՝ Հերիթիջ Ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ.

Գրաֆիկ 1. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ., ՀՀ վարկանիշը այլ երկրների շարքում



ԱՊՀ անդամ պետությունների տնտեսական ազատության ենթացուցիչների արդյունքները կրում են գրեթե համընդհանուր բնույթ՝ չհաշված մասնակի ցուցանիշային տարբերությունները (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 1*)։ Նկատենք, որ ԱՊՀ անդամ պետությունների տնտեսական ազատության առավել ուժեղ բաղադրիչներ են համարվում առաջին չորս ենթացուցիչները՝ գործարար ազատ միջավայրի, ֆիսկալ ազատության, ազատ առևտրի և կառավարությունից ազատ գործունեության բնագավառները։ Նշված երկրների տնտեսական ազատության ենթացուցիչներից առավել խոցելի են համարվում հատկապես ներդրումային, ֆինանսական ազատության, սեփականության իրավունքի պաշտպանվածության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի ոլորտները։

ՀՀ պարագայում նկատում ենք, որ վերջինս 10 ենթացուցիչների շարքում իր տնտեսական ազատության բարձրագույն ցուցանիշը գրանցել է երրորդ՝ ֆիսկալ ազատության ենթացուցչի պարագայում (90 միավոր)։ ՀՀ տնտեսական ազատության վարկանիշում բավական բարձր են գնահատվել նաև 4-րդ՝ ազատություն կառավարությունից

(89.7), ազատ առևտրի (86.4), ինչպես նաև առաջին՝ գործարար ազատության (83.7) ոլորտների արդյունքները: ՀՀ տնտեսական ազատության գնահատականում առավել խոցելի են համարվում կոռուպցիոն ռիսկերի (30 միավոր) և սեփականության իրավունքի պաշտպանվածության (35 միավոր) ոլորտները:

ՀՀ տնտեսական ազատության ենթացուցիչների ընդհանուր տրամաբանության հետ համադրելի են թե՛ Վրաստանի և թե՛ Ադրբեջանի համապատասխան ցուցանիշները: Ի տարբերություն ՀՀ-ի, Վրաստանի ու Ադրբեջանի վարկանիշային ենթացուցիչների շարքում բարձրագույն ցուցանիշ է եղել 10-րդը՝ ազատությունն աշխատանքի բնագավառում (*տե՛ս Գրաֆիկ 2*):

Գրաֆիկ 2. Հարավային Կովկասի տնտեսական ազատության վարկանիշներն՝ ըստ ենթացուցիչների, 2009թ.



Հարավային Կովկասի երկրների տնտեսական ազատության վարկանիշների զարգացման դինամիկան

Վարկանիշային ուսումնասիրություններում մեթոդաբանական կարևոր առանձնահատկություններից է երկրների վարկանիշային ցուցանիշների դիտարկումը՝ դրանց զարգացման դինամիկայի հարթությունում: Տվյալ պարագայում «Տնտեսական ազատության ինդեքսը» հետազոտությունում ՀՀ և հարակից երկրների վարկանիշների համեմատական վերլուծությունը համակողմանի ներկայացնելու և խնդրի վերաբերյալ առավել համապարփակ պատկերացում ձևավորելու առումով անհրաժեշտ ենք համարում հարցին մոտենալ նրա զարգացման դինամիկայի համատեքստում: Այսպես, «Տնտեսական ազատության ինդեքսը» 2006-2008թթ. տարեկան զեկույցների վիճակագրության համաձայն, Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական ազատության վարկանիշներն ընդհանուր առմամբ չեն տարբերվել 2009թ. ցուցանիշներից ու զբաղեցրած դիրքերից, այն է՝ 2006-2009թթ. կտրվածքով այդ երկրների վարկանիշներում լուրջ տեղաշարժեր չեն գրանցվել (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 2*):

Այլ է ցուցանիշների ընդհանուր դասավորվածությունը 2000-2005թթ. վիճակագրությունում, որտեղ, ի տարբերություն ՀՀ-ի, բավական ցածր է եղել Վրաստանի վարկանիշը, որը հարավկովկասյան հանրապետություններից համադրելի է եղել միայն Ադրբեջանի հետ: 2000թ. Վրաստանի տնտեսական ազատության ցուցանիշը եղել է 54.3 միավոր, 2002թ.՝ 56.7, իսկ 2005թ.՝ 57.1: Նկատենք, որ 2006-2009թթ. Վրաստանի վարկանիշի ամենացածր արդյունքը եղել է 2006թ.՝ ունենալով 64.5 միավոր: Ասել է թե՝ 2006թ. սկսած Վրաստանի տնտեսական ազատության վարկանիշը կայուն և կտրուկ աճման միտում է ունեցել, այն դեպքում, երբ 2000-2009թթ. թե՛ ՀՀ-ն և թե՛

Ադրբեջանը, որպես կանոն, չեն արձանագրել վարկանիշային լուրջ (դրական) տեղաշարժեր՝ պահպանելով ցուցանիշների ընդհանուր տրամաբանությունը: Հստակեցնենք նաև, որ նշված ժամանակահատվածում Վրաստանի վարկանիշի կտրուկ աճման միտումը գլխավորապես ապահովվել է ի հաշիվ գործարար ազատ միջավայրի, ազատ առևտրի, ներդրումների ազատ միջավայրի ու աշխատանքային ազատության ոլորտների զարգացման:

ՀՀ վարկանիշի ենթացուցիչների զարգացման դինամիկան

Ստորև ներկայացնում ենք ՀՀ տնտեսական ազատության վարկանիշի ենթացուցիչների զարգացման ընդհանուր դինամիկան ու մասնակի փոփոխությունները (գրաֆիկում չի պահպանվել ենթացուցիչների զարգացման դինամիկայի տարեկան հաջորդականության սկզբունքն այն պատճառով, որ ընդհանուր տրամաբանությունը կարելի է պատկերել նաև առանձին տարիներին արձանագրված միտումների օրինակով): Երկրի վարկանիշի ենթացուցիչների շարքում, որպես կանոն, բարձր են եղել գործարար ազատ միջավայրի, ազատ առևտրի, ֆիսկալ ազատության և կառավարությունից ունեցած ազատության ոլորտները: ՀՀ տնտեսական ազատությունում, համաձայն հետազոտության վիճակագրության, անհամեմատ խոցելի են մասնավորապես կոռուպցիոն ռիսկերի, սեփականության իրավունքի պաշտպանվածության ոլորտները:

2000-2009թթ. առանձին տարիների օրինակով ՀՀ տնտեսական ազատությունում, ըստ ենթացուցիչների վիճակագրության, կայուն դրական աճ ապահովվել է միայն ֆիսկալ և աշխատանքային ազատության բնագավառներում (*տե՛ս Գրաֆիկ 3 և Աղյուսակ 3*):

Որոշ ենթացուցիչներում թեև հետընթաց չի արձանագրվել, սակայն ցուցանիշների դինամիկան հիմնականում պահպանվել է, այլ ոչ թե կայուն աճել (օրինակ՝ գործարար միջավայրի ազատականացման, ներդրումային ազատության ոլորտներում)։

ՀՀ տնտեսական ազատության վարկանիշում կտրուկ աճ գրանցվել է գլխավորապես գործարար միջավայրի ազատականացման ոլորտում, որը հիմնականում դրսևորվել է 2005թ. սկսած, ինչպես նաև ներդրումային ազատության ենթացուցչի պարագայում 2000թ., երբ այն, 50 միավոր կազմելով, հետագա տարիներին կտրուկ աճեց և հասավ 70 միավորի (2000 և 2003թթ. աշխատանքային ազատության ենթացուցիչը հետազոտության մեթոդաբանությունում կիրառված չէ)։ Սեփականության իրավունքի պաշտպանվածության ոլորտում, որտեղ պահպանվել է 50 միավորը, 2009թ. դրությամբ, ընդհակառակը, նկատվել է նվազման միտում՝ 35 միավոր։ Նշված տարիների կտրվածքով ՀՀ վարկանիշային ենթացուցիչների արդյունքների ընդհանուր միտումներից կտրուկ շեղում է նկատվել 2005թ., երբ ֆինանսական ազատության ոլորտում զգալի առաջընթաց է նկատվել։ Սակայն 2006 և 2009թթ. դրությամբ այն նվազել է ու պահպանել նախորդ տարիների արդյունքը (70 միավոր)։

Աղյուսակ 2

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2006-2008թթ., ՀՀ և հարակից պետություններ

Երկիր	Տարեթիվ	Ամփոփ ցուցիչ	1	2	3	4	5	6	7	8	9	10
Հարավային Կովկաս և մերձտարածաշրջան												
ՀՀ	2008	**69.9**	81.4	85.0	89.0	86.4	84.6	70.0	70.0	35.0	29.0	68.2
Վրաստան	2008	**69.2**	85.0	71.0	90.7	81.2	71.4	70.0	60.0	35.0	28.0	100.0
Ադրբեջան	2008	**55.4**	62.6	78.4	80.4	82.9	76.5	30.0	30.0	30.0	24.0	58.7
Թուրքիա	2008	**60.0**	68.3	86.8	77.8	68.3	70.8	50.0	50.0	50.0	38.0	39.5
Իրան	2008	**45.0**	55.8	57.4	81.1	84.5	61.3	10.0	10.0	10.0	27.0	53.1
Հարավային Կովկաս և մերձտարածաշրջան												
Վրաստան	2007	**69.3**	80.8	71.8	91.2	88.4	77.8	60.0	70.0	30.0	23.0	99.9
ՀՀ	2007	**68.6**	80.8	85.6	89.7	90.8	80.3	60.0	70.0	30.0	29.0	70.3
Ադրբեջան	2007	**54.6**	58.0	77.6	80.8	79.9	76.8	30.0	30.0	30.0	22.0	60.8
Թուրքիա	2007	**57.4**	67.4	81.0	69.1	62.4	70.1	50.0	50.0	50.0	35.0	38.8
Իրան	2007	**45.0**	55.4	55.4	81.2	84.5	62.0	10.0	10.0	10.0	29.0	52.5
Հարավային Կովկաս և մերձտարածաշրջան												
ՀՀ	2006	**70.6**	77.6	80.6	90.0	90.7	80.6	70.0	70.0	50.0	31.0	65.3
Վրաստան	2006	**64.5**	73.9	67.6	64.1	90.8	75.2	50.0	70.0	30.0	20.0	73.6
Թուրքիա	2006	**57.0**	66.7	81.0	68.0	68.1	64.7	50.0	50.0	50.0	32.0	39.1
Ադրբեջան	2006	**53.2**	56.7	72.6	80.0	77.8	75.5	30.0	30.0	30.0	19.0	60.4
Իրան	2006	**45.0**	56.1	55.4	81.2	85.1	60.1	10.0	10.0	10.0	29.0	53.0

Աղբյուրը՝ Հերիթիջ Ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2009թ.

Գրաֆիկ 3. ՀՀ տնտեսական ազատությունը 2000-2009թթ. (առանձին տարիների օրինակով)՝ ըստ ենթացուցիչների



Աղյուսակ 3

ՀՀ տնտեսական ազատության վարկանիշի ենթացուցիչների զարգացման դինամիկան նշված տարիների կտրվածքով

Երկիրը	Տարեթիվ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ՀՀ	2009	83,7	86,4	90,0	89,7	77,8	70	70	35	30	66,3
ՀՀ	2006	77,6	80,6	90,0	90,7	80,6	70	70	50	31	65,3
ՀՀ	2005	55	80,0	89,9	88,9	82,0	70	90	50	30,0	62,1
ՀՀ	2003	55	81,2	88,9	84,1	81,7	70	70	50	25,0	-
ՀՀ	2000	55	77,0	79,3	86,8	69,1	50	70	50	30	-

Հավելված

Աղյուսակ 1

Տնտեսական ազատության բաշխումը՝ ըստ ԱՊՀ և ՀՀ հարակից երկրների, %

Ազատ	Հիմնականում ազատ	Միջին ազատ	Հիմնականում ոչ ազատ	Ճնշված
80-100%	*70-79,9%*	*60-69,9%*	*50-59,9%*	*0-49,9%*
	ՀՀ	Վրաստան	Մոլդովա	Ռուսաստան
		Ղրղզստան	Ադրբեջան	Բելառուս
		Թուրքիա	Տաջիկստան	Իրան
		Ղազախստան	Ուզբեկստան	Թուրքմենստան
			Ուկրաինա	

Աղբյուրը՝ http://www.heritage.org/Index/countries.cfm

«Գործարարության» վարկանիշային նախագիծը 2007-2010թթ.[1] World Bank Group, International Finance Corporation

Երկու խոսք կազմակերպության մասին

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը *(International Finance Corporation) «World Bank Group»*-ի անդամ է և տեղակայվում է Վաշինգտոնում: Ֆինանսական ընկերության գործունեությունը հիմնականում կենտրոնացած է զարգացող երկրներում ազատ և մրցունակ շուկայական հարաբերությունների խթանման, ոլորտում ներգրավված ընկերությունների ու մասնավոր սեկտորի աջակցման, աղքատության նվազեցման հիմնախնդիրների վրա: Կազմակերպության անդամ է 179 երկիր, այդ թվում և ՀՀ-ն, Ադրբեջանը և Վրաստանը, որոնք անդամակցել են միևնույն՝ 1995թ.:

«Գործարարության» վարկանիշային նախագիծը

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը, ֆինանսական տարբեր գործառույթներից զատ, *«World Bank Group»*-ի շրջանակներում վարկանիշային հետազոտություններ է իրականացնում տվյալ երկրի գործարարության *(Doing business)* մթնոլորտի լուսաբանման նպատակներով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող այս վարկանիշային հետազոտություններն առաջին

[1] Կազմակերպության 2007 և 2008թթ. վարկանիշային հետազոտությունները հիմնված են համապատասխանաբար 2006 և 2007թթ. տվյալների վրա:

անգամ սկսել են իրականացվել 2004 թվականից: Հաշվետվությունները պատրաստվել են հիմնականում հետևյալ 10 ցուցիչների հիման վրա (նախորդ զեկույցներում, սակայն, կիրառված են ոչ բոլոր ցուցիչները):

- գործարարության ձեռնարկում/ձեռնարկության հիմնում[1],
- լիցենզավորում,
- աշխատուժի վարձակալում,
- սեփականության գրանցում,
- վարկավորում,
- ներդրողների պաշտպանվածություն,
- հարկերի վճարում,
- միջազգային առևտուր,
- պայմանագրերի իրագործում,
- գործարարության ավարտում/ձեռնարկության լուծարում:

Աղյուսակներում ներկայացված են ոչ միայն յուրաքանչյուր ցուցչին վերաբերող վարկանիշները, այլ նաև 10 ցուցիչների ընդհանրացված վարկանիշը (ընդհանուր վարկանիշը կոչվում է «գործարարության հեշտ իրականացում», որը ցույց է տալիս տվյալ երկրի զբաղեցրած դիրքը): Որքան ցածր են տվյալ պետության ենթացուցիչների միավորները, այնքան բարձր է այդ երկրի գործարարության վարկանիշավորման սանդղակը:

Աղյուսակ 1-ում ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ 2007թ. տվյալներով ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում գործարարության իրականացման վարկանիշում առաջատար դիրք է

[1] Ցուցիչը ցույց է տալիս գործարարության պաշտոնական գրանցման համար անհրաժեշտ գործողությունների/միջոցառումների տևողության, ծախսերի ու նվազագույն ներդրումների չափը:

զբաղեցնում (46-րդ դիրք)՝ զիջելով միայն Վրաստանին (36)։ Վրաստանի ու ՀՀ ցուցանիշները, ի տարբերություն ԱՊՀ մնացած պետությունների, ընդհուպ մոտենում են մերձբալթյան երկրներին։ Ավելին, ՀՀ միջազգային վարկանիշը գերազանցում է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրներին, ինչպիսիք են Հունգարիան (51), Բուլղարիան (54), Ռումինիան (55), Հունաստանը (95)։

ՀՀ-ին վարկանիշային ցուցանիշով զգալիորեն զիջում է Ադրբեջանը, որը զբաղեցնում է տվյալ աղյուսակի 97-րդ հորիզոնականը (աղյուսակի միջնամասում)։ Նշենք նաև, որ գործարարության իրականացման 10 ցուցիչներից ՀՀ պարագայում նվազագույն ցուցանիշը պատկանում է հարկերի վճարման ու միջազգային առևտրի ցուցիչներին՝ համապատասխանաբար 137 և 133 միավորներով։ Իսկ լավագույն արդյունքներն արձանագրվել են սեփականության գրանցման (2)[1], ձեռնարկության լուծարման (43), գործարարության ձեռնարկման (44), ինչպես նաև աշխատուժի վարձակալության (48) ցուցիչներում։ ՀՀ արձանագրած 10 ցուցիչները գերազանցում են Ադրբեջանի համապատասխան արդյունքները, բացառությամբ երկու՝ վարկավորման և պայմանագրերի ձևակերպման ցուցիչների։

[1] Սեփականության գրանցման ՀՀ ցուցիչն այդ թվականին համարվում է լավագույնը ԱՊՀ և մերձբալթյան երկրների շարքում։

Աղյուսակ 1

«Գործարարության» վարկանիշը 2007թ., ԱՊՀ և մերձբալթյան երկրներ[1]

երկիր[2]	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	35	39	27	11	36	12	19	14	2	29	21
ՀՀ	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
Ղազախստան	71	48	173	23	71	45	49	44	177	28	103
Ղրղզստան	88	45	150	75	7	62	32	153	176	31	131
Մոլդովա	90	87	157	87	45	94	96	119	118	17	78
Ադրբեջան	97	95	159	79	58	21	105	142	170	30	71
Ռուսաստան	112	45	172	102	44	156	81	126	155	19	81
Բելառուս	123	154	94	44	96	111	120	178	132	16	73
Ուկրաինա	139	105	174	103	134	62	141	177	116	46	139
Ուզբեկստան	145	73	143	68	167	170	105	162	163	48	113
Տաջիկստան	153	171	163	126	40	132	175	153	175	23	102
Մերձբալթյան երկրներ											
Լատվիա	20	25	86	92	83	12	49	38	22	3	62
Լիտվա	24	50	55	125	4	32	81	74	23	18	32
Էստոնիա	18	53	12	156	22	45	32	32	7	31	51

Աղբյուրը՝ http://www.doingbusiness.org/, http://russian.doingbusiness.org/CustomQuery/

[1] Զեկույցում ներառված է 175 երկիր։
[2] Թուրքմենստանը ներկայացված չէ։

Աղյուսակ 2

«Գործարարության» վարկանիշը 2007թ., ՀՀ և հարակից երկրներ

երկիր	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
Վրաստան	35	39	27	11	36	12	19	14	2	29	21
ՀՀ	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
Թուրքիա	65	40	126	138	30	62	62	85	73	36	114
Ադրբեջան	97	95	159	79	58	21	105	142	170	30	71
Ռուսաստան	112	45	172	102	44	156	81	126	155	19	81
Իրան	131	66	158	143	141	62	158	94	129	54	110

Ինչպես պատկերված է *Աղյուսակ 2-ում,* ՀՀ-ին զիջում են նաև մյուս երկու հարևանները՝ Թուրքիան ու Իրանը: Ընդ որում, ի տարբերություն Թուրքիայի, որը զբաղեցնում է 65-րդ դիրքը և գերազանցում է Ադրբեջանին ու Ռուսաստանին, բավական ցածր վարկանիշ է գրանցվել Իրանի պարագայում (131): ՀՀ վարկանիշը գերազանցում է Թուրքիային 4 ցուցիչներում, զիջում 5՝ գործարարության ձեռնարկման, ներդրողների պաշտպանվածության, հարկերի վճարման, միջազգային առևտրի և պայմանագրերի ձևակերպման ցուցիչներում: 5-րդ՝ վարկավորման ցուցիչում արձանագրվել է հավասար 62-ական միավոր:

«Գործարարություն» 2008թ. նախագիծը[1]

Ստորև ներկայացված «Գործարարության» նախագծի 2008թ. հաշվետվությունում ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում կրկին առաջատար դիրք է զբաղեցնում՝ զիջելով միայն Վրաստանին: Նախորդ նախագծի համեմատ 2008թ. հաշվետվությունում ՀՀ վարկանիշը բարելավվել է 7 միավորով, Վրաստանինը՝ 17, իսկ Ադրբեջանինը՝ ընդամենը 1 միավորով: ՀՀ-ն, ինչպես նախորդ տարվա վարկանիշում, պահպանել է առաջատարի դիրքերը հարևան Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի ու Ռուսաստանի նկատմամբ (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 3*): 2007թ. վարկանիշային հաշվետվության համեմատ, ՀՀ վարկանիշի ենթացուցիչներից բարելավվել են 5-րդը (վարկավորում), 8-րդը (միջազգային առևտուր) և 10-րդը (ձեռնարկության լուծարում): ՀՀ-ն իր վարկանիշային արդյունքով գերազանցում է նաև աղյուսակում ներառված Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների ցուցանիշները, ինչպիսիք են Հունգարիան, Բուլղարիան, Ռումինիան և Լեհաստանը:

[1] Զեկույցում ներառված է 178 պետություն:

Աղյուսակ 3

«Գործարարության» վարկանիշը 2008թ.», ԱՊՀ երկրներ[1]

երկիր	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	18	10	11	4	11	48	33	102	64	42	105
ՀՀ	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
Ղազախստան	71	57	173	22	72	48	51	44	178	28	100
Մոլդովա	92	81	153	93	46	97	98	111	122	17	82
Ղրղզստան	94	49	152	74	16	68	33	152	177	32	128
Ադրբեջան	96	64	159	80	56	26	107	141	173	30	75
Ռուսաստան	106	50	177	101	45	84	83	130	155	19	80
Բելառուս	110	119	94	43	94	115	98	178	137	16	69
Ուզբեկստան	138	54	145	67	119	170	107	159	165	48	119
Ուկրաինա	139	109	174	102	138	68	141	177	120	46	140
Տաջիկստան	153	161	166	125	43	135	176	155	176	23	99
Արևելյան/Կենտր. Եվրոպա և մերձբալթյան երկրներ[2]											
Էստոնիա	17	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լատվիա	22	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լիտվա	26	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հունգարիա	45	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բուլղարիա	46	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ռումինիա	48	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լեհաստան	74	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ երկրներ											
Թուրքիա	57	43	128	136	31	68	64	54	56	34	112
Իրան	135	77	164	141	143	68	158	97	135	57	118

[1] Թուրքմենստանը ներկայացված չէ:

[2] 2008թ. զեկույցում Արևելյան Եվրոպայի ու մերձբալթյան երկրների վարկանիշավորման ենթացուցիչների վերաբերյալ կազմակերպության տեղեկատվական շտեմարանում տվյալներ չեն հայտնաբերվել:

Աղյուսակ 4

«Գործարարության» վարկանիշը 2008թ., ՀՀ և հարակից երկրներ

երկիր	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	18	10	11	4	11	48	33	102	64	42	105
ՀՀ	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
Թուրքիա	57	43	128	136	31	68	64	54	56	34	112
Ադրբեջան	96	64	159	80	56	26	107	141	173	30	75
Ռուսաստան	106	50	177	101	45	84	83	130	155	19	80
Իրան	135	77	164	141	143	68	158	97	135	57	118

Աղբյուրը՝ http://russian.doingbusiness.org/

Աղյուսակ 5

«Գործարարության» վարկանիշի դինամիկան 2007-2008թ., Հարավային Կովկաս և Թուրքիա[1]

Ցուցիչ	Վրաստան			ՀՀ			Ադրբեջան			Թուրքիա		
	2008	2007	*փոփոխ.*	2008	2007	*փոփոխ.*	2008	2007	*փոփոխ.*	2008	2007	*փոփոխ.*
Դիրք, ընդհ.	18	35	*17*	39	46	*7*	96	97	*1*	57	65	*8*
1. գործարար.ձեռնարկում	10	39	*29*	47	44	*-3*	64	95	*31*	43	40	*-3*
2. լիցենզավորում	11	27	*16*	73	72	*-1*	159	159	*0*	128	126	*-2*
3. աշխատուժի վարձակ.	4	4	*0*	48	48	*0*	80	79	*-1*	136	138	*2*
4. սեփականութ. գրանցում	11	18	*7*	2	2	*0*	56	58	*2*	31	30	*-1*
5. վարկավորում	48	62	*14*	36	62	*26*	26	21	*-5*	68	62	*-6*
6. ներդրողի պաշտպանվ.	33	120	*87*	83	81	*-2*	107	105	*-2*	64	62	*-2*
7. հարկերի վճարում	102	103	*1*	143	137	*-6*	141	142	*1*	54	85	*31*
8. միջազգային առևտուր	64	59	*-5*	118	133	*15*	173	170	*-3*	56	73	*17*
9. պայմանագրի իրագործ.	42	42	*0*	64	64	*0*	30	30	*0*	34	36	*2*
10. ձեռնարկ. լուծարում	105	87	*-18*	42	43	*1*	75	71	*-4*	112	114	*2*

Աղբյուրը՝ http://rru.worldbank.org/businessplanet/

[1] Աղյուսակում նշված յուրաքանչյուր ցուցչի թիվը ցույց է տալիս տվյալ երկրի զբաղեցրած դիրքն այլ երկրների շարքում. յուրաքանչյուր ցուցչի համար լավագույն ցուցանիշը 1-ն է, վատագույնը՝ 178-ը:

«Գործարարության» վարկանիշը 2009-2010թթ., ՀՀ-ն այլ երկրների շարքում

2008թ. համեմատությամբ հաջորդ՝ 2009թ. վարկանիշային հետազոտությունում ՀՀ ցուցանիշը բավական կտրուկ հետընթաց է արձանագրել՝ 39-րդից անցնելով 50-րդ հորիզոնական: Ի տարբերություն ՀՀ-ի, ԱՊՀ երկրներից թռիչքային կերպով արդյունքը բարելավել է Ադրբեջանը, որ եթե նախորդ զեկույցում զբաղեցնում էր 96-րդ դիրքը, ապա 2009թ. հաշվետվությունում բարելավել է ցուցանիշը շուրջ 2,5 անգամ (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 6*): Արդյունքում՝ ԱՊՀ երկրների շարքում Ադրբեջանը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն Վրաստանին: 2008թ. համադրությամբ Ադրբեջանն առաջընթաց է արձանագրել 8 ենթացուցիչների, հետընթաց միայն երկուսի՝ 8-րդ և 10-րդ ենթացուցիչների պարագայում: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա վերջինս 2008թ. համեմատ միայն 9-րդ՝ պայմանագրերի իրագործման ենթացուցչով է բարելավել դիրքը, մնացած բոլոր 9 ենթացուցիչների դեպքում նկատվել է բացասական միտում: «Գործարարության» 2009թ. վարկանիշային զեկույցում ԱՊՀ երկրների շարքում, ինչպես արդեն նշվեց, անհամեմատ բարձր ցուցանիշ է գրանցել Վրաստանը, որն իր վարկանիշով գերազանցել է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան, Բուլղարիան կամ Ռումինիան, ինչպես նաև մերձբալթյան երեք երկրների ցուցանիշները:

Աղյուսակ 6

«Գործարարություն» 2009, ՀՀ և այլ երկրներ[1]

երկիր	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	16	5	9	10	2	27	38	112	85	42	95
Ադրբեջան	38	11	155	62	9	12	19	103	176	25	84
ՀՀ	50	65	75	57	6	41	88	151	136	61	49
Ղազախստան	64	79	177	33	26	41	53	61	182	37	54
Ղրղզստան	80	34	59	76	52	59	11	156	183	57	139
Բելառուս	82	98	63	40	13	109	105	183	134	14	74
Մոլդովա	108	90	159	140	51	84	105	125	140	15	91
Ռուսաստան	118	88	182	104	49	109	88	108	160	19	92
Ուզբեկստան	145	71	148	91	130	131	114	164	174	45	124
Ուկրաինա	146	126	181	90	144	27	143	182	139	46	145
Տաջիկստան	164	169	180	142	47	165	151	161	179	41	100
Արևելյան/Կենտր. Եվրոպայի երկրներ											
Հունգարիա	41	29	89	75	57	27	114	114	71	11	58
Բուլղարիա	42	81	117	46	58	4	38	97	105	87	78
Ռումինիա	45	30	87	110	112	12	38	148	43	30	88
Լեհաստան	72	145	157	69	86	27	38	147	41	71	85
Մերձբալթյան երկրներ											
Էստոնիա	22	23	19	159	24	41	53	39	3	29	61
Լիտվա	25	77	64	115	4	41	88	59	29	17	36
Լատվիա	30	35	78	125	79	12	53	37	17	2	89
Այլ երկրներ											
Թուրքիա	63	44	133	143	33	68	53	70	65	26	120
Իրան	142	73	162	137	152	109	164	107	132	54	109

[1] Զեկույցում ներառված է 183 երկիր:

Ինչ վերաբերում է 2010թ. վարկանիշային զեկույցին, ապա ՀՀ-ն վարկանիշը նախորդ հաշվետվության համեմատ թեև բարելավել է, սակայն շարունակում է զիջել հարևան երկու հանրապետություններին: Արդյունքը զգալիորեն բարձրացրել է նաև Ղրղզստանը՝ ոչ մեծ տարբերությամբ առաջ անցնելով ՀՀ-ից: 2010թ. զեկույցում հարավկովկասյան հանրապետություններից ցուցանիշի բարելավում նկատվել է նաև Վրաստանի պարագայում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինս պահպանել է նախորդ զեկույցում արձանագրված ցուցանիշը (38-րդ դիրքը): ՀՀ-ն գերազանցել է Արևելա-Կենտրոնական Եվրոպայի երկրներից Բուլղարիային, Հունգարիային, Ռումինիային և Լեհաստանին, սակայն զգալի տարբերությամբ զիջել մերձբալթյան երեք հանրապետությունների ցուցանիշներին (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 7*):

«Գործարարության» 2009-2010թթ. վարկանիշային զեկույցում ՀՀ ցուցանիշի հետընթացը, թերևս, պայմանավորված է երկրի տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ: Նույն տրամաբանությունն է նաև Ադրբեջանի պարագայում, որը հիմնականում նավթագազային պաշարներից ստացված եկամուտների շնորհիվ է կարողացել որոշակիորեն մեղմել ճգնաժամի ազդեցության հետևանքները:

Աղյուսակ 7

«Գործարարություն» 2010թ.», ՀՀ և այլ երկրներ[1]

երկիր	դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	11	5	7	9	2	30	41	64	30	41	95
Ադրբեջան	38	17	158	33	9	15	20	108	177	26	84
Ղրղզստան	41	14	40	47	19	15	12	156	154	54	140
ՀՀ	43	21	72	62	5	43	93	153	102	62	49
Բելառուս	58	7	44	32	10	113	109	183	129	12	74
Ղազախստան	63	82	143	38	31	43	57	52	182	34	54
Մոլդովա	94	77	161	141	17	87	109	101	140	22	90
Ռուսաստան	120	106	182	109	45	87	93	103	162	19	92
Ուկրաինա	142	134	181	83	141	30	109	181	139	43	145
Ուզբեկստան	150	92	142	95	133	135	119	178	174	44	125
Տաջիկստան	152	143	177	143	78	167	73	162	179	39	100
Արևելյան/Կենտր. Եվրոպայի երկրներ											
Բուլղարիա	44	50	119	53	56	4	41	95	106	87	78
Հունգարիա	47	39	88	77	61	30	119	122	70	14	58
Ռումինիա	55	42	91	113	92	15	41	149	46	55	91
Լեհաստան	72	117	164	76	88	15	41	151	42	75	85
Մերձբալթյան երկրներ											
Էստոնիա	24	37	20	161	13	43	57	38	3	49	61
Լիտվա	26	99	64	119	4	43	93	51	28	17	36
Լատվիա	27	51	78	128	58	4	57	45	22	15	88
Այլ երկրներ											
Թուրքիա	73	56	133	145	36	71	57	75	67	27	121
Իրան	137	48	141	137	153	113	165	117	134	53	109

[1] 2010թ. զեկույցում ընդգրկված է 183 երկիր:

Աղյուսակ 8

ՀՀ վարկանիշի ենթացուցիչների դինամիկայի ընդհանուր պատկերը 2007-2010թթ.

Տարի	դիրքը, ընդհ.	*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
2007	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
2008	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
2009	50	65	75	57	6	41	88	151	136	61	49
2010	43	21	72	62	5	43	93	153	102	62	49

«Կոռուպցիայի ինդեքսը 2000-2009թթ.»

«Թրանսփերընսի ինթերնեյշնըլ» (ԹԻ, *Transparency International)* շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, հիմնադրվել է 1993թ., գրասենյակները տեղակայված են 87 երկրում: Կազմակերպության քարտուղարությունը Գերմանիայում է (Բեռլին): «Թրանսփերընսի ինթերնեյշնըլ» կազմակերպության առաքելությունն ուղղված է միասնական կամ համաշխարհային հակակոռուպցիոն համակարգի ստեղծմանն ու զարգացմանը, որն իր հերթին ենթադրում է 3 հիմնական խնդիրների առաջադրում և լուծում՝

- *քաղաքացիների հակակոռուպցիոն աշխարհայացքի ձևավորում,*
- *թափանցիկության ինստիտուցիոնալացում,*
- *կոռուպցիայի կանխում՝ հակակոռուպցիոն մեխանիզմների*
- *ապահովման միջոցով:*

Կոռուպցիայի դեմ պայքարում կազմակերպության հռչակած և մինչ օրս գործող հինգ հիմնական գերակայություններն են՝

- *կոռուպցիան քաղաքականությունում,*
- *կոռուպցիան հասարակությունում,*
- *կոռուպցիան մասնավոր սեկտորում,*
- *միջազգային հակակոռուպցիոն պայմանագրեր,*
- *աղքատություն և զարգացում:*

«Թրանսփերընսի ինթերնեյշնըլ»-ը մի քանի ձևաչափերով ներկայացնում է տարեկան հաշվետվություններ ու զեկույցներ՝ նվիրված աշխարհում կոռուպցիայի վարկանիշային գնահատումներին: Տեղին է նշել *«Global Corruption Barometer» (GCB)* հետազոտություն-նախագիծը, որը նախաձեռնվել է 2003թ.: Նախագծի նպատակն է ամփոփել աշխարհում կոռուպցիայի նկատմամբ հասարակական ընկալումների գնահատումն ու վարկանիշավորումը: Համեմատականներ են անցկացվում կոռուպցիայի ցածր և բարձր մակարդակների, կոռուպցիայի և հասարակության այլ հիմնախնդիրների միջև, գնահատվում այն եզրը, որտեղ պետական կամ մասնավոր ինստիտուտներն ու կառույցները կարող են դիտվել որպես կոռումպացված: Նախագծի շրջանակներում վարկանիշային վերլուծություններ են իրականացվում նաև կաշառք տալու հարցում առկա հասարակական փորձառության, ինչպես նաև կոռուպցիայի զարգացման շուրջ հասարակական ակնկալիքների (կանխատեսումների) վերաբերյալ[1]:

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2008թ., ՀՀ վարկանիշը

ԹԻ կոռուպցիայի ոլորտում իրականացրած փորձագիտական-վարկանիշային գործունեությունից անհրաժեշտ է առանձնացնել «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» (ԿԸԻ) *(Corruption perceptions index)* հաշվետվությունը, որը նախաձեռնվել է 1995 թվականին: ԿԸԻ հետազոտություններում հիմնական ուշադրությունը դարձվում է պետական սեկտորում կոռուպցիոն ռիսկերի ու վարկանիշների վրա: ԿԸԻ տարեկան զեկույցների պատրաստման ժամանակ կիրառվում են նաև տարբեր միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների ու

[1] Նախագծում ներառված չեն հարավկովկասյան երկրները, և դրանց հաշվետվության արդյունքներն ու վերլուծությունները չեն ներկայացվում:

անկախ ինստիտուտների ուսումնասիրությունները (Կոլումբիայի համալսարան, *«Freedom House», «Economist Intelligence Unit»*, Համաշխարհային տնտեսական ֆորում և այլն)։

Ստորև կանդրադառնանք «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» 2008թ. տարեկան զեկույցում ՀՀ վարկանիշի լուսաբանմանը՝ վերջինիս ցուցանիշները համեմատելով ինչպես մեր տարածաշրջանի ու ԱՊՀ անդամ երկրների, այնպես էլ Արևելա-Կենտրոնական Եվրոպայի պետությունների համապատասխան վիճակագրության հետ։ Զեկույցում կիրառված մեթոդաբանությունում առանձնացվում է երկու չափորոշիչ՝ երկրների զբաղեցրած դիրքը և վարկանիշային ցուցիչը։ Ի դեպ, երկրների վարկանիշավորման ցուցիչներն ունեն 10-0 սահմանային ընդգրկում, որտեղ 10 միավորը համարվում է կոռուպցիայի ցածր մակարդակ կամ կոռուպցիան բացակայում է, իսկ 0 միավորը՝ կոռուպցիոն ինդեքսի բարձրացում, այն է՝ ամենացածր միավորներ ունեցող երկրները համարվում են առավել կոռումպացված։

Եվ այսպես, 2008թ. հրատարակված «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» վիճակագրությունում ՀՀ ցուցանիշն առաջատար դիրք է զբաղեցրել ԱՊՀ երկրների շարքում։ Կազմակերպության վարկանիշային տվյալների համաձայն, ԱՊՀ երկրների ցանկում լավագույն արդյունքը Վրաստանինն է՝ զեկույցում ներառված 180 երկրների շարքում 67-րդը՝ 3,9 միավոր։ Ի դեպ, Վրաստանի վարկանիշային ցուցանիշը գերազանցում է նաև Ռումինիայի ու Բուլղարիայի համապատասխան արդյունքներին։ Վրաստանին բավական զգալի դիրքային տարբերությամբ հաջորդում է ՀՀ-ն, որը 2,9 վարկանիշային միավորով զբաղեցնում է 109-րդ դիրքը։ ՀՀ-ին կրկին զգալի դիրքային տարբերությամբ զիջում են Մոլդովայի (109-րդ դիրք), Ուկրաինայի (134) վարկանիշները։ ԱՊՀ անդամ պետություններից ամենացածր ցուցանիշները պատկանում են Ղրղզստանին, Թուրքմենստանին և Ուզբեկստանին, որոնք հաշվետվությունում

ներառված 180 երկրների շարքում կիսում են միևնույն՝ 166-րդ դիրքը): Վերջիններիս ցածր ցուցանիշով անմիջապես հաջորդում է Ադրբեջանը՝ 158-րդ դիրք:

Աղյուսակ 1

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2008թ., ՀՀ դիրքը ԱՊՀ և առանձնացված այլ երկրների շարքում

Երկիրը	Դիրքը	2008թ. ԿԸԻ ցուցանիշը
Արևելյան/Կենտրոնական Եվրոպա, մերձբալթյան երկրներ		
Ավստրիա	12	8.1
Էստոնիա	27	6.6
Չեխիա	45	5.2
Հունգարիա	47	5.1
Լատվիա	52	5.0
Հունաստան	57	4.7
Լիտվա	58	4.6
Լեհաստան	58	4.6
Ռումինիա	70	3.8
Բուլղարիա	72	3.6
ԱՊՀ երկրներ		
Վրաստան	67	3.9
ՀՀ	109	2.9
Մոլդովա	109	2.9
Ուկրաինա	134	2.5
Ղազախստան	145	2.2
Ռուսաստան	147	2.1
Տաջիկստան	151	2.0
Բելառուս	151	2.0
Ադրբեջան	158	1.9
Ուզբեկստան	166	1.8
Թուրքմենստան	166	1.8
Ղրղզստան	166	1.8
Այլ երկրներ		
Թուրքիա	58	4.6
Իրան	141	2.3

Ստորև ներկայացված գրաֆիկի միջոցով կարող ենք ծանոթանալ 2008թ. ՀՀ վարկանիշին ու նրա զբաղեցրած դիրքին այս անգամ ոչ միայն ԱՊՀ ու Արևելյան Եվրոպայի երկրների, այլև զեկույցում ներառված 180 երկրների համատեքստում՝ առանձնացված պետությունների ներկայացման պայմանով: Նման վիճակագրության պատրաստումը հնարավորություն է տալիս առավել ընդլայնված պատկերացում կազմել այլ երկրների շարքում ՀՀ վարկանիշի վերաբերյալ ընդհանրապես:

Գրաֆիկ 1. ՀՀ դիրքը այլ երկրների շարքում, 2008թ.



ՀՀ վարկանիշի զարգացման դինամիկան 2000-2008թթ., ԱՊՀ երկրներ

ԿԸԻ 2000-2008թթ. զեկույցներում ԱՊՀ երկրների շարքում ՀՀ-ն մշտապես և կայուն կերպով առանձնացել է բարձր ցուցանիշներով՝ առաջատար դիրքեր զբաղեցնելով նշված հանրապետությունների ցուցակում[1]: Սակայն ՀՀ վարկանիշային ցուցանիշը համեմատաբար ցածր է մասնավորապես 2000թ. հաշվետվությունում. միջին դիրք: 2003-2004թթ. ՀՀ վարկանիշային դիրքն (78-րդ և 82-րդ դիրք) առաջատար է ԱՊՀ երկրների շարքում և երկու զեկույցներում էլ զիջում է միայն Բելառուսին (53 և 74): Ինչ վերաբերում է հաջորդ՝ 2005թ., ապա այստեղ ՀՀ-ն լավագույն դիրքն այս անգամ կիսում է Մոլդովայի հետ (զբաղեցնում են միևնույն՝ 88-րդ դիրքը, 2,9-ական միավոր): Պետք է նկատել, սակայն, որ արդեն 2006թ. Մոլդովան առաջ է անցնում ՀՀ-ից. վերջինս 2,9 միավորով ԱՊՀ անդամ պետությունների շարքում զբաղեցնում է երկրորդ դիրքը:

Ինչ վերաբերում է կազմակերպության հաջորդ՝ 2007-2008թթ. տարեկան վարկանիշային հաշվետվություններին, ապա այստեղ ԱՊՀ անդամ երկրների ցուցակում ՀՀ վարկանիշը զիջում է միայն Վրաստանի համապատասխան արդյունքին, որը նշված ժամանակահատվածում կտրուկ բարելավվել է: Այսպես, 2007թ. ՀՀ-ն 3 միավորով զբաղեցնում էր 99-րդ դիրքը (Վրաստանը՝ 79-րդ), իսկ հաջորդ՝ 2008թ. ՀՀ վարկանիշը հետընթաց է ունեցել՝ 2,9 միավոր՝ զբաղեցնելով 109-րդ դիրքը: Այն դեպքում, երբ Վրաստանի վարկանիշային դիրքը 67-րդն էր՝ 3,9 միավորով:

[1] ՀՀ-ն կազմակերպության 2001-2002թթ. տարեկան հաշվետվություններում ներկայացված երկրների շարքում չի ընդգրկված, ինչը, կազմակերպության ղեկավարության տեղեկություններով, պայմանավորված է բավարար տեղեկատվության բացակայությամբ:

Աղյուսակ 2

Կոռուպցիայի մակարդակը ԱՊՀ երկրներում 2000-2008թթ.

Երկիր	2000 (90)*		2001 (91)		2002 (102)		2003 (133)		2004 (145)		2005 (158)		2006 (163)		2007 (179)		2008 (180)	
	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ
ՀՀ	76	2.5	-	-	-	-	78	3	82	3.1	88	2.9	93	2.9	99	3.0	109	2,9
Ադրբեջան	87	1.5	84	2	95	2	124	1,8	140	1.9	137	2.2	130	2.4	150	2.1	158	1,9
Վրաստան	84	2.3	-	-	85	2.4	124	1,8	133	2	130	2.3	99	2.8	79	3.4	67	3,9
Ռուսաստան	82	2.1	79	2.3	71	2.7	86	2,7	90	2.8	126	2.4	121	2.5	143	2.3	147	2,1
Ուկրաինա	87	1,5	83	2,1	85	2,4	106	2,3	122	2,2	107	2,6	99	2,8	118	2,7	134	2,5
Բելառուս	43	4,1	-	-	36	4,8	53	4,2	74	3,3	107	2,6	151	2,1	150	2,1	151	2
Մոլդովա	74	2,6	63	3,1	93	2,1	100	2,4	114	2,3	88	2,9	79	3,2	111	2,8	109	2,9
Ղազախստան	65	3,0	71	2,7	88	2,3	100	2,4	122	2,2	107	2,6	111	2,6	150	2,1	145	2,2
Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	155	1,8	142	2,2	162	2	166	1,8
Ղրղզստան	-	-	-	-	-	-	118	2,1	-	-	-	-	142	2,2	150	2,1	166	1,8
Ուզբեկստան	79	2,4	71	2,7	68	2,9	100	2,4	114	2,3	137	2,2	151	2,1	175	1,7	166	1,8
Տաջիկստան	-	-	-	-	-	-	124	1,8	133	2	144	2,1	142	2,2	150	2,1	151	2
Թուրքիա	50	3,8	54	3.6	64	3.2	77	3,1	77	3.2	65	3.5	60	3.8	64	4.1	58	4,6

* *Փակագծերում նշվում է ընդգրկված երկրների թիվը:*
Գունային տարբերակմամբ նշված են տարեկան զեկույցներում ԱՊՀ անդամ երկրների լավագույն դիրքային ցուցանիշները:

ՀՀ վարկանիշի զարգացման դինամիկան 2000-2008թթ., Հարավային Կովկաս

Եթե ՀՀ վարկանիշի զարգացման դինամիկային անդրադառնանք Հարավային Կովկասի երկրների առանձնացման համատեքստում, կպարզվի, որ 2000-2006թթ. ՀՀ վարկանիշը մշտապես և զգալիորեն գերազանցել է տարածաշրջանի մյուս երկու հանրապետությունների արդյունքները: Չնայած 2001-2002թթ. տարեկան զեկույցներում բացակայում են ՀՀ-ին վերաբերող վարկանիշային ցուցանիշները, այնուհանդերձ, հաշվի առնելով տարածաշրջանի երեք հանրապետությունների վարկանիշների զարգացման ընդհանուր տրամաբանությունը՝ ՀՀ 2001-2002թթ. ենթադրվող ցուցանիշները նույնպես չէին կարող չգերազանցել հարևան երկրների արդյունքները: Ինչ վերաբերում է 2007-2008թթ., ապա այս ժամանակահատվածում մեր տարածաշրջանի երկրներից ՀՀ-ն զիջել է միայն Վրաստանի վարկանիշին, ինչը պայմանավորված է, մի կողմից, Վրաստանի դիրքերի կտրուկ բարելավմամբ, մյուս կողմից՝ ՀՀ վարկանիշային արդյունքների նվազման միտումով:

2003թ. սկսած՝ ՀՀ վարկանիշային ցուցանիշները, կազմակերպության տարեկան հաշվետվություններում ներառված երկրների թվաքանակի տարեկան ավելացման համատեքստում, ոչ միայն չեն պահպանվել կամ բարելավվել, այլև կայուն նվազման միտում են ունեցել (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 2*): Առավել ակնհայտ է եղել ՀՀ վարկանիշային արդյունքի նվազումը 2008թ., որը նախորդ՝ 2007թ. ցուցանիշի համեմատ ունեցել է 10 դիրքային միավորի անկում: Եվ սա՝ այն պարագայում, երբ 2007-ի համեմատ 2008թ. զեկույցում ընդգրկված երկրների թվաքանակն ավելացել է մեկով: Վրաստանի վարկանիշը, ընդհակառակը, 2004թ. սկսած կայուն բարելավման միտում է արձանագրել (*մանրամասն տե՛ս Գրաֆիկ 2*): Ինչ

վերաբերում է Ադրբեջանին, ապա եթե նրա վարկանիշը 2004-2006թթ. կայուն կերպով բարելավվել է, ապա հաջորդ տարիներին, ընդհակառակը, այդ ցուցանիշները վատթարացել են: Դա է հաստատում այդ հանրապետության վարկանիշային միավորների զարգացման դինամիկան նշված ժամանակաշրջանում:

Գրաֆիկ 2. Հարավային Կովկասի երկրների վարկանիշների զարգացման դինամիկան 2003-2008թթ. (բարձրագույն միավորը վկայում է երկրում կոռուպցիայի բարձր դրսևորման մասին)



Ծանոթ. փակագծերում նշվում է ընդգրկված երկրների թիվը:

Կոռուպցիայի ինդեքսը 2009թ.

2009թ. նոյեմբերին հրապարակվեց նաև կազմակերպության հերթական՝ 2009թ. տարեկան զեկույցը, որը նույնպես կներկայացնենք նախորդ տարվա վարկանիշային հաշվետվության համադրությամբ: Այսպես, 2009թ. վարկանիշային զեկույցում ներառված 180 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցնում է 120-րդ դիրքը, ինչը 2008թ. հաշվետվության համեմատ ցածր արդյունք է: Եթե 2008թ. ՀՀ-ն զբաղեցնում էր ԱՊՀ երկրների շարքում երկրորդ հորիզոնականը (2,9 միավոր), ապա 2009թ. զեկույցում՝ երրորդ դիրքը՝ 2,7 միավորով: ԱՊՀ երկրներից նախորդ տարեկան զեկույցի համեմատ ցուցանիշները բարելավել են Վրաստանը՝ 67-րդի փոխարեն 66-րդ դիրք, Մոլդովան՝ 109-րդ դիրքից 89-րդը, Ղազախստանը (145-ի փոխարեն 120) և մնացյալ բոլոր երկրները, բացառությամբ ՀՀ-ի, Ուկրաինայի և միջինասիական երեք հանրապետությունների՝ Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի:

Աղյուսակ 3

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2009թ.,
ՀՀ դիրքը ԱՊՀ և այլ երկրների շարքում

Երկիրը	Դիրքը	2009թ. ԿՐԻ ցուցանիշը
Արևելյան/Կենտրոնական Եվրոպա, մերձբալթյան երկրներ		
Էստոնիա	27	6,6
Հունգարիա	46	5,1
Լեհաստան	49	5
Լիտվա	52	4,9
Չեխիա	52	4,9
Լատվիա	56	4,5
Հունաստան	71	3,8
Ռումինիա	71	3,8
Բուլղարիա	71	3,8
ԱՊՀ երկրներ		
Վրաստան	66	4,1
Մոլդովա	89	3,3
ՀՀ	120	2,7
Ղազախստան	120	2,7
Բելառուս	139	2,4
Ադրբեջան	143	2,3
Ուկրաինա	146	2,2
Ռուսաստան	146	2,2
Տաջիկստան	158	2
Ղրղզստան	162	1,9
Թուրքմենստան	168	1,8
Ուզբեկստան	174	1,7
Այլ երկրներ		
Թուրքիա	61	4,4
Իրան	168	1,8

Բերթելսմանի հիմնադրամ. «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը» 2008թ.

Բերթելսմանի հիմնադրամը ստեղծվել է 1977թ. Գերմանիայում, Ռեյհարդ Մոհնի կողմից և ներկայում այդ երկրի խոշորագույն հիմնադրամն է: Մինչև վերջին տարիներն իրականացրել է 700 նախագիծ, որոնց հատկացվել է շուրջ €660 մլն: 2005թ. ֆինանսական տարում Բերթելսմանի հիմնադրամի բյուջեն շուրջ €57 մլն էր:

Հիմնադրամն իր գործունեությունը հիմնականում ուղղում է տարբեր հասարակություններում սոցիալական բարեփոխումների նախաձեռնություններին: Սոցիալական դրական տեղաշարժերի արդյունավետության ապահովման նպատակով հիմնադրամը համագործակցում է մասնագիտացված ինստիտուտների ու կազմակերպությունների, պետական կառույցների հետ, աջակցում պետական պատասխանատուներին որոշումների կայացման հարցում: Այս տեսանկյունից հիմնադրամը ներկայանում է թե՛ որպես «ուղեղային կենտրոն», թե՛ սոցիալական բարեփոխումների գործակալություն: Հիմնադրամի շրջանակներում իրականացվող նախագծերը վերաբերում են ինչպես կրթական, առողջապահական, մշակութային, այնպես էլ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, կառավարման հիմնահարցերին թե՛ Գերմանիայում, թե՛ Եվրոպայում ընդհանրապես ու նրա սահմաններից դուրս:

Քաղաքականության հիմնահարցերի կարգավորմանը միտված նախագծի շրջանակներում, ի թիվս ժողովրդագրական բարեփոխումների, արդի կառավարման, ֆեդերալիզմի, ժողովրդա-

վարության ու ինտեգրման, ինչպես նաև «*Եվրոպա*» անվանումը կրող ծրագրերի, հիմնադրամի ղեկավարությունը զգալի կարևորություն է տալիս միջազգային քաղաքականության ծրագրին: Վերջինս ներառում է մի քանի ենթածրագիր՝

- Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքս
- Հրեական հասարակություն
- Մերձավոր Արևելք
- Անվտանգության քաղաքականություն
- Բերթելսմանի միջազգային ֆորում-2006
- Բերթելսմանի բարեփոխումների ինդեքս:

Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը»

Անդրադառնանք առաջին ենթածրագրի՝ «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքս» (ԲՏԻ) վարկանիշային վերլուծության հարցերին: Վարկանիշային հետազոտությունը գլոբալ վարկանիշավորման նախագիծ է, որը վերլուծում ու գնահատում է 125 զարգացող և անցումային երկրների զարգացման և տրանսֆորմացիոն գործընթացները (քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն, շուկայական տնտեսություն, քաղաքական-պետական կառավարման հարցեր և այլն): Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը ենթադրում է վարկանիշավորման երկու հիմնական ուղղություն՝ ա. «քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքս *(Status index)* և բ. «ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը» ինդեքս *(Management index)*:

ա. «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքսը (Status index)

Աղյուսակ 3-ում տրվում է ԲՏԻ 2008թ., «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքսի վարկանիշային վիճակագրությունը, որտեղ քաղաքական և տնտեսական տրանֆորմացիաների վարկանիշային ցուցիչները նախ տրվում են առանձնացված, իսկ հետո՝ ամփոփ, ընդհանուր ցուցանիշով: Նշենք նաև, որ քաղաքական տրանֆորմացիաների վարկանիշի ձևավորման համար կիրառվել են հինգ, իսկ տնտեսական տրանսֆորմացիաների համար՝ յոթ չափորոշիչներ (*Աղյուսակ 1*): Նախագծում ընդգրկված երկրների քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների վարկանիշների աստիճանավորումը սահմանվում է 10-1 թվային դասակարգման միջոցով, որտեղ 10-ը համարվում է լավագույն, 1-ը՝ վատագույն ցուցանիշը: Ընդգրկված երկրները դասակարգված են նաև ըստ վարկանիշային աստիճանակարգման (օր.՝ լավագույն ցուցիչներ ունեցող, ամենաառաջատար, սահմանափակ և այլն. տե՛ս *Աղյուսակ 2*):

Աղյուսակ 1

Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների չափորոշիչները, 2008թ.

Քաղաքական տրանսֆորմացիա	*Տնտեսական տրանսֆորմացիա*
1. պետականակենտրոնություն/stateness	1. սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ
2. քաղաքական մասնակցություն	2. շուկայի և մրցակցության կազմակերպում
3. օրենքի գերակայություն	3. արժույթ և գնային կայունություն
4. ժողովրդավարական ինստիտուտների կայունություն	4. մասնավոր սեփականություն
5. քաղաքական և սոցիալական ինտեգրացիա	5. սոցիալական բարեկեցություն/welfare regime
	6. տնտեսական բնութագիր
	7. կայունություն, կայուն զարգացում/sustainability

Աղյուսակ 2

Ընդգրկված երկրների վարկանիշային աստիճանակարգումը, փակագծերում նշվում է 2008թ. երկրի գրաղեցրած դիրքը

Վարկանիշային աստիճանակարգում	*թվային սանդղակ*
Լավագույն	9,56-9,14 (1-7)
Ամենաառաջատար	8,99-7,52 (8-22)
Առաջատար	7,47-6,15 (23-51)
Սահմանափակված	6,14-4,78 (52-83)
Շատ սահմանափակված	4,72-3,39 (84-113)
Ձախողված	3,39-1,36 (113-125)

Վարկանիշային վերլուծությունում ներկայացված «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» նախագծում առանձնացվում են Արևելա-Կենտրոնական Եվրոպայի, մերձբալթյան, ԱՊՀ և այլ երկրները, որոնց ամփոփ ցուցանիշները համադրելի են ՀՀ վարկանիշի հետ: Բացի այդ երկրներից, աղյուսակում բերվում են նաև ՀՀ հարևան մյուս երկրների՝ Թուրքիայի ու Իրանի վարկանիշային արդյունքները:

Այսպես, *Աղյուսակ 3-ում* ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ ԱՊՀ երկրներից լավագույն ամփոփ ցուցանիշներն ունեն Ուկրաինան (6,93 միավոր), Վրաստանը (6,60) և ՀՀ-ն (6,41), որոնք տեղակայվել են երրորդ՝ *առաջատար* երկրների վարկանիշային աստիճանակարգում (ի դեպ, այստեղ է գտնվում նաև Թուրքիան): Վերջիններիս հաջորդում են Ռուսաստանը, Մոլդովան, Ղրղզստանն ու Ղազախստանը, որոնք տեղակայվում են չորրորդ՝ *սահմանափակված* վարկանիշային աստիճանակարգում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինս նախավերջին՝ *շատ սահմանափակված* երկրների վարկանիշային աստիճանակարգում է՝ Չինաստանի, Բելառուսի, Իրանի, Տաջիկստանի հետ միասին:

Հետաքրքիր վիճակագրություն է ստացվում առանձնացված երկրների 2008 և 2006թթ. վարկանիշային արդյունքների համադրությունից: ԱՊՀ երկրներից 2006թ. համեմատ 2008թ. վարկանիշով կտրուկ աճ է արձանագրել Վրաստանը՝ 61-րդ դիրքից բարձրանալով 38: Իսկ ՀՀ պարագայում (նաև՝ Մոլդովայի, Ղրղզստանի), թեև վարկանիշը նշված ժամանակահատվածում կրկին դրական միտում է ունեցել, սակայն ոչ կտրուկ տարբերությամբ. եթե 2006թ. ՀՀ-ն զբաղեցնում էր 44-րդ դիրքը, 2008թ.՝ արդեն 41-րդն էր: 2006թ. համեմատությամբ 2008թ. վարկանիշներում ԱՊՀ երկրներից բացասական միտում է արձանագրվել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի ու Ադրբեջանի, իսկ Կենտրոնական Ասիայի երկրներից՝

Ղազախստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի ու Ուզբեկստանի պարագայում:

Բացի նշված երկրների ամփոփ ցուցանիշները ներկայացնելուց, հարկ ենք համարում անդրադառնալ նաև մասնակի՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տրանսֆորմացիայի արդյունքներին՝ ըստ առանձնացված երկրների վարկանիշների համադրության: 2008թ. դրությամբ ԱՊՀ երկրների շարքում տնտեսական տրանսֆորմացիայի ցուցիչով բարձրագույն վարկանիշային արդյունքն արձանագրվել է ՀՀ-ի ու Ղազախստանի պարագայում, որոնց վարկանիշները հավասար են եղել՝ 6,82-ական միավոր: Վերջիններիս տնտեսական տրանսֆորմացիայի բարձր ցուցիչով հաջորդում են Ռուսաստանը (6,54), Ուկրաինան (6,50) և Վրաստանը (6,36): Այս ցուցչի արդյունքներով ԱՊՀ երկրներին գերազանցում է Թուրքիայի վարկանիշային արդյունքը՝ 7,29 միավոր: Ինչ վերաբերում է մյուս՝ քաղաքական տրանսֆորմացիայի ցուցչին, նշենք, որ ԱՊՀ երկրների շարքում այս ցուցչի բարձրագույն արդյունքը պատկանում է Ուկրաինային (7,35 միավոր), որին հաջորդում են Վրաստանն ու Մոլդովան՝ 6,85-ական միավոր, ինչպես նաև ՀՀ-ն (6,00): Նշենք, որ 2008թ. Ուկրաինայի ու Վրաստանի առավելությունը ՀՀ-ի նկատմամբ հիմնականում պայմանավորված է քաղաքական տրանսֆորմացիայի ցուցչով ոչ թե նրանց բարձր, այլ ՀՀ ունեցած ցածր արդյունքներով:

Աղյուսակ 3

ԲՏԻ 2008թ., «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքս (Status index), առանձնացված երկրներ

2006թ. դիրքը	2008թ. դիրքը	երկիրը	տնտեսական տրանսֆորմացիայի ցուցիչը	քաղաքական տրանսֆորմացիայի ցուցիչը	Ամփոփ ցուցիչ
3	1	Չեխիա	9,57	9,55	**9,55**
1	2	Սլովենիա	9.29	9,70	**9,49**
2	3	Էստոնիա	9,29	9,55	**9,42**
4	4	Թայվան	9,21	9,45	**9,33**
5	5	Հունգարիա	9,00	9,35	**9,18**
7	6	Լիտվա	8,96	9,35	**9,16**
6	7	Սլովակիա	9,07	9,20	**9,14**
9	11	Լեհաստան	8,71	8,80	**8,76**
14	13	Լատվիա	8,50	8,70	**8,60**
16	15	Բուլղարիա	8,18	8,70	**8,44**
19	17	Ռումինիա	8,07	8,55	**8,31**
33	31	Սերբիա	6,64	7,75	**7,20**
34	32	Թուրքիա	7,29	7,05	**7,17**
32	35	Ուկրաինա	6,50	7,35	**6,93**
61	38	Վրաստան	6,36	6,85	**6,60**
44	41	ՀՀ	6,82	6,00	**6,41**
47	59	Ռուսաստան	6,54	5,35	**5,94**
75	60	Մոլդովա	5,00	6,85	**5,93**
78	63	Ղրղզստան	5,64	5,95	**5,80**
66	68	Ղազախստան	6,82	4,23	**5,53**
85	85	Չինաստան	6,26	3,15	**4,70**
82	87	Ադրբեջան	5,21	3,80	**4,51**
83	89	Բելառուս	5,00	3,93	**4,47**
95	101	Իրան	4,18	3,73	**3,96**
102	106	Տաջիկստան	3,86	3,73	**3,80**
103	111	Ուզբեկստան	4,14	3,22	**3,68**
109	115	Թուրքմենստան	3,89	2,78	**3,34**
116	122	Հյուս. Կորեա	2,21	2,70	**2,46**

Աղբյուրը՝ http://www.bertelsmann-transformation-index.de/37.0.html?&L=1

Գրաֆիկ 1. «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» *(Status index)* ինդեքսում ՀՀ դիրքը այլ երկրների շարքում



բ. «Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը» ինդեքս (Management index)

Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսի մյուս՝ ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարման ցուցչի վարկանիշների սահմանման մեթոդաբանությունը հիմնված է 4 չափորոշիչների վրա, որոնց միջին ցուցանիշը տվյալ պետության ամփոփ վարկանիշն է: Ինչպես նախորդ ինդեքսի պարագայում, այստեղ նույնպես երկրները դասակարգված են վարկանիշային աստիճանակարգերում, որոնք ներկայացված են *Աղյուսակ 4-ում*:

Աղյուսակ 4

Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարման չափորոշիչները, 2008թ.

1.	Կառավարման պոտենցիալ
2.	Ռեսուրսների արդյունավետություն
3.	Կոնսենսուսի կառուցվածքը/consensus-building
4.	Միջազգային համագործակցություն

Աղյուսակ 5

Երկրների վարկանիշային աստիճանակարգումը, փակագծերում նշվում է 2008թ. երկրի զբաղեցրած դիրքը

Վարկանիշային աստիճանակարգում	*թվային սանդղակ*
Լավագույն ցուցանիշ	7,52-7,23 (1-4)
Հաջողակ	7,20-6,23 (5-27)
Թույլ հաջողակ	6,20-4,92 (28-62)
Միջին	4,89-3,83 (63-99)
Թույլ	3,82-2,47 (100-116)
Ձախողված	2,24-1,04 (117-125)

«Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարում» ինդեքսում ՀՀ վարկանիշային ցուցանիշը բարձր է: ԱՊՀ երկրների շարքում լավագույն արդյունքը գրանցվել է Վրաստանի (6,36 միավոր) պարագայում: Ի դեպ, ԱՊՀ անդամ երկրների շարքում Վրաստանը միակ պետությունն է, որն ընդգրկվել է երկրորդ՝ *հաջողակ* աստիճանակարգման երկրների խմբում՝ իր ցուցանիշով համադրվելով Ռումինիայի, Հունգարիայի արդյունքների հետ (*Աղյուսակ 6*): ԱՊՀ երկրներից Վրաստանին բարձր վարկանիշներով հաջորդում են Ուկրաինան (5,21 միավոր) և ՀՀ-ն (5,14), որոնք

երկուսն էլ գտնվում են երրորդ՝ *թույլ հաջողակ* երկրների վարկանիշային աստիճանակարգում: Այստեղ է գտնվում նաև Լեհաստանը, որը 5,27 ամփոփ միավորով գերազանցում է թե՛ Ուկրաինային և թե՛ ՀՀ-ին: Հաջորդ՝ *միջին* աստիճանակարգման խմբում են ԱՊՀ մնացյալ հանրապետությունները՝ Ղազախստանը, Մոլդովան, Ռուսաստանն ու Ադրբեջանը. բացառություն է կազմում Բելառուսը, որն ունենալով ամենացածր ցուցանիշը՝ ընդգրկվել է նախավերջին՝ *թույլ* երկրների շարքում:

ԱՊՀ երկրների շարքում 2006թ. համեմատ վարկանիշային արդյունքների բարելավում է նկատվել Վրաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ղրղզստանի ու Մոլդովայի պարագաներում: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա ԱՊՀ երկրների շարքում վերջինս միակ երկիրն է, որ սույն վարկանիշային ցուցչով 2008թ. պահպանել է 2006թ. դիրքը:

Երկու խոսքով անդրադառնանք նաև առանձնացված երկրների ենթացուցիչների արդյունքների համադրությանը: Այսպես, Վրաստանի վարկանիշային ենթացուցիչներից բարձր են եղել չորրորդ՝ միջազգային համագործակցության և առաջին՝ կառավարման պոտենցիալի ենթացուցիչները: Ինչ վերաբերում է ՀՀ-ին և Ուկրաինային, ապա վերջիններիս ենթացուցիչներն ամենաբարձրն են եղել միևնույն՝ միջազգային համագործակցության ոլորտում: Ի դեպ, չորրորդ՝ միջազգային համագործակցության ոլորտը բարձրագույն ցուցանիշն է համարվում նաև Ադրբեջանի ենթացուցիչների շարքում: ՀՀ ամենացածր ենթացուցիչն արձանագրվել է երկրորդ՝ ռեսուրսների արդյունավետության կառավարման ասպարեզում:

Աղյուսակ 6

Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը, առանձնացված երկրներ

2006թ. դիրքը	2008թ. դիրքը	երկիրը	1.Կառավարման պոտենցիալ	2.Ռեսուրսների արդյունավետ.	3.Կոնսենսուսի կառուցվածքը	4.Միջազգ. համագործակց.	(1-4) Չափորոշիչների միջին հաշվարկ	Բարդության մակարդակը	Ամփոփ ցուցիչ
2	1	Չիլի	9,0	8,7	9,0	9,7	9,8	2,3	**7,52**
7	2	Էստոնիա	9,0	8,7	8,6	9,7	8,98	2,2	**7,43**
6	5	Սլովակիա	8,7	8,0	8,6	10,0	8,82	1,7	**7,20**
5	7	Թայվան	8,0	8,0	8,6	9,3	8,48	2,4	**7,04**
16	10	Լատվիա	8,7	7,0	8,2	9,3	8,30	2,2	**6,86**
21	13	Բուլղարիա	7,7	7,0	8,2	9,0	7,97	3,0	**6,73**
9	15	Լիտվա	8,0	7,0	9,0	9,0	8,25	1,5	**6,70**
15	18	Հունգարիա	8,3	7,3	8,0	9,3	8,25	1,4	**6,67**
24	22	Ռումինիա	7,7	6,3	7,8	8,7	7,62	3,4	**6,49**
35	23	Վրաստան	7,3	7,0	6,2	7,7	7,05	5,6	**6,36**
20	24	Թուրքիա	8,0	6,3	6,8	8,0	7,28	4,1	**6,33**
23	53	Լեհաստան	6,0	6,0	6,8	7,0	6,45	1,8	**5,27**
65	55	Ուկրաինա	6,3	4,3	6,0	7,3	6,00	4,0	**5,21**
56	56	ՀՀ	6,0	5,0	5,6	7,0	5,90	4,2	**5,14**
70	67	Չինաստան	5,3	5,0	4,8	6,7	5,45	5,6	**4,92**
82	76	Ղազախստան	5,0	4,7	4,8	7,0	5,37	4,3	**4,69**
80	77	Ղրղզստան	4,3	3,3	5,8	7,3	5,20	5,4	**4,67**
95	87	Մոլդովա	4,0	4,0	5,4	6,3	4,93	5,8	**4,48**
70	88	Տաջիկստան	4,0	4,0	4,0	7,3	4,83	6,5	**4,46**
87	98	Ռուսաստան	4,0	4,7	4,6	4,3	4,40	4,3	**3,84**
95	99	Ադրբեջան	3,7	4,0	3,8	5,7	4,28	5,3	**3,83**
107	110	Բելառուս	2,3	4,7	2,8	3,3	3,28	4,5	**2,89**
101	112	Իրան	3,3	3,7	3,0	2,3	3,08	5,9	**2,80**
112	117	Ուզբեկստան	2,3	2,7	2,2	2,7	2,47	5,9	**2,24**
116	121	Թուրքմենստան	2,3	2,0	1,6	3,0	2,23	5,3	**2,00**
115	122	Հյուս. Կորեա	2,7	2,7	1,5	1,3	2,04	6,8	**1,90**

Աղբյուրը՝ http://www.bertelsmann-transformation-index.de/33.0.html?&L=1

Գրաֆիկ 2. «Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարում» *(Management index)*, ՀՀ դիրքը



Համաշխարհային տնտեսական ֆորում. «Համաշխարհային առևտրի խթանում 2008-2009թթ.» զեկույցները

«Համաշխարհային տնտեսական ֆորում» կազմակերպության մասին

1971թ. հիմնադրված «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ը *(World Economic Forum-WEF)* անկախ միջազգային կազմակերպություն է, որը գրանցված է որպես շահույթ չհետապնդող շվեյցարական հիմնադրամ: Միջազգային կազմակերպությունն իր առջև խնդիր է դնում դառնալ առաջատարը միջազգային հանրության բազմաբնույթ գործունեության ներդաշնակության ամրապնդման ու խթանման, տարածաշրջանային ու ազգային արդյունաբերական ռեսուրսների աջակցման գործում: Այդ նպատակներին հասնելու համար կազմակերպությունը հանդես է գալիս խորհրդատվական նախաձեռնություններով, որոնք աջակցում են որոշում կայացնողներին՝ փոխհամաձայնեցված ու առավել ճշգրիտ համագործակցելու միջազգային հանրությանը հուզող կարևոր հիմնահարցերի (գործարարություն, քաղաքականություն, սոցիալ-տնտեսական խնդիրներ) շուրջ: Կազմակերպությունը լուրջ գործունեություն է ծավալում նաև համաշխարհային կրթության ու առողջապահության, էներգետիկ ու տնտեսական զարգացման ոլորտներում, կոռուպցիայի դեմ պայքարում և այլ բնագավառներում: Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) անդամ են աշխարհի շուրջ 1,000 առաջատար ընկերություն և ավելի քան 200 փոքր ձեռնարկություն:

Ընդհանուր ակնարկ

2009թ. հունիսին ՀՏՖ-ն հրապարակեց «Համաշխարհային առևտրի խթանում 2008թ.» վարկանիշային զեկույցը, իսկ նախորդ տարվա վերջերին՝ հաջորդ՝ 2009 թվականի հաշվետվությունը: Հանգամանորեն անդրադառնանք այդ երկու զեկույցներում ՀՀ և հարակից երկրների վարկանիշային համեմատական վերլուծությանը՝ ներկայացնելով առանձնացված երկրների ցուցանիշների փոփոխության դինամիկան:

ՀՏՖ-ն հաշվետվություններ կազմելիս առաջնորդվել է այն կարգախոսով, որ յուրաքանչյուր պետության տնտեսության զարգացման կարևոր խթանիչ կամ ցուցիչ է միջազգային առևտուրը: Այդ նպատակով կազմակերպության ղեկավարությունն այս զեկույցներով նպատակ է հետապնդում միջազգային հանրությունում բարձրացնել միջազգային առևտրի և դրա խթանման հիմնահարցի կարևորությունը ազգային, տարածաշրջանային և ընդհանրապես միջազգային տնտեսական համակարգի կայուն զարգացման համատեքստում: Վարկանիշային հաշվետվությունների «առաքելությունն» այն է, թե ինչպես և որքանով են արժևորվում և իրագործվում աշխարհի տարբեր երկրներում ու հասարակություններում առևտուրը խթանող գործոնները, սպասարկող ծառայությունները և այդ ուղղությամբ տարվող քաղաքականությունը՝ աջակցելու և հեշտացնելու համար սահմանային առևտուրը:

«Համաշխարհային առևտրի խթանում 2008/2009թթ.» զեկույցները պատրաստվել են կազմակերպության «Արդյունաբերական համագործակցության ծրագրի» *(Industry Partnership Programme)* շրջանակներում՝ սերտորեն համագործակցելով այնպիսի հեղինակավոր

կազմակերպությունների ու ծրագրերի հետ, ինչպիսիք են Համաշխարհային Էքսպրես ասոցիացիան, Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիան, Միջազգային առևտրի կենտրոնը, ՄԱԿ Առևտրի և զարգացման գիտաժողովը (ՄԱԿԱԶԳ), Համաշխարհային բանկը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:

«Համաշխարհային առևտրի խթանում» վարկանիշային զեկույցները կազմվել են չորս հիմնական ենթացուցիչներից ստացված արդյունքների համադրության միջոցով: Դրանք են.

1. մուտք շուկա,
2. սահմանային վարչարարություն,
3. տրանսպորտային և հաղորդակցությունների ենթակառուցվածք,
4. գործարար միջավայր:

«Համաշխարհային առևտրի խթանում 2008-2009թթ.».
ՀՀ և հարակից երկրներ

Կազմակերպության երկու զեկույցներում էլ համաշխարհային առևտրի խթանման ցուցանիշներով ՀՀ վարկանիշն առաջատար դիրք ունի ԱՊՀ երկրների շարքում: 2008թ. վարկանիշային հաշվետվությունում ներառված ԱՊՀ երկրների շարքում ՀՀ վարկանիշը լավագույնն է (զեկույցներում ներառված չեն ԱՊՀ անդամ հանդիսացող բոլոր երկրները): ՀՀ-ն, զեկույցում ընդգրկված 118 երկրների շարքում զբաղեցնելով 61-րդ հորիզոնականը, բավական բարձր՝ 3,90 միավոր ունի: Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 1-ից*, ըստ ենթացուցիչների հաշվարկի, ՀՀ վարկանիշն առավել աչքի է ընկել հատկապես

մուտք շուկա և *գործարար միջավայր* ենթացուցիչներով՝ համապատասխանաբար 4,73 և 4,59 միավոր: ՀՀ ամենացածր ենթացուցիչը *սահմանային վարչարարությունն է*՝ 87-րդ դիրք, 3,28 միավոր: ՀՀ-ն վարկանիշով բավական մոտ է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների ցուցանիշներին, ինչպիսիք են Բուլղարիան, Ռումինիան, որոնք ՀՀ-ին գերազանցում են ոչ զգալի տարբերությամբ:

ԱՊՀ երկրների շարքում լավագույն արդյունքներով ՀՀ-ին հաջորդում են Մոլդովան և Ուկրաինան, որոնք զբաղեցրել են համապատասխանաբար 62 և 68-րդ դիրքերը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս ցուցանիշը զեկույցում ներառված ԱՊՀ երկրների շարքում միջին՝ 76-րդ դիրքում է՝ 3,68 միավոր՝ առաջ անցնելով Ռուսաստանից և միջինասիական երեք հանրապետություններից *(Աղյուսակ 1)*: Հարավային Կովկասի հարևան՝ ԱՊՀ-ին չանդամակցող երկրներից բավական բարձր արդյունք է գրանցվել Թուրքիայի պարագայում, որն ընդգրկված 118 երկրների շարքում զբաղեցնում է բավական բարձր՝ 38-րդ դիրքը՝ 4,53 միավորով:

Աղյուսակ 1

«Համաշխարհային առևտրի խթանում» 2008թ., ՀՀ-ն այլ երկրների շարքում

Երկիր	Ամփոփ ցուցիչ		Մուտք շուկա		Սահմ. վարչար.		Տրանս./հաղորդ.		Գործ. միջավայր	
	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ
ԱՊՀ երկրներ										
ՀՀ	61	3,90	43	4,73	87	3,28	77	3,00	53	4,59
Մոլդովա	62	3,88	26	4,99	75	3,65	76	3,05	101	3,83
Ուկրաինա	68	3,77	39	4,77	94	3,17	59	3,42	106	3,73
Ղազախստան	72	3,73	37	4,83	110	2,70	63	3,31	88	4,06
Ադրբեջան	76	3,68	65	4,15	112	2,62	64	3,30	46	4,66
Ռուսաստան	103	3,25	99	3,11	92	3,20	60	3,35	114	3,35
Տաջիկստան	104	3,13	83	3,74	117	2,40	117	2,02	69	4,38
Ուզբեկստան	105	3,06	114	2,46	116	2,43	84	2,94	65	4,43
Ղրղզստան	109	3,03	102	2,95	104	2,84	88	2,88	113	3,44
Արևել./Կենտր. Եվրոպայի երկրներ										
Էստոնիա	25	4,89	47	4,66	13	5,63	29	4,51	39	4,76
Չեխիա	32	4,70	33	4,94	31	4,86	34	4,18	38	4,84
Հունգարիա	34	4,67	41	4,76	33	4,79	38	4,10	28	5,05
Լիտվա	35	4,63	32	4,95	28	5,04	37	4,14	67	4,40
Լատվիա	43	4,45	48	4,55	40	4,54	39	4,08	51	4,61
Լեհաստան	45	4,35	42	4,73	37	4,62	46	3,70	73	4,35
Ռումինիա	57	4,04	61	4,25	61	4,02	49	3,64	81	4,24
Բուլղարիա	60	3,90	56	4,31	57	4,07	54	3,52	107	3,71
Այլ երկրներ										
Թուրքիա	38	4,53	8	5,40	47	4,28	44	3,79	50	4,64

Ի տարբերություն 2008թ., «Համաշխարհային առևտրի խթանում 2009թ.» հաշվետվությունում, թեև ՀՀ-ն կրկին ԱՊՀ երկրների շարքում առանձնացել է բարձր ցուցանիշով, սակայն չի պահպանել առաջատարի դիրքը: Զեկույցում ներառված ԱՊՀ անդամ 8 երկրների շարքում ՀՀ-ն զիջում է միայն Մոլդովային, որը նախորդ հաշվետվության համեմատ զգալիորեն բարելավել է իր վարկանիշը (52-րդ դիրք, 4,15 միավոր): Հաշվետվությունում ընդգրկված 121 երկրների մեջ ՀՀ-ն 64-րդն է (3,81 միավոր)՝ որոշակի հետընթաց արձանագրելով նախորդ տարվա համապատասխան արդյունքի համեմատ: Ըստ ենթացուցիչների միավորների հաշվառման, 2008թ. համադրությամբ ՀՀ-ն հետընթաց է ունեցել 3 ենթացուցիչներով: Առաջընթաց է արձանագրվել միայն երրորդ՝ *տրանսպորտի և հեռահաղորդակցությունների ենթակառուցվածքի* ենթացուցչի պարագայում. այդ ցուցանիշը 3 միավորի փոխարեն կազմել է 3,42: Աղյուսակում առանձնացված Արևելյան Եվրոպայի երկրների շարքում ՀՀ-ն գերազանցում է Բուլղարիային, որը զբաղեցնում է 72-րդ հորիզոնականը:

2009թ. հաշվետվությունում ԱՊՀ երկրների շարքում նախորդ տարվա համեմատությամբ զգալի առաջընթաց է գրանցվել Ադրբեջանի պարագայում, որն իր վարկանիշով գերազանցելով Ուկրաինային ու Ղազախստանին՝ ԱՊՀ երկրների շարքում զբաղեցրել է երրորդ դիրքը՝ զիջելով միայն Մոլդովային ու ՀՀ-ին: 2008թ. համեմատ Ադրբեջանի վարկանիշը բարձրացել է ի հաշիվ 3 ենթացուցիչների՝ ըստ միավորների հաշվառման. բացառություն է կազմում առաջին՝ *մուտք շուկա* ենթացուցիչը, որտեղ թեև հարավկովկասյան այս հանրապետության ցուցանիշն ունեցել է դիրքային բարելավում նախորդ տարվա համեմատ, սակայն միավորով, ընդհակառակը, հետընթաց է գրանցվել *(Աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2

«Համաշխարհային առևտրի խթանում» 2009թ., ՀՀ-ն այլ երկրների շարքում

Երկիր	Ամփոփ ցուցիչ		Մուտք շուկա		Սահմ. վարչար.		Տրանս./հաղորդ.		Գործ. միջավայր	
	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ
ԱՊՀ երկրներ										
Մոլդովա	52	4,15	6	5,38	72	3,59	58	3,46	73	4,16
ՀՀ	64	3,81	42	4,25	87	3,25	61	3,42	64	4,33
Ադրբեջան	70	3,77	52	4,07	103	2,91	62	3,40	46	4,68
Ուկրաինա	71	3,76	24	4,68	95	3,07	60	3,43	85	3,87
Ղազախստան	93	3,49	45	4,20	119	2,27	63	3,39	77	4,10
Ղրղզստան	101	3,43	18	4,77	116	2,46	86	2,98	108	3,53
Ռուսաստան	109	3,29	113	3,16	106	2,82	56	3,49	96	3,70
Տաջիկստան	114	3,14	104	3,57	118	2,40	116	2,37	70	4,22
Արևել./Կենտր. Եվրոպայի երկրներ										
Էստոնիա	22	4,84	71	3,91	16	5,58	27	4,64	24	5,25
Հունգարիա	38	4,39	81	3,82	31	4,69	34	4,34	45	4,70
Լիտվա	40	4,36	60	3,97	42	4,46	36	4,28	41	4,75
Լատվիա	44	4,33	73	3,90	39	4,60	39	4,09	43	4,72
Ռումինիա	54	4,05	72	3,90	44	4,39	51	3,62	65	4,28
Լեհաստան	57	3,98	77	3,85	45	4,37	46	3,71	80	3,99
Բուլղարիա	72	3,76	55	4,02	69	3,64	48	3,68	97	3,68
Այլ երկրներ										
Թուրքիա	48	4,19	14	4,93	56	4,05	49	3,65	75	4,15

Համաշխարհային տնտեսական ֆորում. «Գլոբալ մրցունակության վարկանիշը 2007-2009թթ.» զեկույցը

ՀՏՖ-ն 2001թ. սկսած իրականացնում է նաև մեկ այլ վարկանիշային հետազոտություն, որը նվիրված է աշխարհում պետությունների գլոբալ մրցունակության վարկանիշավորմանը: Գլոբալ մրցունակության վարկանիշային հետազոտությունը հիմնվում է 12 ենթացուցիչների միջին հաշվարկի վրա, որոնց հանրագումարն էլ ձևավորում է տվյալ պետության գլոբալ մրցունակության ամփոփիչ վարկանիշը: Դրանք են՝

- ինստիտուտներ
- ենթակառուցվածք
- մակրոտնտեսական կայունություն
- առողջապահություն և հանրակրթություն
- բարձրագույն կրթություն և ուսուցում
- առևտրային շուկայի արդյունավետություն
- աշխատաշուկայի արդյունավետություն
- ֆինանսական շուկայի բարելավում
- տեխնոլոգիական պատրաստվածություն
- շուկայի ծավալ
- գործարարության բարելավում
- նորարարություն:

Զեկույցում ընդգրկված պետությունների վարկանիշային միավորները սահմանվում են 1-6-ի միջակայքում, որտեղ 1 միավորը համարվում է ամենացածր, իսկ 6-ը՝ ամենաբարձր վարկանիշային ցուցանիշը:

«Գլոբալ մրցունակության 2007-2008թթ.» վարկանիշային հետազոտությունում, որտեղ ընդգրկվել է 131 պետություն, ԱՊՀ երկրների մեջ ՀՀ ցուցանիշը միջին դիրքերում է՝ զեկույցում ներառված ԱՊՀ անդամ 10 հանրապետությունների շարքում զբաղեցնելով 7-րդ դիրքը՝ 3,76 միավորով: ԱՊՀ երկրների ցուցակում, ըստ զեկույցի վիճակագրության, առաջին դիրքում Ռուսաստանն է, որը 131 երկրների շարքում զբաղեցրել է 58-րդ դիրքը՝ 4,19 միավորով: Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 1-ում,* Ռուսաստանին հաջորդում են միջինասիական երկու հանրապետություններ՝ Ղազախստանն ու Ուզբեկստանը, ինչպես նաև Ադրբեջանը (4,07 միավոր): Բավական բարձր է նաև Թուրքիայի վարկանիշը, որը զբաղեցնելով 53-րդ դիրքը՝ գերազանցում է զեկույցում ներառված ԱՊՀ բոլոր պետություններին, ինչպես նաև Ռումինիային, Բուլղարիային:

Ինչ վերաբերում է հաջորդ՝ 2008-2009թթ. վարկանիշային հետազոտությանը, ապա այստեղ ներառված ԱՊՀ 9 երկրների շարքում ՀՀ-ն (97-րդ դիրք, 3,73 միավոր) կրկին լավ արդյունք չի արձանագրել՝ զբաղեցնելով ցածր դիրք և գերազանցելով միայն Տաջիկստանին ու Ղրղզստանին: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն, նախորդ հետազոտության համեմատ, որոշակի հետընթաց է արձանագրել այս զեկույցում՝ 93-րդ դիրքից անցնելով 97-րդի: ԱՊՀ անդամ երկրներից լավագույն ցուցանիշները պատկանում են Ռուսաստանին (51-րդ դիրք), Ղազախստանին (66) և Ադրբեջանին (69): Համաձայն զեկույցի տվյալների, Ռուսաստանի վարկանիշը գերազանցել է Արևելա-Կենտր. Եվրոպայի այնպիսի երկրների, ինչպիսիք են Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան ու Բուլղարիան:

Կազմակերպության «Գլոբալ մրցունակության» վերջին՝ 2009-2010թթ. վարկանիշային հետազոտությունում ԱՊՀ 8 երկրների ցուցակը գլխավորում է Ադրբեջանը (51-րդ դիրք), որը, նախորդ զեկույցի համեմատ, զգալիորեն բարելավել է վարկանիշային

Աղյուսակ 1

«Գլոբալ մրցունակության» վարկանիշը 2007-2008թթ.,
ՀՀ-ն այլ երկրների շարքում

երկիր	դիրք	միավոր
ԱՊՀ երկրներ		
Ռուսաստան	58	4,19
Ղազախստան	61	4,14
Ուզբեկստան	62	4,13
Ադրբեջան	66	4,07
Ուկրաինա	73	3,98
Վրաստան	90	3,83
ՀՀ	93	3,76
Մոլդովա	97	3,64
Տաջիկստան	117	3,37
Ղրղզստան	119	3,34
Արևելյան/Կենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ		
Էստոնիա	27	4,74
Չեխիա	33	4,58
Լիտվա	38	4,49
Լատվիա	45	4,41
Հունգարիա	47	4,35
Լեհաստան	51	4,28
Ռումինիա	74	3,97
Բուլղարիա	79	3,93
Այլ երկրներ		
Թուրքիա	53	4,25

Աղյուսակ 2

«Գլոբալ մրցունակության» վարկանիշը 2008-2009թթ.[1], ՀՀ-ն այլ երկրների շարքում

երկիր	դիրք	միավոր
ԱՊՀ երկրներ		
Ռուսաստան	51	4,31
Ղազախստան	66	4,11
Ադրբեջան	69	4,10
Ուկրաինա	72	4,09
Վրաստան	90	3,86
Մոլդովա	95	3,75
ՀՀ	97	3,73
Տաջիկստան	116	3,46
Ղրղզստան	122	3,40
Արևելյան/Կենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ		
Էստոնիա	32	4,67
Չեխիա	33	4,62
Լիտվա	44	4,45
Լեհաստան	53	4,28
Լատվիա	54	4,26
Հունգարիա	62	4,22
Ռումինիա	68	4,10
Բուլղարիա	76	4,03
Այլ երկրներ		
Թուրքիա	63	4,15

[1] Զեկույցում ներառված է 134 պետություն:

ցուցանիշը՝ առաջ անցնելով Ռուսաստանից ու Ղազախստանից: ՀՀ-ն պահպանել է նախորդ արդյունքը և զեկույցում ներառված 133 պետությունների շարքում զբաղեցնում է 97-րդ դիրքը՝ 3,71 միավորով:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վարկանիշավորման ենթացուցիչների մեջ լավագույն արդյունքն արձանագրվել է 4-րդ՝ առողջապահության և հանրակրթության (5 միավոր), 3-րդ՝ մակրոտնտեսական կայունության (4,78) և 7-րդ՝ աշխատաշուկայի արդյունավետության (4,61) ոլորտներում: ՀՀ վարկանիշի ցածրագույն ենթացուցիչներից առանձնացվում են շուկայի ծավալի, նորարարության և տեխնոլոգիական պատրաստվածության բնագավառները:

Հարավկովկասյան հանրապետություններից ՀՀ-ն իր վարկանիշային ենթացուցիչներով գերազանցում է Վրաստանին երեք դեպքում՝ մակրոտնտեսական կայունություն, գործարարության բարելավում և նորարարություն, մնացյալ ենթացուցիչներով զիջում է Վրաստանի համապատասխան ցուցանիշներին: ՀՀ-ն բոլոր ենթացուցիչներով զիջում է Ադրբեջանի համապատասխան ցուցանիշներին (*մանրամասն տե՛ս Աղյուսակ 3*):

Աղյուսակ 3

«Գլոբալ մրցունակության» վարկանիշը 2009-2010թթ.[1], ՀՀ-ն այլ երկրների շարքում

երկիր	դիրք	ամփոփ միավոր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԱՊՀ երկրներ														
Ադրբեջան	51	4,30	4,15	4,03	5,30	5,04	3,88	4,16	5,07	4,23	3,41	3,39	3,90	3,53
Ռուսաստան	63	4,15	3,23	3,62	5,24	5,65	4,30	3,75	4,67	3,27	3,45	5,78	3,59	3,35
Ղազախստան	67	4,08	3,64	3,49	4,71	5,22	4,13	4	4,93	3,48	3,53	4,17	3,70	3,15
Ուկրաինա	82	3,95	3,10	3,39	3,96	5,41	4,38	3,74	4,57	3,56	3,37	4,67	3,63	3,21
Վրաստան	90	3,81	3,82	3,60	3,73	5,26	3,70	4,09	4,94	3,84	2,92	2,89	3,33	2,56
ՀՀ	97	3,71	3,49	3,25	4,78	5	3,46	3,65	4,61	3,79	2,86	2,69	3.35	2.71
Տաջիկստան	122	3,38	3,71	2,73	2,63	4,97	3,21	3,57	4,43	2,99	2,57	2,54	3,25	2,87
Ղրղզստան	123	3,36	2,98	2,41	3,25	4,98	3,64	3,61	4,30	3,53	2,50	2,61	3,21	2,40
Արևելյան/Կենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ														
Չեխիա	31	4,67	3,93	4,27	4,99	5,94	5,05	5,82	4,88	4,64	4,75	4,51	4,80	4,01
Էստոնիա	35	4,56	4,85	4,67	4,90	5,98	5,11	4,81	4,86	4,82	5,49	3,08	4,31	3,64
Լեհաստան	46	4,33	3,90	2,88	4,56	5,88	4,82	4,34	4,54	4,61	3,97	5,07	4,35	3,33
Լիտվա	53	4,30	4	4,44	4,72	5,57	4,76	4,26	4,64	4,16	4,54	3,63	4,22	3,28
Հունգարիա	58	4,22	3,77	4,04	4,50	5,59	4,63	4,22	4,43	4,20	4,44	4,35	3,89	3,45
Ռումինիա	64	4,11	3,68	2,67	4,55	5,50	4,30	4,24	4,29	4,40	3,79	4,49	3,79	3,10
Լատվիա	68	4,06	3,91	4,04	4,20	5,66	4,66	4,29	4,70	4,32	4	3,27	3,79	2,94
Բուլղարիա	76	4,02	3,19	2,88	4,93	5,54	4,11	4,02	4,51	4,09	3,82	3,94	3,68	2,90
Այլ երկրներ														
Թուրքիա	61	4,16	3,49	3,92	4,66	5,32	3,88	4,30	3,65	4,06	3,83	5,22	4,28	3,11

[1] 2009-2010թթ. զեկույցում ներառված է 133 պետություն:

Որոշ նկատառումներ

Ինչպես արդեն նշել ենք, տնտեսական թեմատիկ ուղղությունում ներկայացված վարկանիշային հետազոտությունների արդյունքները համադրելիս ՀՀ գլոբալ մրցունակության ցուցանիշները խիստ հակասական են: Համաշխարհային տնտեսական ֆորում կազմակերպության ներկայացրած մեկ այլ վարկանիշային հետազոտությունում («Համաշխարհային առևտրի խթանում») առանձնացված ենթացուցիչներն ընդհանուր առմամբ համադրելի են «Գլոբալ մրցունակության» հետազոտության վարկանիշավորման ենթացուցիչների մի մասի հետ, սակայն վերջինիս դեպքում ՀՀ վարկանիշային արդյունքները «Համաշխարհային առևտրի խթանում» վարկանիշային հետազոտությունում հակասում են մեր հանրապետության համապատասխան ցուցանիշին: Նշենք, որ «Գլոբալ մրցունակության» վարկանիշային հետազոտությունում ՀՀ պարագայում հաշվի չի առնվել հարևան Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական ու քաղաքական շրջափակման հանգամանքը՝ որպես ՀՀ գլոբալ մրցունակության վարկանիշավորման կարևոր ենթացուցիչ: Ավելին, «Գլոբալ մրցունակության» վարկանիշային ուսումնասիրությունում ընտրվել են այնպիսի ենթացուցիչներ, ինչպես, օրինակ, մակրոտնտեսական կայունությունը, շուկայի ծավալը, առևտրային շուկայի արդյունավետությունը, որոնք ուղղակիորեն վերաբերում են հարևան երկրների կողմից ՀՀ տնտեսական ու քաղաքական շրջափակման խնդիրներին և կրում են վերջինիս ազդեցությունը:

ՀՀ գլոբալ մրցունակության վարկանիշավորման հարցում պետք է ներառվեր նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող հայության գործոնը, որն այս կամ այն չափով ներկայացված լինելով ՀՀ տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ոլորտներում՝ ներկայանում է որպես ՀՀ գլոբալ մրցունակության վարկանիշավորման առանցքային բաղադրիչներից մեկը։

«Ձախողված երկրների ինդեքսը» 2005-2009թթ. Foreign Policy Magazine & The Fund for Peace

Մեթոդաբանական հարցեր

Երկու խոսք *«Ֆորին Փոլիսի Մեգեզին»* ամսագրի *(Foreign Policy Magazine)* և *«Ֆանդ ֆոր Փիս»* կազմակերպության *(The Fund for Peace)* նախաձեռնած «Ձախողված երկրների ինդեքսը» *(Failed States Index)* վարկանիշային նախագծում կիրառված մեթոդաբանության վերաբերյալ. «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային հետազոտություններում կիրառված մեթոդաբանությունը հիմնվում է 12 ցուցիչների վրա, որոնք իրենց հերթին դասակարգվում են երեք հիմնական խմբերի՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական: Զեկույցում նշված երկրների դասակարգումը հիմնված է 12 ցուցիչների ընդհանուր գումարային տվյալների վրա *(Աղյուսակ 1):* Յուրաքանչյուր ցուցչի համար ընտրված վարկանիշային 0-10 թվային սանդղակում 10 թիվը համարվում է բարձրագույն՝ բացասական կետը, 0 թիվը՝ ցածրագույն՝ լավագույն կետը:

Աղյուսակ 1

«Ձախողված երկրների ինդեքսի» 12 ցուցիչները

№	ցուցիչներ
	սոցիալական ցուցիչներ
1.	ժողովրդագրական ազդեցություն
2.	փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ
3.	դժգոհ զանգվածների գործոն
4.	մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք
	տնտեսական ցուցիչներ
5.	հասարակական խմբերի միջև տնտեսական զարգացման անհավասարություն
6.	կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում
	քաղաքական ցուցիչներ
7.	պետության քրեականացում և/կամ ապալեգիտիմացում
8.	պետական գործառույթների շարունակվող վատթարացում
9.	մարդու իրավունքների համատարած խախտում
10.	անվտանգության կառույցների ուժեղացում. նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում
11.	կլանային վերնախավերի ազդեցության մեծացում
12.	օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ

2005-2008թթ. վարկանիշային հետազոտությունները

Հեղինակավոր *«Ֆորին Փոլիսի Մեգեզին»* ամսագրի և *«Ֆանդ ֆոր Փիս»* կազմակերպության իրականացրած «Ձախողված երկրների ինդեքսը» *(Failed States Index)* վարկանիշային նախագծի 2005թ. հետազոտությունում ընդգրկված 76 երկրների շարքում Հարավային Կովկասի երկրներից ներառված էր միայն Ադրբեջանը (ՀՀ-ի ու Վրաստանի, ինչպես և այլ երկրների բացակայությունը պայմանավորված է հիմնականում տեղեկատվության անմատչելիությամբ): Ներառված 76 երկրները բաժանված են երկու խմբի՝ ըստ ձախողվածության աստիճանի. առաջին՝ ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը ներառված է 90.9-106 միավորների միջև), երկրորդ՝ նախազգուշացնող՝ 65-89.4): Զեկույցում Ադրբեջանը,

ունենալով 85.7 միավոր և ընկնելով երկրորդ՝ նախազգուշացնող խմբի մեջ, զիջում է այնպիսի երկրների, ինչպիսիք են Իրանը (83.8), Ռուսաստանի Դաշնությունը (83.5), Ալժիրը (81.2), Ղրղզստանը (80.4) կամ Ղազախստանը (78.3)։

«Ձախողված երկրների ինդեքսի» հաջորդ՝ 2006թ. զեկույցում ներառված էր 146 երկիր, որոնք այս անգամ բաժանված են 4 խմբի՝ ըստ ձախողվածության աստիճանի.

- ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 90.3-112.3 միավոր է),
- նախազգուշացնող (60.5-89.8),
- միջին (30.8-59.6),
- կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 16.80-28.1 միավոր է։

2006թ. տարեկան զեկույցում Հարավային Կովկասի հանրապետություններից (երեքն էլ ներառված են միևնույն՝ նախազգուշացնող խմբում՝ երկրորդում) լավագույն վարկանիշային ցուցանիշը ՀՀ-ինն է։ Վրաստանի վարկանիշային միավորը 82.2 է, որին անմիջապես հաջորդում է Ադրբեջանը՝ 81.9 միավոր։ Ի դեպ, կարելի է նկատել, որ երկու երկրներն էլ գտնվում են նախազգուշացնող խմբի 60.5-89.8 սահմանային սանդղակի ամենացածր մասում։ Ընդ որում, 2005թ. համեմատ Ադրբեջանի ցուցանիշի բարելավումը հիմնականում պետք է պայմանավորել այն հանգամանքով, որ 2006թ. զեկույցում ընդգրկված երկրների թիվը նախորդի համեմատ կրկնապատկվել էր, փոխվել էր նաև ձախողվածության աստիճանավորման կարգը (2006թ. զեկույցում առանձնացված է ոչ թե երկու, այլ չորս խումբ)։

Ի տարբերություն հարավկովկասյան երկու հանրապետությունների, ՀՀ միավորը բավական բարձր է (71.5) և նշված սահմանային սանդղակի լավագույն ցուցանիշների շարքում է: Զեկույցում ՀՀ-ն ցուցանիշներով գերազանցում է ԱՊՀ բոլոր պետություններին *(Աղյուսակ 1)*, ինչպես նաև Իրանին (84), Իսրայելին (79.4) և Թուրքիային (74.4): Ավելին, ՀՀ վարկանիշը համեմատաբար ավելի մոտ է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների վարկանիշին, ինչպիսիք են Ռումինիան (62.6), Բուլղարիան (62.1)[1]:

[1] Թե՛ Ռումինիան, թե՛ Բուլղարիան նույնպես գտնվում են երկրորդ՝ նախազգուշացնող խմբում: Ի տարբերություն վերջինների, 2006թ. զեկույցում մերձբալթյան երկրներն ընդգրկված են երրորդ՝ միջին խմբում. Լատվիա՝ 56.2, Էստոնիա՝ 51, Լիտվա՝ 49.7 վարկանիշային միավոր:

Աղյուսակ 1

ՀՀ վարկանիշն ԱՊՀ երկրների շարքում, 2006թ.

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
23	Ուզբեկստան	7.7	5.8	7.5	7.5	8.1	7	9.3	7	9.3	9.1	9.1	7	**94.4**
28	Ղրղզստան	8	6.6	7	7.5	8	7.5	8.3	7.3	7.9	8.3	7.9	6	**90.3**
42	Տաջիկստան	7	6.6	6.2	6.5	7.4	6.8	8.9	7.5	8.6	7.5	8.7	6	**87.7**
43	Ռուսաստան	8	7.2	8	7	8	3.7	8.2	6.9	9.1	7.5	9	4.5	**87.1**
45	Թուրքմենստան	7	4.2	5.2	6	7.2	8	9.1	7.2	9.7	8.5	8	6	**86.1**
50	Բելառուս	9	5.1	5.5	3.5	8.5	6.3	9	7.5	7.3	6.8	8	8	**84.5**
58	Մոլդովա	7	4.7	7.3	8	7.5	7.5	7.4	7	6.8	5.5	6.8	7	**82.5**
60	Վրաստան	6	6.8	7.4	6.1	7	5.5	7.7	6.3	5.6	8.1	7.1	8.6	**82.2**
61	Ադրբեջան	6	8.1	7.3	5	7.5	5.9	8.1	6.5	6	7	7.5	7	**81.9**
86	Ուկրաինա	7	3.8	7.2	7.5	7	4.5	7	5.5	5.9	3	7.5	7	**72.9**
88	Ղազախստան	5	2.9	5.1	4	6.2	6.5	7.5	6.7	7	6.7	7.7	6.6	**71.9**
89	ՀՀ	6	7.1	5	7	6	5.1	7	6.5	6	4.5	5.8	5.5	**71.5**

Աղբյուրը՝ http://www.fundforpeace.org/web/index.php?option=com_content&task=view&id=104&Itemid=324

2007թ. զեկույցում ներառված են առավելագույն թվով (177) երկրներ, որոնք նույնպես բաժանված են 4 խմբի՝ ըստ երկրների ձախողվածության աստիճանի.

1. Ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 90-120 միավոր է),
2. նախազգուշացնող (60-89.9),
3. միջին (30-59.9),
4. կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 0-29.9 միավոր է։

2007թ. զեկույցում ՀՀ-ն կրկին զբաղեցնում է առաջատար դիրքեր ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ ԱՊՀ երկրների շարքում՝ գերազանցելով նաև Իրանին ու Թուրքիային։ Ստորև ներկայացված են 2007թ. տարեկան զեկույցին վերաբերող աղյուսակները։

Աղյուսակ 2

ԱՊՀ և մերձբալթյան երկրներ, 2007թ.

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
ԱՊՀ երկրներ														
22	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.5	9.2	6.8	9	8.9	9.2	7	**93.5**
39	Տաջիկստան	7.7	6.1	6.3	6.4	7.3	7.3	9	7.3	8.6	7.8	8.8	6.1	**88.7**
41	Ղրղզստան	7.5	6.2	6.8	7.4	8	7.5	8.2	6.3	7.9	7.9	7.5	7	**88.2**
43	Թուրքմենստան	7	4.5	6.2	5.6	7.3	7.4	9	7.7	9.6	8.5	8.2	6.5	**87.5**
48	Մոլդովա	7	4.7	7.3	8.4	7.5	7.5	7.9	7.1	6.8	6.3	7.5	7.7	**85.7**
51	Բելառուս	8	4.6	6.5	5	7.5	6.8	9.1	6.9	8.5	6.7	8.5	7.1	**85.2**
58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	**82.3**
62	Ռուսաստան	7.5	5.9	7.7	6.5	8.2	3.9	7.6	6.2	8.5	6.8	8.5	3.9	**81.2**
62	Ադրբեջան	6	7.5	7.3	5.3	7.4	6.3	7.8	6	6.4	7.2	7.5	6.5	**81.2**
103	Ղազախստան	5.7	3	5.2	4	6.2	6.6	7.5	6.1	7	6.7	7.7	6.6	**72.3**
106	Ուկրաինա	6.5	3.6	7	7.5	7	5	7.5	4.5	5.9	3	7.9	6	**71.4**
112	ՀՀ	5.8	7.6	5	6.9	6	5	6.5	6.2	5.5	4.5	5.8	5.5	**70.3**
Մերձբալթյան երկրներ														
135	Լատվիա	5.2	5.7	4.6	5	7	5.8	4.7	4	3.8	2.2	4.4	4.3	**56.7**
140	Էստոնիա	4.8	4.8	4.5	4	4.9	3.7	5	3.8	3.7	2.1	5.9	3.3	**50.5**
143	Լիտվա	5.4	3.4	3.5	5.4	6.2	4.5	4.2	3.7	3.7	2	3	4	**49**

Աղյուսակ 3

ՀՀ և հարակից երկրները, 2007թ.

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
57	Իրան	6.2	8.6	7.1	5	7.2	3.3	7.8	5.7	8.7	8.3	8.9	6	**82.8**
58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	**82.3**
62	Ադրբեջան	6	7.5	7.3	5.3	7.4	6.3	7.8	6	6.4	7.2	7.5	6.5	**81.2**
92	Թուրքիա	6.9	5.8	7.4	5	8.7	4.7	6.1	5.4	5.1	6.7	7.1	6	**74.9**
112	ՀՀ	5.8	7.6	5	6.9	6	5	6.5	6.2	5.5	4.5	5.8	5.5	**70.3**

2005-2007թթ. նշված երկրներից «Զախողված երկրների ինդեքսի» վատագույն ցուցանիշը Ռուսաստանինն է՝ 2006թ.՝ 87.1 միավոր, լավագույն արդյունքը՝ ՀՀ-ինը՝ 2007թ. (70.3 միավոր)։

«Զախողված երկրների» 2008թ. վարկանիշային զեկույցում ՀՀ-ն շարունակում է գլխավորել ԱՊՀ երկրների ցուցակը՝ 109-րդ դիրք, 70,7 միավոր։ ՀՀ վարկանիշին անմիջապես հաջորդում են Ուկրաինայի, Ղազախստանի ու Ռուսաստանի, ինչպես և հարավկովկասյան մյուս երկու հանրապետությունների ցուցանիշները։ ԱՊՀ երկրների շարքում ամենացածրը միջինասիական 4 հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի ու Թուրքմենստանի արդյունքներն են։

Աղյուսակ 4

«Զարգացած երկրների ինդեքսը» 2008թ., ՀՀ և հարակից երկրներ

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
ԱՊՀ երկրներ														
26	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.7	9.3	6.8	9.2	9.0	9.2	6.3	**93.4**
38	Տաջիկստան	7.9	6.1	6.5	6.4	7.3	7.0	9.2	7.1	8.8	7.8	8.6	6.2	**88.9**
39	Ղրղզստան	7.5	5.8	6.8	7.8	8.0	7.5	8.4	6.5	7.9	8.1	7.5	7.4	**88.8**
46	Թուրքմենստան	7.0	4.5	6.2	5.6	7.3	7.1	8.7	7.7	9.6	8.3	7.9	6.3	**86.2**
50	Մոլդովա	7.0	4.7	7.3	8.4	7.2	7.2	8.3	7.0	7.1	6.5	7.7	7.3	**85.7**
53	Բելառուս	7.7	4.3	6.7	5.0	7.2	6.7	9.3	6.6	8.8	6.5	8.5	7.1	**84.4**
56	Վրաստան	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	**83.8**
64	Ադրբեջան	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	**81.0**
72	Ռուսաստան	7.0	5.4	7.5	6.5	7.9	3.7	7.9	5.9	8.7	7.0	8.0	4.2	**79.7**
101	Ղազախստան	6.2	3.6	5.2	4.0	6.5	6.0	7.7	5.5	6.8	6.5	7.8	6.6	**72.4**
108	Ուկրաինա	6.5	3.2	7.2	7.3	6.7	5.0	7.3	4.5	5.9	3.0	7.9	6.3	**70.8**
109	ՀՀ	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	**70.7**
Արևելյան/Կենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ														
112	Կիպրոս	4,9	4,2	8,3	5,2	7,5	4,2	5,5	3,8	3,5	5	8,4	9,2	**69,7**
128	Ռումինիա	5,3	3,5	5,2	5,2	6,1	5,2	5,9	5,2	4,8	3,4	4,7	5,4	**59,9**
131	Բուլղարիա	5,1	4,1	4	5,7	6	4,3	5,4	4,6	4,7	5,2	3,9	5,5	**58,5**
136	Լատվիա	4,9	4,9	4,6	5	6	5	4,7	4,2	3,8	3	4,4	4	**54,5**
139	Էստոնիա	4,8	4,8	5,1	4	4,9	3,7	4,8	3,8	3,5	2,6	5,7	3,3	**51**
143	Լիտվա	4,9	3,1	3,9	5,4	6,2	4,5	4,4	3,5	3,5	2	3	4,3	**48,7**
145	Լեհաստան	4,8	3	3,2	6,4	4,8	4,3	4,2	3,8	3,8	2	3,3	4	**47,6**
149	Չեխիա	3,8	3,1	3,2	4,8	3,9	3,4	3,7	3,8	3,5	2	3,5	3,4	**42,1**

«Ձախողված երկրների ինդեքսը» 2009թ.

2009թ. հունիսի վերջին լույս տեսավ *«Ֆորին Փոլիսի Մեգեզին»* ամսագրի ու *«Ֆանդ ֆոր Փիս»* կազմակերպության «Ձախողված երկրների ինդեքսը» *(Failed States Index)* վարկանիշային նախագծի 2009թ. զեկույցը, որտեղ ներկայացված է ՀՀ և հարակից ու այլ երկրների վարկանիշային արդյունքների համեմատական վերլուծությունը: «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային հետազոտություններում երկրները՝ ըստ ձախողվածության աստիճանավորման, դասակարգվում են 4 հիմնական խմբի՝

1. Ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 90.1-114.2 միավոր է),
2. նախազգուշացնող (60.1-89.9),
3. միջին (31.2-59.9),
4. կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը 16.8-29.7 միավոր է:

Ինչպես «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային նախորդ հետազոտություններում (2006-2008թթ.), այնպես էլ 2009թ. զեկույցում ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրք է զբաղեցրել: Սակայն այն տարբերությամբ, որ եթե նախորդ զեկույցներում ՀՀ-ն իր վարկանիշով, որպես կանոն, գլխավորել է ԱՊՀ երկրների ցուցակը, վերջին՝ 2009թ. զեկույցում ՀՀ-ն զիջում է Ղազախստանին և Ուկրաինային: Ինչպես պատկերված է *Աղյուսակ 5-ում*, զեկույցում ընդգրկված 177 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցրել է 101-րդ դիրքը՝

74,3 միավոր և զիջում է Ղազախստանին և Ուկրաինային, որոնք համապատասխանաբար զբաղեցրել են 105 և 110-րդ հորիզոնականները: ՀՀ վարկանիշը գերազանցում է նաև հարևան Թուրքիայի ցուցանիշը՝ 85-րդ դիրք, 78,2 միավոր:

Ինչ վերաբերում է ՀՀ հարևան երկու հանրապետությունների վարկանիշներին, ապա նրանցից առավել ցածր արդյունք է գրանցվել Վրաստանի պարագայում՝ 33-րդ դիրք, 91,8 միավոր: Ի տարբերություն նախորդ զեկույցների, որտեղ Վրաստանը, որպես կանոն, գտնվում էր երկրորդ՝ *նախագգուշացնող* գոտում, 2009թ. այդ հանրապետությունն առաջին անգամ անցումային կամ որակական հետընթաց է արձանագրել և անցել առաջին՝ վատթարագույն գոտի (*ահազանգող ինտենսիվության երկրներ*): Վրաստանի վարկանիշի կտրուկ վատթարացումը, թերևս, պետք է պայմանավորել վերջին շրջանում երկրի արտաքին ու ներքին զարգացումներով՝ 2008թ. վրաց-ռուսական պատերազմ, միջազգային հանրությունում Վրաստանի ղեկավարության հեղինակազրկում, իշխանություն-ընդդիմություն հակասություններ և բախումներ, ներքաղաքական ճգնաժամ:

ԱՊՀ երկրներից վատթարագույն խմբում են ընդգրկվել նաև Ուզբեկստանն ու Տաջիկստանը՝ համապատասխանաբար 92,8 և 90,3 միավոր: Զեկույցի վատթարագույն խմբում ներառված երկրների ցուցակը եզրափակում է Իրանը՝ 90 միավոր: Ինչ վերաբերում է հարավկովկասյան մյուս հանրապետությանը՝ Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշը, ինչպես և նախորդ զեկույցներում, հիմնականում պահպանում է միջին դիրքը ԱՊՀ երկրների շարքում: 2009թ. զեկույցում Ադրբեջանը զբաղեցնում է 56-րդ հորիզոնականը՝ 84,6 միավորով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. համեմատ 2009թ. հետազոտությունում հարավկովկասյան երեք երկրներն իրենց վարկանիշներում հետընթաց են ունեցել, չնայած երկու զեկույցներում էլ ընդգրկված երկրների թիվը եղել է նույնը՝ 177: Այս հանգամանքը, թերևս, պետք է պայմանավորել այդ երկրների ներքաղաքական զարգացումներով, հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական վերջին տեղաշարժերով, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով: Այսպես, եթե 2008թ. ՀՀ-ն զբաղեցրել է 109-րդ հորիզոնականը՝ 70,7 միավորով, ապա 2009թ. ՀՀ դիրքը 101-ն է՝ ավելի ցածր՝ 74,3 միավորով: Նույնն է նաև Ադրբեջանի պարագայում (Վրաստանի դեպքում գործ ունենք որակական կամ անցումային փոփոխության հետ, որի մասին նշեցինք), որի 2008թ. 81 միավորը (64-րդ դիրք) 2009թ. զեկույցում փոխարինվել է ավելի ցածր՝ 84,6 միավորով (56-րդ դիրք):

Աղյուսակ 5

«Զարգացած երկրների ինդեքսը» 2009թ., ՀՀ և հարակից երկրներ

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
ԱՊՀ երկրներ														
31	Ուզբեկստան	7,9	5,3	7,4	7	8,7	7,2	9	6,6	9,2	9	9	6,5	**92,8**
33	Վրաստան	6,4	8,3	8,5	6	7,5	6	9	6,3	7,5	7,9	8,9	9,5	**91,8**
37	Տաջիկստան	8,2	6,4	6,9	6,5	7,3	7,5	8,9	8,6	8,6	7,5	8,4	6,5	**90,3**
42	Ղրղզստան	8	5,3	7,2	7,5	8,3	7,6	8,3	6,5	7,6	7,7	7,3	7,8	**89,1**
54	Մոլդովա	6,6	4,2	7,1	8	7	6,8	8,1	6,7	7	8	8	7,6	**85,1**
56	Ադրբեջան	6,4	8,2	7,9	5,7	7,4	6,1	8,2	5,5	7	7,3	7,9	7	**84,6**
59	Թուրքմենստան	7	4,8	6,5	5,6	7,6	6,9	8,5	7,2	8,9	7,6	7,7	6	**84,3**
66	Բելառուս	7,2	4,1	6,9	5	7,2	6,6	8,9	6,6	8	6,6	8,1	7,1	**82,3**
71	Ռուսաստան	7	5,9	7,5	6,2	8,1	4,6	8	5,7	8,3	6,9	8	4,6	**80,8**
101	ՀՀ	5,9	7,2	6	6,7	6,5	5,3	7,1	5,4	6,1	5,3	6,9	5,9	**74,3**
105	Ղազախստան	6	3,9	5,5	4	6,4	6,4	7,7	5,3	6,8	6,5	7,6	6,4	**72,5**
110	Ուկրաինա	6,1	3	6,9	7,1	6,4	5,5	7,2	4,2	5,5	3,3	7,9	6,6	**69,7**
Արևելյան/Կենտր. Եվրոպայի և Մերձբալթյան երկրներ														
128	Բուլղարիա	4,7	3,8	4,4	6	6,3	5	6	5	4,8	5,3	4,6	5,6	**61,5**
129	Ռումինիա	5,6	3,4	5,5	5,1	5,8	5,3	6,2	5	4,5	4,3	5,1	5,5	**61,3**
136	Լատվիա	4,5	4,5	4,5	5	6,2	5,5	5,1	4,4	3,7	2,9	4,3	4	**54,6**
140	Էստոնիա	4,7	4,4	4,9	4	5,4	4,4	4,7	3,5	3,5	2,5	5,5	3,7	**51,2**
142	Լեհաստան	4,9	3	3,2	6,1	4,9	4,8	4,4	3,9	4	2,3	3,7	4,4	**49,6**
145	Լիտվա	4,5	2,8	4,2	5,2	6,2	4,7	4,1	3,4	3,5	2,1	3	4,3	**48**
147	Հունաստան	4,5	2,7	4,4	4,7	4,8	4	4,5	3,9	3,6	3,5	2	3,5	**46,1**
Այլ երկրներ														
38	Իրան	6,5	8,5	7,6	6,8	7,4	5,5	8,3	6	8,9	8,6	9,1	6,8	**90**
85	Թուրքիա	6,8	6,6	7,7	5	8	5,3	6,5	5,3	6	7	7,8	6,2	**78,2**

Հարավային Կովկասի երկրների վարկանիշային ենթացուցիչների 2008-2009թթ. համադրություն

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2008թ. համեմատ 2009թ. «Ձախողված երկրների ինդեքսը» զեկույցում Հարավային Կովկասի հանրապետությունների վարկանիշային ենթացուցիչները, ընդհանուր առմամբ, ունեցել են հետընթացի միտումներ: Սակայն երեք երկրների վարկանիշների ենթացուցիչների համեմատականի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն ՀՀ-ի, հարևան երկու երկրների բոլոր ենթացուցիչներն են վատթարացել (բացառությամբ Ադրբեջանի 8-րդ՝ *պետական գործառույթների շարունակվող վատթարացում* ենթացուցչի, որը նույնությամբ պահպանել է նախորդ տարվա 5,5 ցուցանիշը): Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա վերջինիս վարկանիշային երեք ենթացուցիչներում (2-րդ՝ փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ, 6-րդ՝ կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում և 8-րդ՝ պետական գործառույթների շարունակվող վատթարացում ենթացուցիչներ) 2008թ. համադրությամբ առաջընթաց է արձանագրվել: Իսկ 4-րդ՝ *մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք* ենթացուցիչը պահպանել է 2008թ. 6,7 միավորը *(Աղյուսակ 6):*

Աղյուսակ 6

Հարավային Կովկասի երկրների վարկանիշների ենթացուցիչները, 2008-2009թթ.

Տարի	Դիրք	Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	Ընդհանուր
ՀՀ														
2008	109	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	**70.7**
2009	101	5,9	7,2	6	6,7	6,5	5,3	7,1	5,4	6,1	5,3	6,9	5,9	**74,3**
Ադրբեջան														
2008	64	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	**81.0**
2009	56	6,4	8,2	7,9	5,7	7,4	6,1	8,2	5,5	7	7,3	7,9	7	**84,6**
Վրաստան														
2008	56	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	**83.8**
2009	33	6,4	8,3	8,5	6	7,5	6	9	6,3	7,5	7,9	8,9	9,5	**91,8**

Բրուքինգի ինստիտուտ. զարգացող աշխարհում պետության թուլության ինդեքսը-2008թ.
Index of State weakness in The Developing World-2008

Բրուքինգի ինստիտուտը ԱՄՆ կառավարության հետ փոխգործակցող, վերջինիս վերլուծական ու հետազոտական նյութերով սպասարկող կազմակերպություն է և գտնվում է Վաշինգտոնում: Հիմնադրվել է 1916թ.՝ որպես ԱՄՆ կառավարության հետազոտական ինստիտուտ: Վաշինգտոնի հնագույն «ուղեղային կենտրոններից» մեկը համարվող այս հաստատությունը հետազոտություններ է իրականացնում սոցիոլոգիայի տարբեր հարցերի, կառավարման, գլոբալ զարգացման և արտաքին քաղաքականության շուրջ: Ինստիտուտի շրջանակներում իրականացվում է հինգ հիմնական ծրագիր՝

- տնտեսագիտական հետազոտություններ
- կառավարման հետազոտություններ
- արտաքին քաղաքականության հետազոտություններ
- գլոբալ տնտեսության և զարգացման ծրագիր
- քաղաքային/*metropolitan* քաղաքականության ծրագիր:

Բրուքինգի ինստիտուտի շրջանակներում գործում են քաղաքական հիմնահարցերի հետազոտման տարբեր վերլուծական կենտրոններ, որոնցից են.

- Բրոունի կրթական քաղաքականության կենտրոնը
- Հյուսիսարևելասիական քաղաքական հետազոտությունների կենտրոնը

● Երեխաների և ընտանիքների հարցերով կենտրոնը
● Սոցիալական և տնտեսական դինամիկաների հարցերով կենտրոնը
● ԱՄՆ և Եվրոպայի կենտրոնը
● Ենգելբերգի առողջության բարելավման կենտրոնը
● Ջոն Թորնթոնի Չինաստանի հարցերով կենտրոնը
● Սաբանի մերձավորարևելյան քաղաքականության կենտրոնը (հիմնադրվել է 2002թ.)։

Բրուքինգի ինստիտուտում աշխատում է շուրջ 140 գիտնական-վերլուծաբան, և ոչ միայն Վաշինգտոնի գրասենյակում։ 2004թ. կազմակերպության ֆինանսական կապիտալը $258 մլն է, որի հիմնական մասը ստացվել է Ֆյու Չերիթբբլ Թրասթս հասարակական կազմակերպության, ՄաքԱրթուր հիմնադրամի, Քարնեգի կորպորացիայի ֆինանսական միջոցներից, ԱՄՆ, Ճապոնիայի և Մեծ Բրիտանիայի կառավարություններից։

Բրուքինգի ինստիտուտի գլոբալ տնտեսության և զարգացման ծրագրի շրջանակներում վերջերս իրականացվեց, այսպես կոչված, պետությունների թուլության վարկանիշային հետազոտությունը *(Index of State Weakness in The Developing World)*։ Վարկանիշային հետազոտության նախաձեռնությունը ծագեց 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո. Միացյալ Նահանգների, ինչպես նաև այլ երկրների ղեկավար մարմինները համակարծիք էին, որ միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքները՝ ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի տարածում, կազմակերպված հանցավորություն, հակամարտություններ և այլն, մասամբ սկիզբ են առնում աշխարհի ամենաթույլ երկրներից։ Ի դեպ, թույլ երկրներից եկող մարտահրավերների հարցը հստակ ձևակերպվեց նաև 2002թ. ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթում։

Երկրների թուլության վարկանիշային հետազոտությունը նպատակ ուներ ԱՄՆ և դաշնակից պետությունների որոշումներ կայացնող մարմիններին համարժեք տեղեկատվություն և վերլուծություններ տրամադրել այդ պետություններից սպասվող սպառնալիքների վերաբերյալ: Վարկանիշային նախագիծը, որը ներառում է 141 զարգացող երկիր, գլխավորել են կազմակերպության գիտական փորձագետներ Սյուզան Ռայսն ու Սթյուարթ Պատրիկը:

«Զարգացող աշխարհի թույլ երկրների ինդեքսը» հետազոտությունում երկրների վարկանիշները սահմանվել են 4 հիմնական կատեգորիաների կամ ցուցիչների հիման վրա՝

- տնտեսական
- քաղաքական
- անվտանգություն
- սոցիալական բարեկեցություն:

Նշված կատեգորիաներից յուրաքանչյուրը ներառում է համապատասխանաբար 5 ենթացուցիչ կամ ենթաինդիկատոր (տե՛ս *Աղյուսակ 1)*:

Աղյուսակ 1

Վարկանիշային ենթացուցիչների ցուցակը՝ ըստ հինգ հիմնական կատեգորիաների[1]

տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն
1. Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ) (մեկ շնչին ընկնող)	6. Կառավարման արդյունավետություն	11. Հակամարտության ինտենսիվություն	16. Երեխաների մահացություն
2. ՀՆԱ աճ	7. Օրենքի ուժ	12. Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	17. Նախադպրոցական ուսուցման ավարտ
3. Եկամտի անհավասարություն	8. Խոսքի ազատություն և պատասխանատվություն	13. Հեղաշրջման միջադեպեր	18. Թերսնուցում
4. Ինֆլյացիա	9. Կոռուպցիայի վերահսկում	14. Մարդու իրավունքների ոտնահարում	19. Մաքուր ջրի աղբյուրներից, սանիտարահիգիենիկ պայմաններից օգտվող բնակչության տոկոսը
5. Կարգավորման (հանրային, մասնավոր սեկտոր) որակ	10. Ազատության վարկանիշներ	15. Հակամարտությունից տուժած տարածք	20. Կյանքի տևողություն

[1] Ենթացուցիչների վիճակագրությունը վերցված է Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ֆրիդրմ Հաուզի, Սենդի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրական տվյալներից:

Աղյուսակ 2

Պետությունների թուլության ընդհանուր կամ ամփոփիչ աստիճանավորումը, փակագծերում նշվում է երկրի զբաղեցրած դիրքը

Ցածրագույն սանդղակ/Bottom quintile	0,52-4,88 (1-28)
Երկրորդ սանդղակ	5,12-5,94 (29-56)
Երրորդ սանդղակ	6,07-6,72 (57-84)
Չորրորդ սանդղակ	6,78-7,61 (85-112)
Գագաթային սանդղակ/Top quintile	7,63-9,41 (113-141)

Աղյուսակ 3

Պետությունների թուլության աստիճանավորումը՝ ըստ ենթացուցիչների

Աստիճանավորում	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	ՀԱԵ
Ցածրագույն սանդղակ/Bottom quintile	0,00-5,04	0,00-3,09	0,00-6,01	0,00-3,89	100-460
Երկրորդ սանդղակ	5,05-5,78	3,1-4,50	6,02-7,43	3,90-6,33	470-1080
Երրորդ սանդղակ	5,78-6,33	4,51-5,50	7,44-8,09	6,34-8,34	1090-2430
Չորրորդ սանդղակ	6,33-7,06	5,51-6,63	8,10-8,54	8,35-9,40	2440-4420
Գագաթային սանդղակ/Top quintile	7,07-10,00	6,64-10,00	8,55-10,00	9,41-10,00	4430-11,000

Աղբյուրը՝ Brookings Institution. Global Economy and Development. Index of State Weakness in The Developing World_2008

Վարկանիշային նախագծում երկրների թուլության կամ ձախողվածության աստիճանավորումը հիմնվում է մեթոդաբանական վեցաստիճան կառուցվածքի վրա, որը ենթադրում է նաև ընդհանուր ցուցանիշային կամ թվային դասակարգում (այն է՝ վատագույն ցուցանիշը 0,00-ն է, լավագույնը՝ 10,00)։

«Զարգացող աշխարհի թույլ երկրները» վարկանիշային նախագծում ընդգրկված առաջին երեք երկրները՝ Սոմալին, Աֆղանստանը և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը (զեկույցում ներառված 141 երկրների շարքում վատագույն վարկանիշային ցուցանիշներն ունեն. բոլոր ցուցիչները ցածրագույն սանդղակում են), նախագծի կազմակերպիչների կողմից անվանվում են *չկայացած երկրներ (Failed States)*։ Ցածրագույն սանդղակի մնացած հատվածը, որտեղ ներառվել են 4-28 թվային սահմաններում ընդգրկված երկրները, *կրիտիկական թույլ երկրներն* են (հասկանալի է, որ ցածրագույն սանդղակը կազմված է վարկանիշային աստիճանավորման երկու մասերից)։ Կրիտիկական թույլ երկրների շարքում, որը գլխավորում է Իրաքը, հիմնականում ներառված են աֆրիկյան երկրները (նշենք նաև, որ այստեղ է ընդգրկված նաև Հյուսիսային Կորեան) (*Աղյուսակ 5*)։

Երկրորդ սանդղակը, որտեղ ընդգրկված երկրներն անվանվել են ուղղակի *թույլ երկրներ* և նախորդ՝ ցածրագույն սանդղակի երկու հատվածների համադրությամբ սոցիալ-տնտեսական, քաղաքական, անվտանգության առավել կայացած և կայուն ինստիտուտներ ունեն, գտնվում է 29-56 թվային սահմաններում։ Այստեղ են ներառվել մասամբ աֆրիկյան երկրները, ինչպես նաև Պակիստանը, Կենտրոնական Ասիայի հինգ հանրապետություններից երեքը՝ Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, ինչպես նաև Կոլումբիան, Բանգլադեշը։

Երրորդ սանդղակում ներառված երկրները, որոնք գտնվում են 57-84 թվային սահմաններում, ըստ էության զարգացող աշխարհի թույլ

երկրների վարկանիշային աստիճանակարգում միջին դիրք են զբաղեցնում: Այստեղ ներառված են Ալժիրը, Ֆիլիպինները, Սիրիան, Կուբան, ԱՊՀ երկրներից 4-ը՝ Ռուսաստանը, Ղրղզստանը, Ադրբեջանն ու Բելառուսը, ինչպես նաև Չինաստանը, Վենեսուելան և Իրանը (*տես՛ Աղյուսակներ 4 և 5*):

Չորրորդ՝ նախավերջին սանդղակում (85-112), որը գագաթային սանդղակից հետո համարվում է լավագույնը, ընդգրկվել են ԱՊՀ երկրներից՝ Մոլդովան, Ղազախստանը, Վրաստանը, ՀՀ-ն և Ուկրաինան, ինչպես և Թուրքիան, Սերբիան, Ալբանիան: Վերջին սանդղակը, որը գլխավորում է Բոսնիա-Հերցեգովինան, ներառում է Մակեդոնիան, Խորվաթիան, Սլովակիան, Չիլին, Արգենտինան, Մեքսիկան, Ուրուգվայը, Հորդանանը, արևելաեվրոպական երկրներից՝ Բուլղարիան, Ռումինիան, Հունգարիան, նաև Լեհաստանը, մերձբալթյան երկրներից՝ Լատվիան և Լիտվան:

Աղյուսակ 4-ում առավել ցայտուն երևում է, որ ՀՀ-ն իր վարկանիշով (7.34 միավոր, 105-րդ դիրք), Ուկրաինայից բացի (7.38 միավոր, 107-րդ դիրք), գերազանցում է ԱՊՀ բոլոր երկրներին: Այսպիսով, ՀՀ-ն և Ուկրաինան վարկանիշներով ընդհուպ մոտենում են արևելաեվրոպական երկրներից Ռումինիային (7.91 միավոր, 121-րդ դիրք), Բուլղարիային, Լեհաստանին, մերձբալթյան երկրներից՝ Լատվիային ու Լիտվային: Վրաստանը նույնպես բարձր ցուցանիշ է արձանագրել և ԱՊՀ երկրների շարքում ամփոփում է լավագույն եռյակը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշային ցուցանիշը ԱՊՀ երկրների շարքում միջին դիրքում է (6.54 միավոր, 80-րդ դիրք): Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Թուրքիան վարկանիշով գերազանցում է թե՛ Ռուսաստանին, թե՛ Իրանին և թե՛ Չինաստանին և 7.18 միավորով զբաղեցնելով 98-րդ դիրքը՝ ԱՊՀ երկրներից զիջում է միայն ՀՀ-ին և Ուկրաինային:

Ի տարբերություն Ռուսաստանի, Ադրբեջանի և Բելառուսի

(երրորդ՝ միջնամասային աստիճանակարգ), ՀՀ-ն, Ուկրաինան, Վրաստանը Մոլդովայի, Ղազախստանի և Թուրքիայի հետ ներառ-ված են նախավերջին՝ չորրորդ սանդղակում (Ուկրաինան եզրափակում է չորրորդ սանդղակը)։

Եզրակացություններ

Այսպիսով, «Զարգացող աշխարհի թույլ երկրները» վարկանիշային նախագծում ՀՀ մասով, որպես հիմնական հետևություն, կարելի է նշել այն հանգամանքը, որ երկիրն իր վարկանիշով ընդգրկվել է պետությունների թուլության աստիճանավորման համար առանձնացված հնգաստիճան համակարգի չորրորդ սանդղակում, որը վերջին սանդղակի հետ միասին համարվում է լավագույն ցուցանիշ։ ՀՀ բարձր վարկանիշը հաստատող մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ Հայաստանն իր վարկանիշով, Ուկրաինայից բացի, գերազանցում է ԱՊՀ անդամ մյուս բոլոր պետությունների ցուցանիշները։ ՀՀ-ին զիջում են հարևան մյուս երկրները՝ Իրանն ու Թուրքիան։ Անհրաժեշտ է նշել նաև, որ ի տարբերություն ԱՊՀ անդամ այլ պետությունների, ՀՀ-ն (ինչպես նաև Ուկրաինան), այս նախագծի արդյունքների համաձայն, վարկանիշային արդյունքներով ընդհուպ մոտեցել է արևելաեվրոպական երկրներից Ռումինիային, Բուլղարիային, որոնք արդեն ընդգրկվում են բարձրագույն աստիճանակարգում։

Աղյուսակ 4

ԱՊՀ, մերձբալթյան, արևելաեվրոպական և այլ երկրներ, 2008թ.

դիրքը	երկիրը	ամփոփիչ վարկանիշ	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	Մեկ շնչին ընկնող Համախառն ազգային եկամուտ
35	Թուրքմենստան	5,27	5,05	1,40	7,88	6,75	1700
36	Ուզբեկստան	5,30	5,20	1,78	6,66	7,54	610
42	Տաջիկստան	5,35	6,18	3,03	6,39	5,82	390
65	Ռուսաստան	6,20	7,14	3,81	4,83	9,04	5780
66	Իրան	6,25	5,51	3,32	6,91	9,28	3000
73	Ղրղզստան	6,39	6,27	3,62	7,53	8,14	490
74	Չինաստան	6,41	6,89	3,69	6,85	8,21	2010
80	Ադրբեջան	6,54	7,85	3,36	7,06	7,89	1850
81	Բելառուս	6,63	6,57	2,31	8,24	9,41	3380
88	Մոլդովա	6,89	6,41	4,69	7,93	8,54	1100
89	Ղազախստան	6,92	7,43	3,59	8,33	8,31	3790
90	Վրաստան	6,99	6,58	5,66	7,15	8,58	1560
98	Թուրքիա	7,18	7,32	6,53	5,83	9,06	5400
105	ՀՀ	7,34	7,97	4,73	8,23	8,44	1930
107	Ուկրաինա	7,38	6,92	5,34	7,90	9,34	1950
121	Ռումինիա	7,91	7,91	6,77	8,42	8,54	4850
127	Բուլղարիա	8,38	8,05	7,21	8,61	9,64	3990
135	Լեհաստան	9,01	8,95	8,17	8,98	9,95	8190
136	Լատվիա	9,08	9,18	8,54	9,45	9,16	8,100
138	Լիտվա	9,27	9,33	8,44	9,63	9,69	7870
140	Հունգարիա	9,41	10,00	8,92	9,01	9,69	10950
141	Սլովակիա	9,41	9,95	8,68	9,32	9,68	9870

Աղյուսակ 5

Զարգացող աշխարհի թույլ երկրները (նշված են առանձնացված երկրները), 2008թ.

դիրքը	երկիրը	ընդհանուր ցուցանիշը	տնտե-սական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	Մեկ շնչին ընկնող Համախառն ազգային եկամուտ
2	Աֆղանստան	1,65	4,51	2,08	0,00	0,00	271
4	Իրաք	3,11	2,87	1,67	1,63	6,27	1134
15	Հյուսիսային Կորեա	3,87	0,52	0,95	7,28	6,73	չի նշվում
33	Պակիստան	5,23	6,58	3,52	4,69	6,13	770
35	Թուրքմենստան	5,27	5,05	1,40	7,88	6,75	1700
36	Ուզբեկստան	5,30	5,20	1,78	6,66	7,54	610
42	Տաջիկստան	5,35	6,18	3,03	6,39	5,82	390
62	Կուբա	6,17	3,60	2,94	8,28	9,88	չի նշվում
65	Ռուսաստան	6,20	7,14	3,81	4,83	9,04	5780
66	Իրան	6,25	5,51	3,32	6,91	9,28	3000
67	Հնդկաստան	6,28	6,72	6,72	4,87	6,79	820
73	Ղրղզստան	6,39	6,27	3,62	7,53	8,14	490
74	Չինաստան	6,41	6,89	3,69	6,85	8,21	2010
80	Ադրբեջան	6,54	7,85	3,36	7,06	7,89	1850
81	Բելառուս	6,63	6,57	2,31	8,24	9,41	3380
88	Մոլդովա	6,89	6,41	4,69	7,93	8,54	1100
89	Ղազախստան	6,92	7,43	3,59	8,33	8,31	3790
90	Վրաստան	6,99	6,58	5,66	7,15	8,58	1560
98	Թուրքիա	7,18	7,32	6,53	5,83	9,06	5400
99	Բրազիլիա	7,22	6,12	6,42	7,32	9,01	4730
105	ՀՀ	7,34	7,97	4,73	8,23	8,44	1930
107	Ուկրաինա	7,38	6,92	5,34	7,90	9,34	1950
121	Ռումինիա	7,91	7,91	6,77	8,42	8,54	4850
127	Բուլղարիա	8,38	8,05	7,21	8,61	9,64	3990
135	Լեհաստան	9,01	8,95	8,17	8,98	9,95	8190
136	Լատվիա	9,08	9,18	8,54	9,45	9,16	8,100
138	Լիտվա	9,27	9,33	8,44	9,63	9,69	7870
140	Հունգարիա	9,41	10,00	8,92	9,01	9,69	10950

Աղբյուրը `Brookings Institution. Global Economy and Development. Index of State Weakness in The Developing World_2008, http://www.brookings.edu/reports/2008/02_weak_states_index.aspx

Գրաֆիկ 1. ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում, 2008թ.
(ըստ վարկանիշային գունավորված աստիճանավորման)



«Ֆրիդըմ Հաուզ» (Freedom House). «Ազատության վարկանիշն աշխարհում» 2007-2009թթ.[1]

Երկու խոսք կազմակերպության մասին

«Ֆրիդըմ Հաուզը» անկախ, մասնավոր կազմակերպություն է, որի առաքելությունն աշխարհում ազատության տարածումն ու ամրապնդումն է: Կազմակերպությունն ստեղծվել է 1941թ. Միացյալ Նահանգներում, ունի Հոգաբարձուների խորհուրդ, որտեղ ներգրավված են ԱՄՆ Կոնգրեսի թե՛ դեմոկրատ, թե՛ հանրապետական անդամներ, թե՛ անկուսակցականներ: Ֆինանսավորվում է մասնավոր հիմնադրամների կողմից կամ անհատական նվիրատվություններից, ինչպես նաև ԱՄՆ, ԵՄ կառավարություններից ստացվող դրամաշնորհներից: Հատկանշական է, որ վերջին տարիներին կազմակերպությունը դրամաշնորհներ է ստանում ԱՄՆ Զարգացման միջազգային կազմակերպությունից և Պետդեպարտամենտի կողմից՝ տարբեր նախագծերի իրականացման նպատակով:

Մեթոդաբանական հարցեր

«Ֆրիդըմ Հաուզ»-ի «Ազատության վարկանիշն աշխարհում» 2007թ. տարեկան զեկույցում, ինչպես և նախորդ զեկույցներում, պահպանվել

[1] «Ֆրիդըմ Հաուզի» տարեկան զեկույցները հիմնվում են նախորդած տարիների տվյալների վրա:

են վարկանիշային հետազոտության մեթոդաբանության հիմունքները: Առանձնացված երկրներում ազատության վարկանիշի սահմանման համար կիրառվում են հիմնական երկու ամփոփիչ ցուցիչներ՝ քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություն: Դրանք ձևավորվում են 7 ենթացուցիչների հանրագումարի հիման վրա, որոնցից երեքը քաղաքական իրավունքների, մյուսները քաղաքացիական ազատության ցուցիչներ են.

Քաղաքական իրավունքներ

1. ընտրական գործընթաց
2. քաղաքական պլյուրալիզմ և մասնակցություն
3. կառավարության գործառնություն

Քաղաքացիական ազատություն

4. ինքնարտահայտման և հավատքի ազատություն
5. հաղորդակցական և կազմակերպչական իրավունքներ
6. օրենքի ուժ
7. անձնական ինքնակառավարում և ինդիվիդուալ իրավունքներ *(personal autonomy and individual rights).*

Յուրաքանչյուր ցուցիչ և ենթացուցիչ ենթադրում է թվային միավոր 1-7 թվերի սահմանում, որտեղ 1 ցուցանիշը բնորոշում է տվյալ պետության քաղաքացիական ազատության կամ քաղաքական իրավունքների ազատության բարձրագույն, 7-ը՝ ամենացածր վարկանիշը: Իսկ ենթացուցիչների պարագայում, ընդհակառակը, ինչքան բարձր են թվերը, այնքան ազատության ավելի բարձր սանդղակ կունենան հիմնական ամփոփիչ ցուցիչները:

Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություն ցուցիչների համադրումը տալիս է տվյալ երկրի ազատության վարկանիշային կարգավիճակը՝ պետությունների ազատ, մասամբ

ազատ և ոչ ազատ դասակարգմամբ: 1-2.5-ը համարվում է ազատ, 3.0-5.0-ը՝ մասամբ ազատ, իսկ 5.5-7.0-ը՝ ոչ ազատ պետություն:

Ազատության վարկանիշը 2007թ., ՀՀ և այլ երկրներ

Աղյուսակ 1-ում պատկերված վիճակագրությունից պարզ է դառնում, որ 2007թ. հաշվետվությունում ԱՊՀ երկրների շարքում ազատության վարկանիշով (քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություն) ՀՀ-ն զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը՝ համարվելով մասամբ ազատ երկիր (համապատասխանաբար՝ 5-4 միավոր): Հարավկովկասյան հանրապետություններից ՀՀ-ին գերազանցում է Վրաստանի ցուցանիշը (3-3), որը նույնպես մասամբ ազատ պետությունների շարքին է դասվում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այն ազատության վարկանիշով գտնվում է ԱՊՀ երկրների շարքում, միջին դիրք ունի՝ դասվելով ոչ ազատ երկրների թվին (6-5 միավոր): Հարևան մյուս երկրներից ՀՀ-ն զիջում է Թուրքիային (3-3). վերջինս իր ենթացուցիչների միջինացված հանրագումարով գերազանցում է Վրաստանին (*Աղյուսակ 2*):

Աղյուսակ 1

Ազատության վարկանիշը ԱՊՀ և մերձբալթյան երկրներում, 2007թ.

երկիր	քաղաքական իրավունք	քաղաքացիական ազատություն	կարգավիճակ
ԱՊՀ երկրներ			
Ուկրաինա	3	2	ազատ
Վրաստան	3	3	մասամբ ազատ
Մոլդովա	3	4	մասամբ ազատ
ՀՀ	5	4	մասամբ ազատ
Ղրղզստան	5	4	մասամբ ազատ
Ռուսաստան	6	5	ոչ ազատ
Ադրբեջան	6	5	ոչ ազատ
Ղազախստան	6	5	ոչ ազատ
Տաջիկստան	6	5	ոչ ազատ
Բելառուս	7	6	ոչ ազատ
Ուզբեկստան	7	7	ոչ ազատ
Թուրքմենստան	7	7	ոչ ազատ
Մերձբալթյան երկրներ			
Էստոնիա	1	1	ազատ
Լատվիա	1	1	ազատ
Լիտվա	1	1	ազատ
Այլ երկրներ			
Թուրքիա	3	3	մասամբ ազատ

Աղյուսակ 2

Ազատության վարկանիշը. ՀՀ և հարակից երկրներ, 2007թ.

երկիր	քաղաքական իրավունք	քաղաքացիական ազատություն	կարգավիճակ	ենթացուցիչներ						
				1	2	3	4	5	6	7
Թուրքիա	3	3	մասամբ ազատ	9	12	7	12	7	8	10
Վրաստան	3	3	մասամբ ազատ	9	9	7	12	8	7	10
ՀՀ	5	4	մասամբ ազատ	4	5	4	8	5	6	9
Ռուսաստան	6	5	ոչ ազատ	3	5	3	8	4	4	7
Ադրբեջան	6	5	ոչ ազատ	3	4	3	7	3	4	8
Իրան	6	6	ոչ ազատ	3	4	3	4	2	3	4

Աղբյուրը՝ http://www.freedomhouse.org/template.cfm?page=372&year=2007

Աղյուսակ 3-ում ներկայացված ՀՀ ու հարակից երկրների 2000-2007թթ. ազատության վարկանիշների համադրությունից երևում է, որ 2000-2004թթ. թե՛ ՀՀ, թե՛ Վրաստանի ազատության ցուցանիշները մնացել են անփոփոխ, իսկ 2004թ. ի վեր, եթե Վրաստանը բարելավել է վարկանիշը, ապա ՀՀ դեպքում նկատվում է հակառակ երևույթը (քանակական՝ մեկական միավոր, բայց ոչ որակական փոփոխություն): Նույն տրամաբանությունն է գործում նաև Ռուսաստանի պարագայում, որը 2004թ. սկսած ունեցել է քանակական ու որակական բացասական փոփոխություն (դասվել է ոչ ազատ երկրների թվին): Սույն ժամանակահատվածում անփոփոխ են մնացել Ադրբեջանի, ինչպես նաև Իրանի ցուցանիշները: Ադրբեջանի վարկանիշը 2004թ. ի վեր որակական առումով բացասական միտում է գրանցել՝ անցնելով ոչ ազատ երկրների շարքը (*տե՛ս էջ 117-ի տողատակ 1-ը*): Թուրքիան ազատության վարկանիշով, որը 2000-2002թթ. անփոփոխ է եղել, 2003-2004թթ. բարելավել է արդյունքները, որոնք պահպանվել են հաջորդ հաշվետվություններում:

Աղյուսակ 3

Ազատության վարկանիշը 2000-2007թթ., ՀՀ և հարակից երկրներ

տարի	ՀՀ			Վրաստան			Ադրբեջան			Թուրքիա			Ռուսաստան			Իրան		
	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ
2000	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՄԱ[1]	5	4	ՄԱ	5	5	ՄԱ	6	6	ՈԱ
2001	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՄԱ	5	4	ՄԱ	5	5	ՄԱ	6	6	ՈԱ
2002	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՄԱ	5	4	ՄԱ	5	5	ՄԱ	6	6	ՈԱ
2003	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՄԱ	3	4	ՄԱ	5	5	ՄԱ	6	6	ՈԱ
2004	4	4	ՄԱ	4	4	ՄԱ	6	5	ՈԱ	3	4	ՄԱ	5	5	ՄԱ	6	6	ՈԱ
2005	5	4	ՄԱ	3	4	ՄԱ	6	5	ՈԱ	3	3	ՄԱ	6	5	ՈԱ	6	6	ՈԱ
2006	5	4	ՄԱ	3	3	ՄԱ	6	5	ՈԱ	3	3	ՄԱ	6	5	ՈԱ	6	6	ՈԱ
2007	5	4	ՄԱ	3	3	ՄԱ	6	5	ՈԱ	3	3	ՄԱ	6	5	ՈԱ	6	6	ՈԱ

ՔԻ – Քաղաքական իրավունքներ
ՔԱ - Քաղաքացիական ազատություն,
Կ – Կարգավիճակ (Ազատ – Ա, Մասամբ ազատ – ՄԱ, Ոչ ազատ – ՈԱ)
Աղբյուրը՝ http://www.freedomhouse.org

[1] Ադրբեջանի 2000-2003թթ. ցուցանիշները կարող են լրիվ համապատասխանել ոչ ազատ վարկանիշին, սակայն, կազմակերպության մեթոդաբանության համաձայն, մասամբ ազատ և ոչ ազատ կարգերի բաժանարար գիծը համարվում է 5.5-ը: Ռուսի, եթե երկու հիմնական ցուցիչներից մեկը 6 է, մյուսը՝ 5, ապա երկիրը կարող է դասվել ինչպես ազատ, այնպես էլ ոչ ազատ երկրների շարքին: Կազմակերպության 2004-2007թթ. զեկույցների համաձայն (որտեղ մեթոդաբանության փոփոխություններ կան՝ կապված այդ կետի հետ), Ադրբեջանը կրկին 6-5 միավորով ներառվել է ոչ ազատ երկրների մեջ:

Ազատության վարկանիշ 2008-2009թթ., ՀՀ-ն այլ երկրների շարքում

Կազմակերպության «Ազատության վարկանիշը» 2008թ. զեկույցում ՀՀ-ն պահպանում է վերջին զեկույցներում արձանագրված ցուցանիշները՝ ԱՊՀ երկրների շարքում կրկին զբաղեցնելով առաջատար դիրքեր: Հարավկովկասյան հանրապետություններից միավորի հետընթաց է նկատվել Վրաստանի պարագայում, որի երկու ենթացուցիչները մեկական միավորով նվազել են (4/4): Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինս նույնպես պահպանել է նախորդ ցուցանիշը՝ շարունակելով դասվել ԱՊՀ ոչ ազատ երկրների շարքին (*Աղյուսակ 4*):

Աղյուսակ 4

ՀՀ և այլ երկրներ, 2008թ.

երկիր	քաղաքական իրավունք	քաղաքացիական ազատություն	կարգավիճակ
ԱՊՀ երկրներ			
Ուկրաինա	3	2	ազատ
Վրաստան	4	4	մասամբ ազատ
Մոլդովա	3	4	մասամբ ազատ
ՀՀ	5	4	մասամբ ազատ
Ղրղզստան	5	4	մասամբ ազատ
Ռուսաստան	6	5	ոչ ազատ
Ադրբեջան	6	5	ոչ ազատ
Ղազախստան	6	5	ոչ ազատ
Տաջիկստան	6	5	ոչ ազատ
Բելառուս	7	6	ոչ ազատ
Ուզբեկստան	7	7	ոչ ազատ
Թուրքմենստան	7	7	ոչ ազատ
Մերձբալթյան երկրներ			
Էստոնիա	1	1	ազատ
Լատվիա	2	1	ազատ
Լիտվա	1	1	ազատ
Այլ երկրներ			
Թուրքիա	3	3	մասամբ ազատ

Ինչ վերաբերում է «Ֆրիդրմ Հաուզի» վերջին՝ 2009թ. վարկանիշային հաշվետվությանը, ապա այստեղ ՀՀ վարկանիշում փոփոխություն է նկատվել՝ ի հաշիվ քաղաքական իրավունքների ենթացուցչում տեղ գտած մեկ միավորի հետընթացի: Հարավկովկասյան մյուս երկու հանրապետությունները շարունակում են պահպանել 2008թ. վարկանիշային արդյունքները: Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 5-ից*, ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում չի զիջել դիրքերը և շարունակում է զբաղեցնել 4-րդ հորիզոնականը՝ դասվելով մասամբ ազատ երկրների շարքին:

Աղյուսակ 5

ՀՀ և այլ երկրներ, 2009թ.

երկիր	քաղաքական իրավունք	քաղաքացիական ազատություն	կարգավիճակ
ԱՊՀ երկրներ			
Ուկրաինա	3	2	ազատ
Վրաստան	4	4	մասամբ ազատ
Մոլդովա	4	4	մասամբ ազատ
ՀՀ	6	4	մասամբ ազատ
Ղրղզստան	5	4	մասամբ ազատ
Ռուսաստան	6	5	ոչ ազատ
Ադրբեջան	6	5	ոչ ազատ
Ղազախստան	6	5	ոչ ազատ
Տաջիկստան	6	5	ոչ ազատ
Բելառուս	7	6	ոչ ազատ
Ուզբեկստան	7	7	ոչ ազատ
Թուրքմենստան	7	7	ոչ ազատ
Մերձբալթյան երկրներ			
Էստոնիա			ազատ
Լատվիա	2	1	ազատ
Լիտվա	1	1	ազատ
Այլ երկրներ			
Թուրքիա	3	3	մասամբ ազատ

Ազատության վարկանիշը 2002-2007թթ., հակամարտություններ

«Ֆրիդրմ Հաուզ» կազմակերպության վարկանիշային զեկույցներում ներառվում են նաև հակամարտությունները: Ներկայացնում ենք Հարավային Կովկասի և այլ չճանաչված հանրապետությունների ու հակամարտային այլ գոտիների 2002-2007թ. ազատության վարկանիշները (զեկույցում Հարավային Օսիան չի ընդգրկված): *Աղյուսակ 6-ում* տրված վարկանիշային վիճակագրությունից կարելի է նկատել, որ 2002-2006թթ. ԼՂՀ-ն միայն 2002թ. է դասվել ոչ ազատ կարգում, մնացած տարիներին, բարելավելով ազատության վարկանիշը, անցել է մասամբ ազատ կարգ: Ի տարբերություն ԼՂՀ-ի, նշված ժամանակաշրջանում, բացառությամբ 2006թ., Աբխազիան ոչ ազատ կարգում է եղել: Ազատության վարկանիշով թե՛ ԼՂՀ-ին, թե՛ Աբխազիային զիջում է ԱՊՀ մեկ այլ չճանաչված հանրապետություն՝ Մերձդնեստրը, որը 2002-2006թթ. կտրվածքով դասվել է ոչ ազատ կարգում՝ 6/6 ցուցիչ:

Աղյուսակ 6

Ազատության վարկանիշը. ԱՊՀ տարածքի հակամարտային գոտիներ, 2002-2006թթ.

Երկիր	2002			2003			2004			2005			2006		
	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ
ԼՂՀ	5	6	ՈԱ	5	5	ՄԱ	5	5	ՄԱ	5	5	ՄԱ	5	5	ՄԱ
Աբխազիա	6	5	ՈԱ	6	5	ՈԱ	6	6	ՈԱ	6	5	ՈԱ	5	5	ՄԱ
Մերձդնեստր	6	6	ՈԱ	6	6	ՈԱ	6	6	ՈԱ	6	6	ՈԱ	6	6	ՈԱ
Չեչնիա	7	7	ՈԱ	7	7	ՈԱ	7	7	ՈԱ	7	7	ՈԱ	7	7	ՈԱ

ՔԻ – Քաղաքական իրավունքներ
ՔԱ - Քաղաքացիական ազատություն,
Կ – Կարգավիճակ (Ազատ – Ա, Մասամբ ազատ – ՄԱ, Ոչ ազատ – ՈԱ)

Ազատության վարկանիշը 2007-2009թթ., հակամարտություններ

Աղյուսակ 7-ում տրված վարկանիշային վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2007թ. նշված չճանաչված հանրապետությունների ու հակամարտության օջախների շարքում (մասնավորապես ԱՊՀ տարածքում) ԼՂՀ ազատության վարկանիշը բավական բարձր է՝ գերազանցելով Կոսովոյին (6/5), Մերձդնեստրին (6/6) ու Չեչնիային (7/7)։ Բարելավվել է նաև Աբխազիայի ցուցանիշը, սակայն վերջինս ենթացուցիչների հանրագումարով աննշան տարբերությամբ զիջում է ԼՂՀ-ին։

Ինչ վերաբերում է 2008-2009թթ. վարկանիշային զեկույցներին, ապա այստեղ ընդհանուր առմամբ պահպանվել են նախորդ՝ 2007 թվականի արդյունքները։ Նշենք նաև, որ կազմակերպության 2009թ. հաշվետվությունում ներառվել է Հարավային Օսիան, որը 7/6 միավորով դասվել է ոչ ազատ երկրների շարքին։

Աղյուսակ 7

Ազատության վարկանիշը. հակամարտության գոտիներ, 2007թ.

չճանաչված հանրապետ.	քաղաքական իրավունք	քաղաքացիական ազատություն	կարգավիճակ	Ենթացուցիչներ						
				1	2	3	4	5	6	7
Կիպրոս	2	2	ազատ	11	14	9	13	9	12	12
ԼՂՀ	5	5	մասամբ ազատ	6	5	3	8	4	4	5
Աբխազիա	5	5	մասամբ ազատ	5	5	3	8	4	4	5
Կոսովո	6	5	ոչ ազատ	6	5	3	7	6	4	6
Մերձդնեստր	6	6	ոչ ազատ	2	4	1	6	2	2	5
Չեչնիա	7	7	ոչ ազատ	0	0	0	4	0	0	2

Աղյուսակ 8

Ազատության վարկանիշը. հակամարտության գոտիներ, 2008-2009թթ.

Երկիր	2008			2009		
	ՔԻ	ՔԱ	Կ	ՔԻ	ՔԱ	Կ
ԼՂՀ	5	5	ՄԱ	5	5	ՄԱ
Աբխազիա	5	5	ՄԱ	5	5	ՄԱ
Հար. Օսիա	-	-	//	7	6	ՈԱ
Մերձդնեստր	6	6	ՈԱ	6	6	ՈԱ
Չեչնիա	7	7	ՈԱ	7	7	ՈԱ

«Ֆրիդըմ Հաուզ». «Անցումային պետություններ» վարկանիշային հետազոտություն 2007-2009թթ.

«Ֆրիդըմ Հաուզ» կազմակերպությունն ավելի քան մեկ տասնամյակ իրականացնում է նաև մեկ այլ տարեկան վարկանիշային հետազոտություն Եվրոպայի և Եվրասիայի 29 հետխորհրդային հանրապետություններում ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ: «Անցումային պետություններ» վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է 7 ենթացուցիչների հաշվարկի վրա, որոնք են՝

1. ընտրական գործընթաց
2. քաղաքացիական հասարակություն
3. անկախ ԶԼՄ
4. ազգային ժողովրդավարական կառավարում
5. տեղական ժողովրդավարական կառավարում
6. արդարադատություն և նրա անկախությունը
7. կոռուպցիա:

Ուսումնասիրությունում ներառված երկրների ժողովրդավարության վարկանիշները կազմվել են 1-7-ի սահմանում ընկած թվային հաշվարկի հիման վրա, որտեղ ցածրագույն՝ 1 միավորը ներկայացնում է ժողովրդավարության գործընթացների բարձրագույն, 7 միավորը՝ վատագույն արդյունքը:

ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում

«Ֆրիդըմ Հաուզ» կազմակերպության տարեկան վարկանիշային զեկույցների համեմատական վիճակագրությունից պարզվում է, որ 2007-2009թթ. ԱՊՀ երկրների շարքում ՀՀ-ն բավական բարձր ցուցանիշներ է արձանագրել՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը (նույնն է նաև նախորդ՝ 2005-2006թթ. զեկույցների պարագայում, որտեղ ՀՀ-ն նույնպես զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը)։ ԱՊՀ երկրներից ՀՀ-ն վարկանիշային ցուցանիշով զիջում է Ուկրաինային, որի վարկանիշը նշված ժամանակաշրջանում լավագույնն է համարվում ԱՊՀ երկրների շարքում, Վրաստանին և Մոլդովային։ Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշային արդյունքը բավական ցածր է եղել՝ զբաղեցնելով ստորին դիրքեր։

Աղյուսակ 1

ՀՀ-ն այլ երկրների շարքում, 2007թ.[1]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. և անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդավար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3	2,75	3,75	4,75	5,25	4,50	5,75	**4,25**
Վրաստան	4,50	3,50	4	5,50	5,50	4,75	5	**4,86**
Մոլդովա	3,75	3,75	5,25	5,75	5,75	4,50	6	**4,96**
ՀՀ	5,75	3,50	5,75	5,25	5,50	5	5,75	**5,21**
Ղրղզստան	5,75	4,50	5,75	6	6,25	5,50	6	**5,68**
Ռուսաստան	6,50	5,25	6,25	6	5,75	5,25	6	**5,86**
Տաջիկստան	6,50	5	6,25	6,25	5,75	5,75	6,25	**5,96**
Ադրբեջան	6,50	5,25	6,25	6	6	5,75	6,25	**6**
Ղազախստան	6,50	5,75	6,75	6,75	6,25	6,25	6,50	**6,39**
Բելառուս	7	6,50	6,75	7	6,50	6,75	6,25	**6,68**
Ուզբեկստան	6,75	7	7	7	6,75	6,75	6,50	**6,82**
Թուրքմենստան	7	7	7	7	7	7	6,75	**6,96**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,50	2,50	2,25	2,25	1,75	3	**2,14**
Բուլղարիա	1,75	2,50	3,50	3	3	2,75	3,75	**2,89**
Ռումինիա	2,75	2,25	3,75	3,50	3	3,75	4	**3,29**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	2	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,96**
Լատվիա	2	1,75	1,50	2	2,50	1,75	3	**2,07**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,50	2,50	1,75	4	**2,29**

[1] 2007թ. զեկույցը հիմնվում է 2006թ. տվյալների վրա։

Առանձնապես կարևոր է ՀՀ վարկանիշային ենթացուցիչների ուսումնասիրման խնդիրը, որոնց համեմատական վերլուծությունը հնարավորություն կստեղծի առավել հստակ լուսաբանելու ՀՀ վարկանիշավորման հիմնական առանձնահատկությունները: Այսպես, 2007թ. տարեկան հաշվետվության համաձայն, ՀՀ վարկանիշավորման ենթացուցիչների շարքում անհամեմատ բարելավված է քաղաքացիական հասարակության միավորը՝ 3,50, որին հաջորդում են արդարադատության անկախությունը (5 միավոր) և ազգային ժողովրդավարական կառավարման (5,25) ենթացուցիչները: ՀՀ-ն բավական ցածր արդյունք է ունեցել ընտրական գործընթացների, անկախ ԶԼՄ և կոռուպցիայի ցուցիչների պարագայում: Պետք է նկատել, որ 2007թ. համեմատ 2008թ. վարկանիշային զեկույցում ՀՀ ցուցանիշը որակական առումով լուրջ փոփոխություններ չի ունեցել:

Աղյուսակ 2

ՀՀ այլ երկրների շարքում, 2008թ.[1]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. և անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդավար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3	2,75	3,50	4,75	5,25	4,75	5,75	**4,25**
Վրաստան	4,75	3,50	4,25	5,75	5,50	4,75	5	**4,79**
Մոլդովա	3,75	3,75	5,50	5,75	5,75	4,50	6	**5**
ՀՀ	5,50	3,50	5,75	5,25	5,50	5,25	5,75	**5,21**
Ղրղզստան	6	4,50	6	6,25	6,50	6	6,25	**5,93**
Ռուսաստան	6,75	5,50	6,25	6,25	5,75	5,25	6	**5,96**
Ադրբեջան	6,50	5,25	6,25	6	6	5,75	6,25	**6**
Տաջիկստան	6,50	5,50	6	6,25	6	6	6,25	**6,07**
Ղազախստան	6,75	5,50	6,75	6,75	6,25	6,25	6,50	**6,39**
Բելառուս	7	6,50	6,75	7	6,75	6,75	6,25	**6,71**
Ուզբեկստան	7	7	7	7	6,75	6,75	6,50	**6,86**
Թուրքմենստան	7	7	7	7	6,75	7	6,75	**6,93**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,50	2,50	2,25	2,25	1,75	3	**2,14**
Բուլղարիա	1,75	2,50	3,50	3	3	2,75	3,50	**2,86**
Ռումինիա	2,75	2,25	3,75	3,75	3	4	4	**3,36**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	1,75	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,93**
Լատվիա	2	1,75	1,75	2	2,25	1,75	3	**2,07**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,50	2,50	1,75	3,75	**2,25**

[1] 2008թ. զեկույցը հիմնվում է 2007թ. տվյալների վրա:

Ինչ վերաբերում է 2009թ. հաշվետվությանը, ապա այստեղ թեև ՀՀ-ն կարողացել է պահպանել ԱՊՀ երկրների շարքում ունեցած նախկին դիրքը (4-րդ հորիզոնական), սակայն ենթացուցիչների վարկանիշավորման հարցում որոշակի հետընթաց է ունեցել: Այսպես, 2008թ. համեմատ բարելավվել է միայն մեկ՝ կոռուպցիայի ենթացուցիչը, պահպանվել է նաև տեղական ժողովրդավարական կառավարման նախորդ ցուցանիշը, մնացած բոլոր ենթացուցիչներով ՀՀ վարկանիշը հետընթաց է ունեցել: 2009թ. ենթացուցիչների վարկանիշավորման բացասական միտումներն անդրադարձել են այդ տարվա ՀՀ ամփոփ վարկանիշի վրա, որը կազմելով 5,39 միավոր՝ զիջել է նախորդ տարիների դիրքերը (2007-2008թթ. գրանցվել էր միևնույն՝ 5,21-ական միավոր):

Աղյուսակ 3

ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում, 2009թ.[1]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. և անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդավար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3,50	2,75	3,50	5	5,25	5	5,75	**4,39**
Վրաստան	5,25	3,75	4,25	6	5,50	4,75	5	**4,93**
Մոլդովա	4	3,75	5,75	5,75	5,75	4,50	6	**5,07**
ՀՀ	5,75	3,75	6	5,75	5,50	5,50	5,50	**5,39**
Ղրղզստան	6	4,75	6,25	6,50	6,50	6	6,25	**6,04**
Ռուսաստան	6,75	5,75	6,25	6,50	5,75	5,50	6,25	**6,11**
Տաջիկստան	6,50	5,75	6	6,25	6	6,25	6,25	**6,14**
Ադրբեջան	6,75	5,50	6,75	6,25	6,25	5,75	6,50	**6,25**
Ղազախստան	6,75	5,50	6,50	6,75	6,25	6	6,50	**6,32**
Բելառուս	6,75	6,25	6,75	6,75	6,75	6,75	6	**6,57**
Ուզբեկստան	7	7	7	7	6,75	7	6,50	**6,89**
Թուրքմենստան	7	7	7	7	6,75	7	6,75	**6,93**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,75	2,50	2,50	2,50	1,75	3,25	**2,29**
Բուլղարիա	1,75	2,50	3,75	3,25	3	3	4	**3,04**
Ռումինիա	2,50	2,50	3,75	3,75	3	4	4	**3,36**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	1,75	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,93**
Լատվիա	2	1,75	1,75	2,50	2,25	1,75	3,25	**2,18**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,75	2,50	1,75	3,75	**2,29**

[1] Վարկանիշավորումը վերաբերում է 2008թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածին:

ՄԱԿ Զարգացման ծրագիր. Մարդկային զարգացման ինդեքսը 2008-2009թթ.

ՄԱԿ Զարգացման ծրագրի շրջանակներում 1990թ. սկսած իրականացվում է Մարդկային զարգացման ինդեքսը (ՄԶԻ, *Human Development index)* վարկանիշային հետազոտությունը՝ նպաստելու համար աշխարհի տարբեր երկրներում մարդկանց կենսապայմանների ու կենսամակարդակի բարձրացմանը: Ներկայացնենք Մարդկային զարգացման վերջին՝ 2008-2009թթ. վարկանիշային զեկույցները՝ կատարելով ՀՀ և այլ երկրների վարկանիշների համեմատական վերլուծություն:

Մեթոդաբանական տեսանկյունից զեկույցներում ներառված երկրները դասակարգված են ըստ մարդկային զարգացման երեք հիմնական սանդղակների՝ մարդկային զարգացման բարձր, միջին և ցածր ինդեքսներ: Զեկույցներում առանձնացված երկրների վարկանիշները կազմվել են մի շարք հիմնական ենթացուցիչների հիման վրա, որոնցից են կյանքի տևողությունը, մեկ շնչի համար ՀՆԱ մասնաբաժինը, կրթության, ՀՆԱ ինդեքսները և այլն (զեկույցներում ներկայացվում են նաև այլ ենթացուցիչներ, որոնք «սպասարկող» բնույթ են կրում տվյալ պետության ամփոփ վարկանիշը ձևավորելու համար): 2007-2008թթ. հաշվետվությունում յուրաքանչյուր պետության բնակչության կենսամակարդակի վարկանիշավորումը հիմնվում է ՄԶԻ ցուցիչների վրա, որոնք դասակարգվում են հետևյալ կերպ. 0,968-0,800 միավոր՝ բարձր (1-70-րդ դիրք), 0,798-0,502՝ միջին (71-155 դիրք), 0,499-

0,336՝ ցածր (156-177 դիրք) զարգացում ունեցող երկրներ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Մարդկային զարգացման 2007-2008թթ. վարկանիշային զեկույցում ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր են զբաղեցրել Բելառուսը և Ռուսաստանը, որոնք զեկույցում ներառված 177 երկրների մեջ զբաղեցրել են համապատասխանաբար 64 և 67-րդ դիրքերը՝ 0,804 և 0,802 միավորներով[1]: Վերջիններս ԱՊՀ պետությունների շարքում այն երկրներն են, որոնք ընդգրկված են լավագույն՝ մարդկային զարգացման բարձր խմբում: Բելառուսը և Ռուսաստանը լավագույն խմբի վերջին մասում են (խումբը եզրափակում է Բրազիլիան՝ 70-րդ դիրք): Լավագույն խմբում են նաև Արևելյան Եվրոպայի և մերձբալթյան երկրները:

Ինչ վերաբերում է զեկույցում ներառված ԱՊՀ մյուս պետություններին, դրանք բոլորն էլ երկրորդ՝ միջին զարգացման խմբում են: Այս խմբի երկրների շարքում առաջատարը Ղազախստանն է՝ 73-րդ դիրք: Վերջինիս հաջորդում են Ուկրաինան և ՀՀ-ն՝ համապատասխանաբար 76 և 83-րդ դիրքեր: Վերջին երեք հանրապետություններն իրենց վարկանիշներով երկրորդ խմբի վերին մասում են: ՀՀ-ին անմիջապես հաջորդում են Վրաստանն ու Ադրբեջանը, որոնք համապատասխանաբար զբաղեցրել են 96 և 98-րդ հորիզոնականները: ՀՀ-ին մեկ դիրքային միավորով զիջում է նաև հարևան Թուրքիան (84-րդ դիրք): Ինչ վերաբերում է Իրանին, ապա վերջինիս վարկանիշային միավորը՝ 0,775 (94-րդ դիրք) գերազանցում է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին:

[1] 2007-2008թթ. զեկույցը հիմնվում է 2005թ. տարեկան տվյալների վրա:

Զեկույցի վիճակագրության համաձայն, ՀՀ-ում 2005թ. դրությամբ կյանքի միջին տևողությունը կազմել է 71,7 տարի, այն դեպքում, երբ հարևան Վրաստանում և Ադրբեջանում այդ ցուցանիշը եղել է համապատասխանաբար 70,7 և 67,1 տարի: ՀՀ ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվարկով կազմել է $4,945, որը զգալիորեն գերազանցում է Վրաստանի ՀՆԱ-ին՝ $3,365: Ադրբեջանի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվարկով գնահատվել է $5,016՝ գերազանցելով հարավկովկասյան երկու հանրապետություններին: Իսկ կրթության ենթացուցչի արդյունքներով հարավկովկասյան երեք հանրապետություններից լավագույն արդյունքը, ըստ զեկույցի տվյալների, Վրաստանինն է՝ 0,914 միավոր:

Աղյուսակ 1

«Մարդկային զարգացման ինդեքսը 2007-2008թթ.». ՀՀ և այլ երկրներ (զեկույցում ներառված է 177 երկիր)

Երկիր, դիրքը	ՄԶԻ ամփոփ միավոր (2005թ.)	Կյանքի միջին տևողություն (2005թ.)	ՀՆԱ մեկ շնչի համար (ԱՄՆ $-գնողունակության հավասարություն) (2005թ.)	Կրթության ինդեքս	ՀՆԱ ինդեքս
ՄԶԻ բարձր միավոր					
ԱՊՀ երկրներ					
64. Բելառուս	0,804	68,7	7,918	0,956	0,730
67. Ռուսաստան	0,802	65	10,845	0,956	0,782
Արևելյան Եվրոպա և մերձբալթյան երկրներ					
32. Չեխիա	0,891	75,9	20,538	0,936	0,889
36. Հունգարիա	0,874	72,9	17,887	0,958	0,866
43. Լիտվա	0,862	72,5	14,494	0,965	0,831
44. Էստոնիա	0,860	71,2	15,478	0,968	0,842
53. Բուլղարիա	0,824	72,7	9,032	0,926	0,752
ՄԶԻ միջին միավոր					
ԱՊՀ երկրներ					
73, Ղազախստան	0,794	65,9	7,857	0,973	0,728
76. Ուկրաինա	0,788	67,7	6,848	0,948	0,705
83. ՀՀ	0,775	71,7	4,945	0,896	0,651
96. Վրաստան	0,754	70,7	3,365	0,914	0,587
98. Ադրբեջան	0,746	67,1	5,016	0,882	0,653
109. Թուրքմենստան	0,713	62,6	3,838	0,903	0,609
111. Մոլդովա	0,708	68,4	2,100	0,892	0,508
113. Ուզբեկստան	0,702	66,8	2,063	0,906	0,505
116. Ղրղզստան	0,696	65,6	1,927	0,917	0,494
122. Տաջիկստան	0,673	66,3	1,356	0,896	0,435
Այլ երկրներ					
84. Թուրքիա	0,775	71,4	8,407	0,812	0,740
94. Իրան	0,759	70,2	7,968	0,792	0,731

Մարդկային զարգացման վերջին՝ 2009թ. զեկույցում, որը հիմնվում է 2007թ. տվյալների վրա, տեղ են գտել որոշակի մեթոդաբանական փոփոխություններ. ի տարբերություն նախորդ հաշվետվության, այստեղ պետությունները դասակարգված են ոչ թե եռաստիճան, այլ քառաստիճան զարգացման հիման վրա: Արդյունքում՝ փոփոխությունների են ենթարկվել նաև պետությունների վարկանիշավորման ինչպես միավորային, այնպես էլ դիրքային սանդղակները՝ ըստ հիմնական որակական աստիճանակարգի: Ստորև ներկայացնում ենք զեկույցում տեղ գտած մեթոդաբանական հիմնական փոփոխությունները՝

1. մարդկային զարգացման բարձրագույն սանդղակ (0,971-0,902 միավոր կամ 1-38 դիրք)
2. բարձր սանդղակ (0,895-0,803 միավոր կամ 39-83)
3. միջին սանդղակ (0,798-0,511 միավոր կամ 84-158 դիրք)
4. ցածր սանդղակ (0,499-0,340 միավոր կամ 159-182 դիրք):

2009թ. զեկույցի վիճակագրության համաձայն, ԱՊՀ երկրներից բարձր աստիճանավորման մեջ ընդգրկվել է միայն երեք պետություն՝ Բելառուսը (որի վարկանիշը կրկին լավագույնն է նշված երկրների ցուցակում), Ռուսաստանը և Ղազախստանը: Այս աստիճանակարգում են նաև Արևելյան Եվրոպայի ու մերձբալթյան երկրների հիմնական մասը, ինչպես նաև հարևան Թուրքիան՝ 79-րդ դիրք (*Աղյուսակ 2*): Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ԱՊՀ մյուս բոլոր երկրներն ընդգրկվել են միջին աստիճանակարգում, որը գլխավորում է ՀՀ-ն (84-րդ դիրք)՝ ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը: ՀՀ-ն նախորդ զեկույցի համեմատ առաջընթաց է

արձանագրել և գերազանցել նաև Ուկրաինային, որին զգալի տարբերությամբ զիջում էր 2007-2008թթ. հաշվետվությունում: ԱՊՀ երկրներից ՀՀ-ին հաջորդում են Ուկրաինան, որը մեկ միավորով է զիջել դիրքը ՀՀ-ի նկատմամբ, Ադրբեջանը (86-րդ դիրք) և Վրաստանը (89-րդ դիրք):

Եթե համեմատենք ՀՀ վարկանիշավորման ենթացուցիչների նախորդ և վերջին զեկույցները, ապա կնկատենք, որ նախորդ հաշվետվության համեմատ ՀՀ-ն բարելավել է բոլոր ցուցանիշները: Այսպես, եթե Մարդկային զարգացման ինդեքսը 2007-2008թթ. կազմում էր 0,775 միավոր, ապա 2009թ.՝ 0,798, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվարկով $4,945-ի դիմաց արդեն $5,693 է, բարձր է նաև կրթության միավորը՝ 0,896-ի փոխարեն 0,909 միավոր: ՀՀ-ում բնակչության կենսամակարդակի բարձրացման մասին է վկայում նաև կյանքի միջին տևողության ցուցանիշը, որը եթե 2007-2008թթ. զեկույցում կազմում էր 71,7 տարի, ապա 2009թ. զեկույցում՝ արդեն 73,6 տարի, ինչն իրապես բավական զգալի առաջընթաց պետք է համարել:

Աղյուսակ 2

«Մարդկային զարգացման ինդեքսը 2009թ.». ՀՀ և այլ երկրներ (զեկույցում ներառված է 182 երկիր)

Երկիրը, դիրքը	ՄԶԻ ամփոփ միավոր (2007թ.)	Կյանքի միջին տևողություն (2007թ.)	ՀՆԱ մեկ շնչի համար (ԱՄՆ $-գնողունակության հավասարություն) (2007թ.)	Կրթության ինդեքս (2007թ.)	ՀՆԱ ինդեքս (2007թ.)
ՄԶԻ բարձրագույն միավոր					
Արևելյան Եվրոպա					
36. Չեխիա	0,903	76,4	24,144	0,938	0,916
ՄԶԻ բարձր միավոր					
ԱՊՀ երկրներ					
68. Բելառուս	0,826	69	10,841	0,961	0,782
71. Ռուսաստան	0,817	66,2	14,690	0,933	0,833
82. Ղազախստան	0,804	64,9	10,863	0,965	0,782
Արևելյան Եվրոպա և մերձբալթյան երկրներ					
40. Էստոնիա	0,883	72,9	20,361	0,964	0,887
43. Հունգարիա	0,879	73,3	18,755	0,960	0,874
46. Լիտվա	0,870	71,8	17,575	0,968	0,863
61. Բուլղարիա	0,840	73,1	11,222	0,930	0,788
Այլ երկրներ					
79. Թուրքիա	0,806	71,7	12,955	0,828	0,812
ՄԶԻ միջին միավոր					
ԱՊՀ երկրներ					
84. ՀՀ	0,798	73,6	5,693	0,909	0,675
85. Ուկրաինա	0,796	68,2	6,914	0,960	0,707
86. Ադրբեջան	0,787	70	7,851	0,881	0,728
89. Վրաստան	0,778	71,6	4,662	0,916	0,641
109. Թուրքմենստան	0,739	64,6	4,953	0,906	0,651
117. Մոլդովա	0,720	68,3	2,551	0,899	0,541
119. Ուզբեկստան	0,710	67,6	2,425	0,888	0,532
120. Ղրղզստան	0,710	67,6	2,006	0,918	0,500
127. Տաջիկստան	0,688	66,4	1,753	0,896	0,478
Այլ երկրներ					
88. Իրան	0,782	71,2	10,955	0,793	0,784

«Ժողովրդավարության ինդեքսը» 2007-2008թթ. զեկույցները The Economist Group

«Էքոնոմիստ գրուփ» *(«The Economist Group»)* կազմակերպությունն իրականացնում է հիմնարար հետազոտություններ և վերլուծություններ միջազգային գործարարության և համաշխարհային քաղաքական, տնտեսական ու այլ ոլորտներում: Կազմակերպությունը խնդիր է դրել աշխարհում տարածել ու ամրապնդել տնտեսական և քաղաքական ազատությունը: Կազմակերպությունն ունի շուրջ 80 գրասենյակ աշխարհի 21 երկրում: Միջազգային այս կազմակերպության գործունեությունն անկախ է, ներառում է ընդհանուր առմամբ շուրջ 1.000 աշխատակից:

«The Economist Group»-ինն է հայտնի *«The Economist»* շաբաթաթերթը, որն առաջին անգամ տպագրվել է 1853թ. Լոնդոնում: Կազմակերպության շրջանակներում է իր գործունեությունը ծավալում նաև *«The Economist Intelligence Unit»* միությունը, որը լուրջ վերլուծություններ է իրականացնում տվյալ երկրի արդյունաբերության, կառավարման և այլ հիմնախնդիրների վերաբերյալ: Միությունը ստեղծվել է 1946թ.՝ որպես *«The Economist»* շաբաթաթերթին սպասարկող բաժին: Ներկայում միությունը առաջատար հետազոտական և խորհրդատվական կենտրոն է, որի 40 գրասենյակները գործում են տարբեր երկրներում:

Միությունը կատարում է նաև կանխատեսումներ և վիճակագրական հիմնարար վերլուծություններ մասնավոր ընկերությունների համար: Միությունն ունի 500 վերլուծաբան, որոնք իրականացնում են քաղաքական, տնտեսական և գործարարության ոլորտին վերաբերող վերլուծություններ ու կանխատեսումներ:

Մեթոդաբանական հարցեր

Ստորև ներկայացվում են *«The Economist Intelligence Unit»*-ի վերլուծաբանների երկու՝ 2007-2008թթ. տարեկան հաշվետվությունները աշխարհում ժողովրդավարության ինդեքսի վերլուծության վերաբերյալ: Առանձնացված երկրների վարկանիշավորումը հիմնվում է 5 ենթացուցիչների միջին արդյունքների վրա, որոնք են՝

1. ընտրական գործընթաց
2. կառավարության գործունեություն
3. քաղաքական մասնակցություն
4. քաղաքական մշակույթ
5. քաղաքացիական ազատություն:

Զեկույցներում ներառված պետությունները, ըստ իրենց ժողովրդավարության աստիճանակարգի, դասակարգվում են 4 հիմնական խմբերում: Դրանք են՝ լիակատար ժողովրդավար երկրները, թերի ժողովրդավար երկրները, հիբրիդային վարչակարգերը և ավտորիտար վարչակարգերը: 2007թ. զեկույցի համաձայն, լիակատար ժողովրդավար պետություններն ընդգրկված են 1-28, թերի ժողովրդավարները՝ 29-82, հիբրիդային վարչակարգերը՝ 83-112, իսկ ավտորիտար վարչակարգերը՝ 113-167 դիրքերում: Մեթոդաբանական կարևոր մեկ նկատառում ևս. որքան բարձր են տվյալ պետության վարկանիշավորման ենթացուցիչների միավորները (տատանվում են 0-10 միավորների սահմանում), այնքան ժողովրդավար է համարվում երկիրը:

«Ժողովրդավարության ինդեքսը» 2007-2008թթ. զեկույցները

Ինչպես պատկերված է *Աղյուսակ 1-ում,* կազմակերպության 2007թ. վարկանիշային զեկույցում ԱՊՀ երկրներից երկրորդ՝ թերի ժողովրդավար խմբում ընդգրկվել են միայն Ուկրաինան և Մոլդովան, որոնք 167 երկրների մեջ զբաղեցրել են համապատասխանաբար 52 և 62-րդ դիրքերը: Ի դեպ, այս խմբում է Արևելյան Եվրոպայի պետությունների մեծ մասը, ինչպես նաև մերձբալթյան հանրապետությունները: Ինչ վերաբերում է ԱՊՀ անդամ մյուս հանրապետություններին, ապա դրանց մի մասը ներառվել է ժողովրդավարության աստիճանավորման երրորդ՝ հիբրիդային վարչակարգերի խմբում, մնացած մասը՝ ավտորիտար վարչակարգեր ունեցող երկրների խմբում: Հիբրիդային վարչակարգեր ունեցող ԱՊՀ երկրներից Ռուսաստանը 102-րդ դիրքում է, Վրաստանը՝ 104, ՀՀ-ն՝ 110, Ղրղզստանը՝ 111: Հիբրիդային վարչակարգ ունեցող երկիր է համարվում նաև Թուրքիան, որը զբաղեցնում է 88-րդ դիրքը: Ժողովրդավարության վարկանիշավորման աստիճանակարգում ամենացածր խմբում են միջինասիական 4 հանրապետությունները, Բելառուսն ու Ադրբեջանը (129-րդ դիրք):

Փաստորեն, ՀՀ-ն վարկանիշով ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը և հարավկովկասյան հանրապետություններից զիջում է միայն Վրաստանին: ՀՀ ժողովրդավարության վարկանիշավորման ենթացուցիչներից առավելագույն միավորը գրանցվել է քաղաքացիական ազատության ոլորտում՝ 6,18 միավոր, որին անմիջապես հաջորդում է ընտրական գործընթացների ենթացուցիչը՝ 4,33 միավոր: ՀՀ վարկանիշի ցածրագույն ենթացուցիչներն արձանագրվել են քաղաքական մշակույթի և կառավարության գործունեության ոլորտներում:

Աղյուսակ 1

Ժողովրդավարության ինդեքսը ՀՀ-ում և այլ երկրներում, 2007թ.[1]

Երկիր	Դիրք	Ամփոփիչ ցուցանիշ	Ընտրական գործընթաց/պլյուրալիզմ	Կառավարության գործունեություն	Քաղաքական մասնակցություն	Քաղաքական մշակույթ	Քաղաքացիական ազատություն
Լիակատար ժողովրդավար							
Արևելյան Եվրոպա							
Չեխիա	18	8,17	9,58	6,79	7,22	8,13	9,12
Հունաստան	22	8,13	9,58	7,50	6,67	7,50	9,41
Թերի ժողովրդավար							
ԱՊՀ երկրներ							
Ուկրաինա	52	6.94	9.58	5.71	5.56	5.63	8.24
Մոլդովա	62	6,50	9,17	4,29	6,11	5	7,94
Արևելյան Եվրոպա և մերձբալթյան երկրներ							
Էստոնիա	33	7,74	9,58	7,50	5	7,50	9,12
Հունգարիա	38	7,53	9,58	6,79	5	6,88	9,41
Լիտվա	39	7,43	9,58	6,43	6,67	5,63	8,82
Բուլղարիա	49	7,10	9,58	5,71	6,67	5	8,53
Ռումինիա	50	7,06	9,58	6,07	6,11	5	8,53
Հիբրիդային վարչակարգեր							
ԱՊՀ երկրներ							
Ռուսաստան	102	5.02	7.00	3.21	5.56	3.75	5.59
Վրաստան	104	4.90	7.92	1.79	3.33	5.00	6.47
ՀՀ	110	4.15	4.33	3.21	3.89	3.13	6.18
Ղրղզստան	111	4,08	5,75	1,86	2,78	5	5
Այլ երկրներ							
Թուրքիա	88	5.70	7.92	6.79	4.44	3.75	5.59
Ավտորիտար վարչակարգեր							
ԱՊՀ երկրներ							
Ղազախստան	120	3,62	2,67	2,14	3,33	4,38	5,59
Բելառուս	128	3.34	2.58	2.86	3.33	4.38	3.53
Ադրբեջան	129	3.31	3.08	0.79	3.33	3.75	5.59
Տաջիկստան	149	2,45	1,83	0,79	2,22	6,25	1,18
Ուզբեկստան	160	1,85	0,08	0,79	2,78	5	0,59
Թուրքմենստան	162	1,83	0	0,79	2,78	5	0,59
Այլ երկրներ							
Իրան	139	2.93	0.08	3.57	3.89	5.63	1.47

[1] 2007թ. զեկույցը հիմնվում է 2006թ. տվյալների վրա:

Կազմակերպության ժողովրդավարության 2008թ. վարկանիշային զեկույցում, որը վերաբերում է 2007թ. տվյալներին, ԱՊՀ երկրների վարկանիշավորման մեջ որակական փոփոխություններ չեն արձանագրվել: Կրկին թերի ժողովրդավար խմբում են Ուկրաինան և Մոլդովան, հիբրիդային վարչակարգեր ունեցող երկրներ են Վրաստանը, Ռուսաստանը, ՀՀ-ն ու Ղրղզստանը, ավտորիտար խմբում ներառված են ԱՊՀ մյուս անդամ պետությունները: 2007թ. համեմատ վերջին զեկույցում ՀՀ վարկանիշը դիրքային հետընթաց է արձանագրել՝ 110-րդ դիրքից անցնելով 113-րդին (4,15 միավորի փոխարեն 4,09 միավոր): Ընդ որում, 2008թ. համեմատ մեր երկրի վարկանիշային ցուցանիշի հետընթացը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ազատության ենթացուցչով, որը 6,18 միավորից իջել է 5,88 միավորի, մնացյալ բոլոր ենթացուցիչները նույնությամբ պահպանվել են: Ինչ վերաբերում է հարավկովկասյան մյուս երկու հանրապետությունների վարկանիշների զարգացման դինամիկային, ապա Ադրբեջանի պարագայում նույնպես հետընթաց է գրանցվել (129-րդ դիրքի փոխարեն 135-րդ), իսկ Վրաստանը պահպանել է նախորդ՝ 104-րդ դիրքը, թեև վերջինիս 2008թ. միավորը կամ ցուցիչը զիջում է 2007թ. արձանագրված արդյունքին (*Աղյուսակ 2*):

Աղյուսակ 2

Ժողովրդավարության ինդեքսը. ՀՀ այլ երկրների շարքում, 2008թ. (զեկույցում ներառված է 167 երկիր)[1]

Երկիր	Դիրք	Ամփոփիչ ցուցանիշ	Ընտրական գործընթաց/պլյուրալիզմ	Կառավարության գործունեություն	Քաղաքական մասնակցություն	Քաղաքական մշակույթ	Քաղաքացիական ազատություն
Լիակատար ժողովրդավար							
Արևելյան Եվրոպա							
Չեխիա	19	8,19	9,58	7,14	6,67	8,13	9,41
Հունաստան	22	8,13	9,58	7,50	6,67	7,50	9,41
Թերի ժողովրդավար							
ԱՊՀ երկրներ							
Ուկրաինա	53	6,94	9,58	5,36	5,56	6,25	7,94
Մոլդովա	62	6,50	9,17	4,29	6,11	5	7,94
Արևելյան Եվրոպա և Մերձբալթյան երկրներ							
Էստոնիա	37	7,68	9,58	7,50	5	7,50	8,82
Հունգարիա	40	7,44	9,58	6,07	5,56	6,88	9,12
Լիտվա	42	7,36	9,58	5,71	6,11	6,25	9,12
Ռումինիա	50	7,06	9,58	6,07	6,11	5	8,53
Բուլղարիա	52	7,02	9,17	5,36	6,11	5,63	8,82
Հիբրիդային վարչակարգեր							
ԱՊՀ երկրներ							
Վրաստան	104	4,62	7	0,79	4,44	4,38	6,47
Ռուսաստան	107	4,48	5,25	2,86	5,56	3,75	5
ՀՀ	113	4,09	4,33	3,21	3,89	3,13	5,88
Ղրղզստան	114	4,05	4,83	1,86	3,89	4,38	5,29
Այլ երկրներ							
Թուրքիա	87	5,69	7,92	6,07	4,44	5	5
Ավտորիտար վարչակարգեր							
ԱՊՀ երկրներ							
Ղազախստան	127	3,45	2,67	2,14	2,78	4,38	5,29
Բելառուս	132	3,34	2,58	2,86	3,33	4,38	3,53
Ադրբեջան	135	3,19	3,08	0,79	3,33	3,75	5
Տաջիկստան	150	2,45	1,83	0,79	2,22	6,25	1,18
Ուզբեկստան	164	1,74	0,08	0,79	2,22	5	0,59
Թուրքմենստան	165	1,72	0	0,79	2,22	5	0,59
Այլ երկրներ							
Իրան	145	2,83	0,92	2,86	3,33	5	20,6

[1] 2008թ. վարկանիշային զեկույցում 1-30 դիրքերում ներառվում են լիակատար ժողովրդավար երկրները, 31-80 դիրքերում՝ թերի ժողովրդավար, 81-116 դիրքերում՝ հիբրիդային, իսկ 117-167 դիրքերում՝ ավտորիտար վարչակարգեր ունեցող պետությունները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

«Էներգետիկ կենսունակության անվտանգությունը անցումային տնտեսություններում» զեկույցը

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, որը հիմնադրվել է 1991թ., հիմնական գործունեությունն իրականացնում է Կենտրոնական Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիա ընկած տարածաշրջանի երկրներում՝ շուկայական տնտեսությունների զարգացման և ժողովրդավարական ինստիտուտների կայացման ոլորտներում: Բացի այդ, Եվրոպական բանկը ֆինանսներ է տրամադրում բանկային համակարգերի տարբեր ոլորտների, արդյունաբերության և գործարարության զարգացմանը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկն իր գործունեությունն իրականացնում է այդ երկրների կառավարությունների հետ համագործակցության միջոցով, ինչը կազմակերպությունը զգալիորեն կարևորում է՝ գործարար միջավայրի զարգացման ու կայացման գործում պետական քաղաքականության մշակման համատեքստից ելնելով:

Տարեկան հաշվետվություններից բացի, բանկը հրապարակում է զեկույցներ ակտուալ միջազգային կամ տարածաշրջանային, ինչպես նաև առանձին երկրների օրինակով տնտեսական/ժողովրդավարական հիմնահարցերի վերաբերյալ: Դրանցից կարելի է առանձնացնել անցումային երկրներում էներգետիկ անվտանգության հիմնահարցերի վերլուծությանը նվիրված ուսումնասիրությունը: Զեկույցը, որը վերնագրված է «Էներգետիկ կենսունակության անվտանգությունը անցումային տնտեսություններում» *(Securing sustainable energy*

in transition economies), պարունակում է այդ երկրների էներգետիկայի կենսունակության վարկանիշային վիճակագրություն՝ «Էներգետիկ կենսունակության ինդեքս» («Կայուն էներգետիկ ինդեքս» - *Energy sustainable index)*:

Ներկայացնենք զեկույցի ընդհանուր (տարածաշրջանային) և առանձին երկրներին վերաբերող վարկանիշային տեղեկատվության արդյունքները: Զեկույցում ընդգրկված է անցումային տնտեսություն ունեցող 29 երկիր՝ Կենտրոնա-Արևելյան Եվրոպայի և բալթյան երկրները (Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Լատվիա, Լիտվա և Էստոնիա), Հարավարևելյան Եվրոպայի 8 երկիր (Ալբանիա, Բոսնիա-Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Մոնտենեգրո, Ռումինիա և Սերբիա), ԱՊՀ 12 երկրները և Մոնղոլիան: Զեկույցում ընդգրկված են նաև Գերմանիան, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան և Իսպանիան:

Երկու խոսք «Կենսունակ կամ կայուն էներգետիկայի ինդեքսը» զեկույցում կիրառված մեթոդաբանական մոտեցումների վերաբերյալ: «Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը» կիրառում է մոնի-թորինգային նոր համակարգ կամ մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս հիշատակված երկրներում որոշում կայացնող մարմիններին չափորոշել երկրի ինչպես էներգետիկ սեկտորի կառավարման ներկա իրադրությունը, այնպես էլ ոլորտի բարելավման հեռանկարները:

Վարկանիշային ինդեքսի ձևավորման համար, որպես չափորոշիչ-ներ, ընտրվել են հետևյալ երեք սեկտորները. տվյալ երկրի էներգետիկայի արդյունավետության (ԷԱ)[1] համարժեքությունը միջազգային չափորոշիչներին, վերականգնվող էներգետիկ (ՎԷ)

[1] «Էներգետիկ արդյունավետություն» ասելով նկատի է առնվում էներգիայի սպառման կամ օգտագործման արդյունավետությունը:

աղբյուրների զարգացածությունը և կլիմայի փոփոխությանը (ԿՓ) հասցեագրված քաղաքականությունը: Կենսունակ էներգետիկ/կայուն ինդեքսը, որպես մոնիթորինգային նախագիծ, բնորոշում է վերոնշյալ երեք չափորոշիչներից յուրաքանչյուրում տվյալ պետության արձանագրած առաջընթացը:

Առանձին երկրների վարկանիշավորման մեթոդաբանական կամ չափորոշիչային կառուցվածքը հետևյալն է. «ինստիտուցիոնալ», «շուկայի խթանիչներ» և «արդյունքներ» կամ «հիմնական հետևություններ», որոնք ընդգրկված են վերը հիշատակված երեք ցուցիչներից (էներգետիկայի արդյունավետություն - ԷԱ, վերականգնվող էներգետիկա - ՎԷ և կլիմայի փոփոխություն – ԿՓ) յուրաքանչյուրում: Կենսունակ/կայուն էներգետիկ ինդեքսի չափորոշիչների բովանդակային-մեթոդաբանական ընդհանուր նկարագիրը տրված է *Աղյուսակ 1-ում:*

«Ինստիտուցիոնալ» չափորոշիչը ենթադրում է ոլորտում գործող օրենսդրության, ինստիտուտների կամ կառույցների առկայության, էներգետիկ ուղղությամբ տարվող պետական քաղաքականության, նախագծերի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի կազմում: Երկրորդ՝ «շուկայի խթանիչներ» չափորոշիչը սահմանում է երկրի էներգետիկ պոտենցիալին (էլեկտրաէներգիա), էներգետիկ կորուստներին, հստակեցված սակագներին ու ֆինանսավորման հարցերին վերաբերող ցուցանիշները: Վերջին՝ «արդյունքներ» բաժնում ներկայացվում են էներգետիկ ինտենսիվության կամ պոտենցիալի (օրինակ՝ էներգիայի սպառման վիճակագրություն) վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 1

Կենսունակ/կայուն էներգետիկ ինդեքսի չափորոշիչների բովանդակային-մեթոդաբանական նկարագիրը

Էներգետիկ արդյունավետություն (ԷԱ)		
Ինստիտուտներ	օրենքներ	առկայություն (ԷԱ ապահովող օրենսդրություն)
		տարածում (բազմակողմանի կամ բոլոր սեկտորներում, միայն առանձին սեկտոր
		արդյունքներ (նպատակներ, պատասխանատվություն, տուգանքներ, խթանիչներ)
	ինստիտուտներ	առկայություն (ԷԱ ինքնակա գործակալություն կամ ենթակառուցվածք)
		որակ (կադրային բազա)
		գործառույթ (խորհրդատվական (կառավարական, մասնավոր սեկտոր), քաղաքականություն իրականացնող, նախագծային-ֆինանսական)
	քաղաքականություն	առկայություն (ԷԱ ապահովող քաղաքականություն կամ դրա բացակայություն)
		տարածում (բազմակողմանի, առանձին սեկտոր կամ ոչ մի կերպ)
		նպատակները (ընդհանուր գերակայությունների սահմանում կամ թիրախավորում)
	նախագծեր	իրականացում (իրականացված տարեկան կարևոր նախագծերի քանակը)
Շուկայի խթանիչներ	պոտենցիալի գնահատում	էլեկտրաէներգիա (բնակարանային պոտենցիալի գնահատում)
	կորուստներ	էլեկտրաէներգիա (մատակարարման և բաշխման կորուստներ)
	սակագներ	մակարդակ (քանակական ասպեկտ)
	ֆինանսավորում	ֆինանսական միջոցներ, ներդրումներ (արդյունաբերական, բնակարանային կառույցներ)
Արդյունքներ	էներգետիկ ինտենսիվություն/պոտենցիալ	մակարդակ (էներգիայի սպառում՝ ըստ ՀՆԱ մասնաբաժնի)
Վերականգնվող էներգետիկա (ՎԷ)		
Ինստիտուտներ	օրենքներ	առկայություն
		արդյունքներ (նպատակներ, պատասխանատվություն, տուգանքներ, խթանիչներ)
	ինստիտուտներ	վերականգնվող էներգետիկ գործակալություն, ենթադեպարտամենտ
		գործառույթ (խորհրդատվական (կառավարական, մասնավոր սեկտոր), քաղաքականություն իրականացնող, նախագծային-ֆինանսական)
	քաղաքականություն	վերականգնվող էներգետիկայի ուղղությամբ քաղաքական գիծ
		նպատակների առաջադրում
	կանոնակարգում	քվոտաներ
	նախագծեր	ձեռնարկվող նախագծերի քանակը
Շուկայի խթանիչներ	ՎԷ սակագներ	
Արդյունքներ	պոտենցիալը՝ ըստ ոլորտի	էլեկտրաէներգիա (վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունում)
Կլիմայի փոփոխություն (ԿՓ)		
Ինստիտուտներ	միջազգային համաձայնագրեր	վավերացված, դիտորդի կարգավիճակ
	ինստիտուտներ	գործող կառույցների առկայություն
	քաղաքականություն	ազգային ռազմավարություն կամ ազգային ծրագրեր
Շուկայի մեխանիզմներ	նախագծեր	ըստ տեսակների
Արդյունքներ	արտանետումներ շրջակա միջավայրում	ածխածին

«Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը» վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունում վարկանիշավորման համար ընտրված թվային միավորները տատանվում են 0.0-1.0 սահմաններում, որտեղ 0.0 միավորը համարվում է կենսունակ կամ կայուն էներգետիկայի ցածրագույն ցուցանիշը (ինստիտուտների և շուկայական մեխանիզմների բացակայությունը՝ դրանց հավելյալ էներգետիկ արդյունավետության, վերականգնվող էներգետիկայի արտադրության և ածխածնի ինտենսիվության վատագույն արդյունքները)։ Վարկանիշավորման բարձրագույն միավորը 1.0-ն է, որը բնորոշում է ուժեղ կենսունակ/կայուն էներգետիկ ինստիտուտներն ու շուկայական մեխանիզմները։

Աղյուսակ 2-ում ներկայացված վիճակագրությունից կարելի է նկատել, որ կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսի ցուցանիշներով ՀՀ-ն գլխավորում է ԱՊՀ անդամ պետությունների ցուցակը՝ բավական բարձր ցուցանիշով՝ 0.44 միավոր (*տե՛ս նաև Գրաֆիկ 2 և 3*)։ Զեկույցում ներառված 29 երկրների շարքում (չհաշված եվրոպական 4 առանձնացված երկրները) ՀՀ-ն զբաղեցրել է 11-րդ հորիզոնականը և կենսունակ/կայուն էներգետիկ ինդեքսի արդյունքներով ընդհուպ մոտեցել Էստոնիային, Սլովակիային, Լատվիային ու Բուլղարիային։ ԱՊՀ անդամ երկրներից զատ, ՀՀ վարկանիշը գերազանցում է նաև հարավարևելաեվրոպական հետևյալ երկրներին՝ Խորվաթիային, Ալբանիային, Մակեդոնիային, Բոսնիա-Հերցեգովինային, Սերբիային, ինչպես նաև Մոնղոլիային։ ԱՊՀ երկրների շարքում ՀՀ-ին իրենց վարկանիշային ամփոփ ցուցանիշներով հաջորդում են Վրաստանը, Ուկրաինան, Ղրղզստանն ու Ռուսաստանը։ Բավական ցածր դիրքում են Թուրքմենստանը, Ղազախստանը, Ադրբեջանը։ Վերջինս զբաղեցնում է նախավերջին՝ 28-րդ դիրքը և գերազանցում է միայն Թուրքմենստանին։

Աղյուսակ 2

Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը (ԿԷԻ), 2008թ. մայիս

դիրքը	երկիրը	Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը, ամփոփ միավորները				Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը (ինստիտուցիոնալ և շուկայական խթանիչները)				Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը (արդյունքները)			
		ԿԷԻ	ԷԱ	ՎԷ	ԿՓ	ԿԷԻ	ԷԱ	ՎԷ	ԿՓ	ԿԷԻ	ԷԱ	ՎԷ	ԿՓ
1	Սլովենիա	0,61	0,72	0,65	0,47	0,67	0,71	0,72	0,58	0,50	0,75	0,50	0,25
2	Լիտվա	0,61	0,77	0,47	0,58	0,74	0,90	0,71	0,63	0,33	0,50	0,00	0,50
3	Ռումինիա	0,60	0,57	0,68	0,56	0,74	0,73	0,77	0,71	0,33	0,25	0,50	0,25
4	Չեխիա	0,58	0,63	0,65	0,47	0,75	0,69	0,97	0,58	0,25	0,50	0,00	0,25
5	Հունգարիա	0,58	0,74	0,37	0,64	0,66	0,73	0,55	0,71	0,42	0,75	0,00	0,50
6	Լեհաստան	0,57	0,69	0,52	0,50	0,73	0,79	0,79	0,63	0,25	0,50	0,00	0,25
7	Բուլղարիա	0,54	0,58	0,57	0,47	0,73	0,75	0,73	0,71	0,17	0,25	0,25	0,00
8	Լատվիա	0,53	0,61	0,36	0,64	0,51	0,66	0,16	0,71	0,58	0,50	0,75	0,50
9	Սլովակիա	0,51	0,54	0,44	0,56	0,60	0,56	0,53	0,71	0,33	0,50	0,25	0,25
10	Էստոնիա	0,46	0,50	0,41	0,47	0,61	0,50	0,61	0,71	0,17	0,50	0,00	0,00
11	ՀՀ	0,44	0,44	0,57	0,31	0,53	0,53	0,60	0,46	0,25	0,25	0,50	0,00
12	Խորվաթիա	0,43	0,58	0,47	0,25	0,40	0,49	0,46	0,25	0,50	0,75	0,50	0,25
13	Ալբանիա	0,43	0,59	0,42	0,28	0,27	0,52	0,13	0,17	0,75	0,75	1,00	0,50
14	Վրաստան	0,42	0,34	0,44	0,47	0,33	0,39	0,16	0,46	0,58	0,25	1,00	0,50
15	Մակեդոնիա	0,36	0,35	0,41	0,31	0,37	0,28	0,49	0,33	0,33	0,50	0,25	0,25
16	Ուկրաինա	0,32	0,35	0,42	0,19	0,48	0,52	0,63	0,29	0,00	0,00	0,00	0,00
17	Բոսնիա-Հերցեգովինա	0,27	0,26	0,36	0,19	0,20	0,26	0,17	0,17	0,42	0,25	0,75	0,25
18	Ղրղզստան	0,26	0,12	0,38	0,28	0,13	0,17	0,06	0,17	0,50	0,00	1,00	0,50
19	Ռուսաստան	0,25	0,33	0,23	0,19	0,33	0,49	0,21	0,29	0,08	0,00	0,25	0,00
20	Մոլդովա	0,24	0,39	0,13	0,19	0,35	0,58	0,19	0,29	0,00	0,00	0,00	0,00
21	Սերբիա	0,22	0,42	0,19	0,06	0,33	0,64	0,29	0,08	0,00	0,00	0,00	0,00
22	Մոնղոլիա	0,21	0,13	0,31	0,19	0,32	0,20	0,47	0,29	0,00	0,00	0,00	0,00
23	Ուզբեկստան	0,21	0,19	0,23	0,22	0,28	0,28	0,21	0,33	0,08	0,00	0,25	0,00
24	Բելառուս	0,21	0,37	0,15	0,11	0,32	0,56	0,22	0,17	0,00	0,00	0,00	0,00
25	Տաջիկստան	0,16	0,06	0,35	0,06	0,07	0,08	0,03	0,08	0,33	0,00	1,00	0,00
26	Ղազախստան	0,15	0,13	0,13	0,19	0,18	0,19	0,06	0,29	0,08	0,00	0,25	0,00
27	Մոնտենեգրո	0,11	0,15	0,19	0,00	0,17	0,23	0,29	0,00	0,00	0,00	0,00	0,00
28	Ադրբեջան	0,11	0,06	0,17	0,11	0,12	0,08	0,13	0,17	0,08	0,00	0,25	0,00
29	Թուրքմենստան	0,05	0,05	0,00	0,11	0,08	0,07	0,00	0,17	0,00	0,00	0,00	0,00
1	Գերմանիա	0,78	1,00	0,67	0,67	0,78	1,00	0,84	0,75	0,67	1,00	0,50	0,50
2	Իսպանիա	0,75	0,89	0,70	0,67	0,75	0,83	0,67	0,75	0,75	1,00	0,75	0,50
3	Մեծ Բրիտանիա	0,74	0,95	0,59	0,67	0,86	0,93	0,89	0,75	0,50	1,00	0,00	0,50
4	Նիդերլանդներ	0,72	0,92	0,65	0,58	0,72	0,88	0,84	0,75	0,50	1,00	0,25	0,25

Աղյուսակ 2-ում ներկայացվում են նաև ենթացուցիչների արդյունքները, որոնց միջին հաշվարկի արդյունքում ստացվում է վերջնական վարկանիշային գնահատականը: Նպատակահարմար ենք համարում անդրադառնալ նաև այդ միավորների համեմատական վերլուծությանը: Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 2-ում,* «Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսի» ամփոփ միավորների շարքում ՀՀ վարկանիշային երեք ցուցիչներից համեմատաբար բարձր է «վերականգնվող էներգետիկայի» (ՎԷ) ցուցիչը՝ 0,57 միավոր. ՀՀ ՎԷ ցուցիչը, Գերմանիայից, Նիդեռլանդներից, Իսպանիայից ու Մեծ Բրիտանիայից բացի, գերազանցում է աղյուսակում ընդգրկված մյուս բոլոր երկրներին (բացի Բուլղարիայից, որի համապատասխան ցուցիչը նույնպես 0,57 միավոր է): Ինչ վերաբերում է ՀՀ մյուս երկու՝ ԷԱ (0,44) և ԿՓ (0,31) ցուցիչներին, ապա դրանք, որպես կանոն, զիջում են ՀՀ-ին նախորդած 10 երկրների համապատասխան ցուցիչներին: Նկատենք նաև, որ ՀՀ-ն էներգիայի սպառման արդյունավետության (ԷԱ) ցուցչով գերազանցում է ԱՊՀ անդամ երկրներին, իսկ ԿՓ ցուցչի դեպքում՝ ԱՊՀ երկրներից զիջում է միայն Վրաստանին (0,47):

Գրաֆիկ 1. Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը՝ ըստ ԷԱ, ՎԷ և ԿՓ-ի



Ինչպես վերը նշեցինք, *Գրաֆիկ 1 և 2-ում* ներկայացված է ՀՀ դիրքը Կայուն էներգետիկայի ինդեքսում ընդգրկված երկրների ու ԱՊՀ անդամ պետությունների շարքում: Վիճակագրության գրաֆիկական պատկերումը թույլ է տալիս տեսողական առումով ավելի հստակ պատկերացնել երկրների և, առաջին հերթին՝ ՀՀ ցուցանիշների վիճակագրական համեմատությունը:

Գրաֆիկ 2. Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը (ԿԷԻ), 2008թ. մայիս, ՀՀ դիրքն այլ երկրների շարքում



Գրաֆիկ 3. Կենսունակ/կայուն էներգետիկայի ինդեքսը (ԿԷԻ), ԱՊՀ երկրներ



Այսպիսով, ուսումնասիրության հետազոտական արդյունքները ցույց են տալիս, որ ԱՊՀ երկրների շարքում Հայաստանի Հանրապետությունը, որպես կանոն, բավական բարձր և առաջատար վարկանիշային արդյունքներ է արձանագրել։ ՀՀ վարկանիշային ցուցանիշներն ընդհանուր առմամբ համադրելի են Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև Մերձբալթյան երկրների արդյունքների հետ և աննշան տարբերությամբ են զիջում վերջիններին, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ գերազանցում են այդ պետությունների վարկանիշները։ ՀՀ միջազգային վարկանիշային ցուցանիշներն առաջատար, իսկ որոշ դեպքերում էլ՝ լավագույն արդյունքներն են ունեցել նաև հետազոտությունների տարեկան զարգացման դինամիկայի համատեքստում՝ հիմնականում պահպանելով նախորդ ցուցանիշներն ու որոշ դեպքերում բարելավելով դրանք։

Բովանդակություն

Առաջաբան.....3

Հայաստանի Հանրապետության միջազգային վարկանիշը.....4

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2000-2009թթ.
վարկանիշային վերլուծություն
The Heritage Foundation, The Wall Street Journal.
“Index of Economic Freedom”.....19

«Գործարարության» վարկանիշային նախագիծը 2007-2010
World Bank Group, International Finance Corporation.....32

«Կոռուպցիայի ինդեքսը 2000-2009թթ.» 46

Բերթելսմանի հիմնադրամ.
«Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը» 2008թ. 57

Համաշխարհային տնտեսական ֆորում.
«Համաշխարհային առևտրի խթանում 2008-2009թթ.» զեկույցները.....69

Համաշխարհային տնտեսական ֆորում.
«Գլոբալ մրցունակության վարկանիշը 2007-2009թթ.» զեկույցը.....76

«Ձախողված երկրների ինդեքսը» 2005-2009թթ.
Foreign Policy Magazine & The Fund for Peace.....84

Բրուքինգի ինստիտուտ. զարգացող աշխարհում
պետության թուլության ինդեքսը-2008թ.
Index of State weakness in The Developing World-2008.....100

«Ֆրիդըմ Հաուզ» (Freedom House).
«Ազատության վարկանիշն աշխարհում» 2007-2009թթ. 111

«Ֆրիդըմ Հաուզ». «Անցումային պետություններ»
վարկանիշային հետազոտություն 2007-2009թթ. 125

ՄԱԿ Զարգացման ծրագիր.
Մարդկային զարգացման ինդեքսը 2008-2009թթ. 132

«Ժողովրդավարության ինդեքսը» 2007-2008թթ. զեկույցները
The Economist Group.....139

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
«Էներգետիկ կենսունակության անվտանգությունը անցումային
տնտեսություններում» զեկույցը.....145

Կարեն Վերանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երևան - 2010

Գլխավոր խմբագիր
Սևակ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ
Ձևավորող
Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, Ծավալը 9.75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: